Ո՞վ կասի լեռան այս բարձր ծերին ակորժակ չունի:

Դ Ա Վ Ի Թ

Իսկ զառն այս պարարտ ինձ հերիք կանի:

Միծաղ

Դ. Պ Ա Տ Ա Ն Ի

Թող Գուսանն ասի:

Դ Ո Ւ Ս Ա Ն

Դավիթն հզոր՝ շանթող մի հուր,
Ձեռին կուղե հատու մի թուր...

Կ Ո Ւ Յ Բ Ը

Ձեռին կուղե կայծակ մի թուր...

Բ Ո Ւ Ո Բ Ը

Ձեռին կուղե կայծակ մի թուր...

Գ Ս Վ Ի Թ

Հերիք ինձ դովես, Գուսան պատվարժան:
Զբվարճանք յերգիր բոլորիս համար:

Գ. Պ Ս Տ Ա Ն Ի

Դե լալ,— յերգիր, ինչ Դավիթն ե ուղում:

Գ Ո Ւ Ս Ա Ն

Յերգում ե

Նեա ու աղեղ իր ձեռին,
Քեզ դարձրել ե իր զերին:
Նա խաթունն ե զեղանի,
Համբուրողին յերանի...

Ծիծաղ

Բ. Պ Ս Տ Ա Ն Ի

Մեր Դավիթն իրոք համբուրեց կույսին:

Գ. Պ Ս Տ Ա Ն Ի

Զուգեց համբուրել:

Գ Ս Վ Ի Թ

Թողեք խաթունին:

Ա. Պ Ս Տ Ա Ն Ի

Թողնենք խաթունին:

Գ. Պ Ս Տ Ա Ն Ի

Դե, մեկն ել յերգիր:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Յերգիր, լալ յերգիր:

Գ Ո Ւ Ս Ա Ն

Յերգում ե

Կուժը ուսին մի աղջիկ
Կըրճերն փունջը վառ վարդի,

Այտը՝ ծաղիկ—գեղեցիկ,
Տես, քո սիրտը չըխայթի:

Ծիծաղ

Գ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Շատ լավ է ասված:

Ա. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Թորոս իշխանը, Թորոս իշխանը:

Բ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Նա որորվում է:

Գ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Արդեն խլմած է:

Ա. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Վանահոր խուցում կեր ու խում ունեն:

Գ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Յեկ կանչենք մեզ մոտ:

Ա. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Լավ, կանչենք, կանչենք: Բայց, արդյոք, կզմ:

Կ Ո Ւ Յ Բ Ը

Մեր համեստ ճաշին կուզենա՞ նստել:

Գ Ա. Վ Ի Թ

Քեռի՛ Թորոս, մեզ մոտ համեցիր:

Բ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Թող քիչ եւ խլմի:

Գ. Պ Ա. Տ Ա. Ն Ի

Վոր լեզուն ցընծա:

Բերում են մրան

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Համեցիր, նըստիր:

Դ Ա Վ Ի Թ

Մեր զոհը որհնիր:

Թ Ո Ր Ո Ս

Աստված ընդունի ձեր զոհը, քաջեր:

Եստում է

Լամվ գինի ունեք:

Դ Ա Վ Ի Թ

Մեր կարմիր գինուց, թե ուզես՝ հանեմ:

Թ Ո Ր Ո Ս

Տեղը իմացար, անպիտան Դավիթ:

Դե, լըցրու տեսներք:

Լցնում են գիծից

Գ. Պ Ա Տ Ա Ն Ի

Մի յերգ իշխանին:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Հարմար խոսքերով մի յերգ ել հյուսիր:

Գ Ո Ի Ս Ա Ն

Յերգում է

Ջուր լըցրեց քո ձեռներին,

Աչքդ գիպավ ծըծերին:

Դու ալեհեր, նա պատիկ,—

Թե կարող ես գիմացիր:

Ընդհանուր ծիծաղ

Գ. Պ Ա Տ Ա Ն Ի

Տեղին եր, տեղին:

Բ. Պ Ա Տ Ա Ն Ի

Յեւ շատ եւ հարմար:

Թ Ո Ր Ո Ս

Յես դեռ դալար եմ, այդ ինձ չի տալած...

Ծիծաղ

Խըմում եմ դալար ձեր արեւ կյանքին:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Անուշներ, իշխան:

Դ Ա Վ Ի Թ

Դե հիմա պատմիր այն կըռլի մասին,
Վոր բյուր մարդու դեմ մենակ ես յեղել:

Թ Ո Ր Ո Ս

Մեռոն ե, մեռոն: Մի գավաթ եւ լից:

Դ Ա Վ Ի Թ

Լցնում ե

Ինչքան վոր ուզես, գինին կըրավե:
Պատմիր, վոր լըսենք:

Թ Ո Ր Ո Ս

Պատմում ե

Պատանի եյի:—Գընում եմ վորսի...

Խմում ե

Ի՜նչ անուշ գինի:

Գընում եմ, գընում, ու անտառ մըտնում,
Տասը-տասըհինգ վայրի զաղաններ զարկում, ըսպանում:
Նետերըս պարպած, կես մըթնաշաղին, դառնում դեպի տուն:
Վոչ ձեն եմ լըսում ե վոչ մի ծըպտուն...
Հանկարծ տեսնում եմ մի թըփի տակից,
Մի զույգ հուր աչքեր փայլին են տալիս...

Խմում ե

Ա՛խ, թե լիներ մի աղբյուր կարծիր,
Այսպիսի զինի հոսեր հավիտյան... Լցր՛ս գավաթը:

Լցնում եմ նորից

Տեսա վոր արջ ե... ահեղի մի արջ...
Դե, առանց նետի ինչպե՞ս ըսպանես:
Նա ինձ ե նայում, յես՝ ուղիղ իրեն...
Միտք եմ հըղանում՝ պառկել հենց այստեղ, ձևանալ մեռած,
Յեվ հենց վոր արջը մոտենա անձիս,
Հարմար առիթին բըռնեմ, վսլորեմ և՛ ժանիք, և՛ վիզ:
Յես միտք եմ անում, և իսկույն պառկում յերեսիս վրա:
Մի գավաթ և՛ս:

Խմում ե կրկին

Կ Ո Յ Յ Բ Ը

Փըչում ե, փըչում:

Դ Ս Ա Ի Թ

Հետս ինչ յեղալ...

Թ Ո Բ Ո Ս

Մեկ ել տեսնում եմ արջը մոտեցալ:
Արջը մոտեցալ, հոտոտեց վտաքս...

Դ Ս Ա Ի Թ

Իսկ ինչո՞ւ ընկար յերեսիդ վըրա:

Թ Ո Բ Ո Ս

Վոր մեռած կարծի...

Բ Ո Լ Ո Բ Ը

Ա՛...

Թ Ո Բ Ո Ս

Հետս հոտոտեց և՛ մեջք, և՛ գըլուխ,
Լիզեց ախանջս, շըրջեց ինձ մեջքի,
Հոտոտեց շունչըս, վոր պահել եյի,
Յեվ թըքեց բերնիս: Ձեն չհանցի:

Մի գավաթ նորից:

Խմում ե

Ձեն չհանեցի: Թողեց, հեռացավ: Յես վոտքի յեկա:

Ուր վոր նա զընաց, հետեից ընկա:

Մըտքիս զըրել եմ՝ անպատճառ բըռնել:

Գընաց-զընացի, զընաց-զընացի,

Յերկար ու յերկար ճամբա կըտրեցինք,

Յեկ մըտավ ոտար, հարեան յերկիր... Յես ել հետեից...

Այստեղ դեմ յեկան բյուրավոր զորքեր, և այսպես ասին,—

«Այս արջը մերն է, իրավունք չունիս այստեղ վորսալու»:

Ասին ու պահին նիզակները ցից...

Դեհ, գավաթը լից:

Խմում ե

Հենց այստեղ եր, վոր կըռիվ ըսկավեց...

Յես համառեցի— «Պետք ե վոր վորսամ»

Իսկ նըրանք հատու,—«Իրավունք չունիս»: Դե, վճնց զիմանաս...

Այս օվ ե գալիս մեծ շուքով այսպես:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Նիզակներ բռնած՝ սեպուհներ են քաջ:

Թ Ո Ր Ո Ս

Բըղեշխն է, ասես: Վանահայրը նրան սպասում եր վաղուց:

Դ Ո Ի Ս Ա Ն

Հենց նա յե, վոր կա:

Դ Ա Վ Ի Թ

Ձիով են գալիս Մարութա վանքը:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Վոչ մի ձի յերբեք չի կարող քայլել այս լանջով ի վեր:

Թ Ո Ր Ո Ս

Հուրը հաղորդիր իշխան Ոհանին և Վանահորը:

Մեկը վագում ե

Դ Ա Վ Ի Թ

Նա՛մ յե, նա՛մ,—իբրե՛ք:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Հըրճվում եք... Կարծես աստված ե գալիս:

Դ Ա Վ Ի Թ

Ինչո՞ւ յես այդպես զժգո՞հ ամենից:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Կասեմ քեզ հետո:

Թ Ո Ր Ո Ս

Բըդեշխը յեկավ:

Դ. Պ Ա Տ Ա Ն Ի

Իշխանաց իշխան Բըդեշխը՝ յեկավ:

Թ Ո Ր Ո Ս

Ճանապարհ տըվեք վանահայրն անցնի...

3

Ո Հ Ա Ն

Կեցցե՛ք Բըդեշխը:

Դ Ա Ն Ի Ս Ը

Յե՛վ քաջ սեպուհներ...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Վողջսն, ո՛վ Բըդեշխ, գալուստըդ բարի:

Բ Դ Յ Շ Խ

Աստված ոգնակա՛ն:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Աստված պահապա՛ն:

Բ Գ Ե Շ Խ

Ո՛ր, յեղբայր Ոհան, վողջույններ առատ:

Ո Հ Ա Ն

Գալուստըդ բարի, իշխանաց իշխան:

Բ Գ Ե Շ Խ

Յեւ քեզ, քան թորոս

Թ Ո Ր Ո Ս

Վողջույն, գահերեց, Բըզեշխ ազնվագարմ:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Սուրբ պատարագին ուշացած հասար:

Բ Գ Ե Շ Խ

Այո, ուշացա

Իր սուր հայացով մեկին ե փնտռում

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Իսկ ինչու չըկա գեղանի դուստրը՝ Գոհարն հըրեղեն:

Բ Գ Ե Շ Խ

Սե յե Դավիթը:

Ո Հ Ա Ն

Հենց այս պատանին՝ Մըհերի տըղան:

Մոտեցիր, Դավիթ, խոնարհ վողջույնիր:

Բ Գ Ե Շ Խ

Մոտեցիր, տըղաս: Ա՛ռ, ձեռքս սեղմիր, թող ույծդ փորձեմ:

Դ Ա Վ Ի Թ

Սեղմում ե ձեռք

Բ Գ Ե Շ Խ

Կամաց, պատանի, ձեռքըս ցավացրիր:

Ընդհանուր ծիծաղ

Անշափ նըման ե իր հոր՝ Մըհերին...

Վ. Ա. Ն. Ա. Հ. Ա. Յ. Բ

Ասեա թե լինի պատանի Մըհեր:

Բ. Պ. Ե. Շ. Խ

Մոռեցիր, զըրկիր, թող քեզ համբուրեմ: Որհնվիս, զաւանկըս:

Հախուռով ե նրան

Փ. Ո. Գ. Բ. Ի. Կ. Հ. Ն. Հ. Ղ. Ի. Լ.

Մի սեպուհի

Տես՝ ինչպէս աղնիւմ նա շարժվածք ունի:

Բ. Պ. Ե. Շ. Խ

Գընանք, վանահայր, վանքում աղոթենք:

Մայր աստվածածնա այս շքեղ տունին

Ուխտի յեմ յեկել Մարութա վանքին:

Վ. Ա. Ն. Ա. Հ. Ա. Յ. Բ

Գընանք, իշխաններ, վասն կենաց մեծ

Բըդեշխ իշխանի, աղոթենք կըրկին:

Գնում են

4

Ա. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի

Ինչպէս նա իսկույն ճանաչեց Դավթին:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Հարկավ ճանաչեց: Իմ հորն եմ նըման:

Գ. Ո. Ի. Ս. Ա. Ն.

Թողնենք իշխաններն աղոթեն վանքում,

Իսկ մենք մի շրջան կըլոր պար բըռնենք:

Բ. Պ Ա Տ Ա Ն Ի

Պարենք կըլոր պար:

Գ Ա Վ Ի Թ

Շըրջան կազմեցեր:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Քո ձեռքը տուր ինձ:

Պարում են յեկար

Կ Ո Ի Յ Բ Ը

Աղոթքից յեկան:

Ծ Ե Ր Ը

Թողեք յերգ ու պար:

Բ Գ Ե Շ Խ

Թողեք մեզ մենակ:

Բոլորը ցրվում են, մնում են միայն Բրդեթսն ու Ուանը յեկ Վանահայր:

5

Բ Գ Ե Շ Խ

Ուխտիս բուն նյութը աղջիկս ե, հայր սուրբ.
Գոհարն իմ հրեղեն, լույսը իմ աչքի:
Արդեն բոլորեց տասնեութ զարուն,
Տասնութն ել զարնան բույրի պես ահուշ:
Բայց լճն առել ե զուստըր, կամ աղջիկ.—
Վոչ ալ ինչ, թե վոչ՝ ուրիշի բաժին:
Հայտնի յե թե քեզ, նույնպես քեզ, Ոհան,—
Մըհերը ե յես ուխտ ունենք կապած,
Վար աղջիկ-աղբա պըտակենք իրար,
Յեկ իշխանական յերկու մեծ տոհմեր կապվենք հավիտյան:
Լքուել եմ արդեն, վոր Դավիթը ձեր
Վարսի յե զընում վորպես մի այր քաջ:

Վայել ըզրադմունք սեպուհի համար:
 Բայց և համարձակ նիդակ և ճոճում
 Բադու, Կողբադու զորքերի հանդես:
 Դուք արդ՝ լավ գիտեք, Վոր նըման վարմունք
 Թեպետ մի տըհաս պատանու կողմից,
 Կըրակ ու ալեր կարող և բերել
 Մըսրա Մելիքից մեր յերկրի գլխին:
 Արդ՝ ժամ և արդեն, Վոր հասուն աղջիկ
 Յեվ սեպուհ մի այր, պըսակենք իրար,
 Վորով Դավիթի զայրույթը կըրքոտ
 Կըզսպեմ վորպես հեռատես մի հայր:

Վ. Ա. Ն. Ա. Հ. Ա. Յ. Բ.

Որհնյալ և ժամը և որը բարի:

Բ. Գ. Ն. Շ. Խ.

Ի՞նչ կասես, Ոհան:

Ո. Հ. Ա. Ն.

Որհնանքըս կըտամ:

Բ. Գ. Ն. Շ. Խ.

Բացի ամենը, ինչ հիմա տալի,
 Լըսել եմ նաև՝ համառ Պատրիկի
 Աղջիկ Խաթունը գերել և Դավիթին:
 Վըտանգը հիմա պարզ և ձեզ համար:
 Խանդուտի հայրը անշուշտ կուղենա
 Իր հին բոբրոքված վրեժի համար
 Մի հաստատ, ամուր դուռ բանալ մեր դեմ,
 Մեր խաղաղ յերկրի հիմքերը խախտել
 Յեվ հզոր կայսեր իր ձեռքը մեկնել...
 Դավիթը արի, ինչպես Մըհերն եր իր սակավ մըտքով,
 Ամբախուռ, հուժկու մեծ բանալի յե
 Ասածըս զըռան կողպեքի համար...

Վ. Ա. Ն. Ա. Հ. Ա. Յ. Բ.

Հասկացա, իշխան:

Ո Հ Ա Ն

Հենց այսօր, այստեղ, վաճառի սուրբ բաղում
Խոստովել անհնձ, նըշանդրեք սարքենք:

Բ Գ Ե Շ Խ

Քո ձեռք, իշխան:

Սեղմում ե ձեռք

Կըրկնակի մի ուխտ:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Դավթին, վոր մոտենում ե

Իմ խոնարհ գավակ, ապա մոտեցիր:
Հենց այս առավոտ, ազոթքիս պահին,
Հուսածոր աստված մի փորախորհուրդ
Հայտնություն արեց քո մատաղ կյանքին:
Գընա ազոթի, քո հողին մաքրիր,
Վոր այս իշխանաց սուրբ վըրայությամբ ինձնից այն լըսես:

Դ Ա Վ Ի Թ

Համբուրում ե աջք

Որհնիր ինձ, հայր սուրբ:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Որհնյալ ես, գավակ:

Դավիթը գնում ե

Այժմ թույլ տըվեք մեր աղ ու հացով,
Մի կըտոր մըսով ե գավաթ զինով
Պատվեմ աղնվազարմ իշխան հյուրերիս:
Լըսիր, վանական, մեր ներքնահարկից
Այն թավ նըռնուռ տակառը բացիր,
Իշխան հյուրերիս այն զինով պատվիր:
Բայց տես, միաբանք վըրա չըդառնան: Գնա՛, կատարիր:
Մի տակառ ունեմ քո պատվին կնքած,
Անունըդ վըրան վոսկետառ հիշված:
Մեր այգեստանում, այնտեղ՝ զեռավին,

Զորի ըստորին անուշ շքերթունքին
 Գանձակի աղնիվ մի շարք նըռենի ծառեր են բուսած:
 Անուշ նըռեների զտարյուն ծորից
 Տասնևութ տարի սրանից առաջ զինի յեմ քաշել,
 Տակառը ծեփել և ավազությանդ անդրանիկ որին
 Տակառի վըրա անունըդ կերտել:
 Գինին, վըրքան հին,— արժան ե իր տեր նախկին սեպուհին...

Թ Ո Ր Ո Ս

Որհնյալ ե զինին:

Դ Ա Վ Ի Թ

Գալիս ե

Մի մեղք ունեյի, արդեն քավեցի...

Վ՝ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Ապրես, իմ վորդի...

6

Վ՝ Ա Ն Ա Կ Ա Ն

Հեղինակ

Ազեա ե շուրջըդ, սվ սուրբ Վանահայր:
 Բաղին, Կողբադին անհամար զորքով
 Մեր վանքն են խուժում, ավերման համար:

Դ Ա Վ Ի Թ

Նորից հայտնվեցին:

Բ Դ Ե Շ Խ

Առնելով քեզի տակ

Դու հանգիստ կեցիր:

Վ՝ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Ի՞նչ ասացիր, մարդ:

Վ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Ն.

Ահա լըսեցեք աղմուկը նըրանց:

Բ. Գ. Ե. Ծ. Խ.

Դեպի ձորը.

Սեպուհներ իմ քաջ, պատվով, հարգանքով
Մըսրա Մելիքի զորավարներին առաջնորդեցեք:

Վ. Ա. Ն. Ա. Հ. Ա. Ե. Բ.

Աստված, պահպանիր վանքը սրբազան...

Բ. Գ. Ե. Ծ. Խ.

Պանված են, արդյոք, զուրղը Մըհերի, և Թուր Կայծակին...

Գ. Ա. Վ. Ի. Թ.

Յեւ թուր Կայծակին...

Վ. Ա. Ն. Ա. Կ. Ա. Ն.

Ահա կատաղած այս կողմն են շարժվում.

Հավանում ե ամբոսը

Գ. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի.

Բաղին, Կողբաղին:

Ծ. Ե. Բ. Ը.

Ինչո՞ւ յեն յեկեկ:

Ռ. Ա. Մ. Ի. Կ.

Դավթին պիտ պատժեն:

Կ. Ռ. Ի. Ե. Բ. Ը.

Թողեք մի տեսներ:

Ռ. Հ. Ա. Ն.

Ճանապարհ բացեք և խոնարհվեցեք:

Բոլոր խոնարհ ծուցկի յեն իջնում, բացի Բդեւսից
յեւ ի Դավիթից: Իսկ Կույրը ծածուկ մի կողմ ե Բաւուհ

Բ Գ Ե Շ Խ

Դու ել խոնարհվիր, իմ խելոք արդա:

Դ Ա Վ Ի Թ

Ուզում ե փախչել

Ազատ թող, Բըդեշխ:

Բ Գ Ե Շ Խ

Իմ քովըս կեցիր:

Ո Հ Ա Ն

Խոնարհ վողջույններ Բաղուն, Կողբաղուն:

Կ Ո Զ Բ Ա Դ Ի

Ահա Դավիթը:

Բ Ա Դ Ի

Զինվորներին

Նիդակներն ամուր: Ո՞վ ե այս վանքի վանականն ավագ:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Յես եմ ավագը, ձեր խոնարհ ծառան:

Բ Ա Դ Ի

Սալիֆայական հըզոր ֆերմանով
Մարութա վանքը չեղյալ ե արդեն:
Ի տույժ Դավիթի խելառ վարմունքի,
Այս վանքի ինչքը—թե հող, թե այգի,
Թե տուն ու գոմեր, զինու պահեստներ,
Վոչխար ու այծեր, յեղներ, գոմեշներ,
Մետաքսե գորգեր, ազնիվ գործվածքներ,
Վոսկի և արծաթ խաչեր, բուրվառներ, ավար են արդեն:
Այլև Մըհերի գենք ու զրահները —
Դուրզը պողպատե և Թուր Կայծակին—հանիր ու դարսիր:

Դ Ա Վ Ի Թ

ձըստում ես, Բըղեշխ:

Բ Դ Ե Շ Խ

Հանդիստ, իմ վորդի:

Վանահարք

Հրաման արձակիր, վոր հանեն, հայր սուրբ,
Մինչ հյուրերն այստեղ զիշերս խաղաղ կեր ու խում կանեն,
Մըսէա Մելիքին յես այցի կերթամ և կդամ խելոյն:

Բ Ա Դ Ի

Մենք չենք զիշերի: Հանեք և դարտեք:

Ո Հ Ա Ն

Հրաման արձակիր:

Բ Դ Ե Շ Խ

Կատարիր, հայր սուրբ:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Համեցեք, նըստեք, Բաղի, Կողբաղի:

Բ Ա Դ Ի

Դընանք միասին:

Կ Ո Զ Բ Ա Դ Ի

Զինվորներին

Վահաններն ամուր:

Գնում են

8

Դ Ա Վ Ի Թ

Թող ձեռս, Բըղեշխ:

Բ Դ Ե Շ Խ

Դե խելոք կացիր և չհեռանաս:

Դավիթը գնում, կանգնում և հեռուն

Տեսա՞ր ի՞նչ բերեց մեր գըլխին տըղադ:

Ո Հ Ա Ն

Իզուր թողեցիր, վոր նա հեռանա:

Բ Դ Ե Շ Խ

Աչքըս վըրան ե,—կանգնել ե հանդարտ:

Կույրը յեվ Գուսանը մոտենում են Դավթին

Բ Դ Ե Շ Խ

Արի ձի հեծնենք և իսկույն մեկնենք Մեղիքի վտար:

Ո Հ Ա Ն

Գընանք, աղերսենք, վոր չանի նորից:

Կ Ո Ի Յ Բ Ը

Լըսեցէ՛ր—քո հոր գենքերը ասաց:

Բ Դ Ե Շ Խ

Իսկույն կարգադրեմ: Սեպուհ, մոտեցիր:

Խոսում ե մեկի հետ

Կ Ո Ի Յ Բ Ը

Հենց հիմա գընանք, խըլենք ու բերենք...

Գ Ո Ի Ս Ա Ն

Մըհերի գենքը ինչո՞ւ պիտ գիջենք...

Գ Ա Վ Ի Թ

Բոլորին հայտնեք, թող անցնեն աշնանդ:

Կ Ո Ւ Յ Բ Ը

Հենց այդպես կանեմ:

Գնում եմ

Բ Դ Ե Շ Խ

Պատրաստվիր, Ոհան:

Ո Հ Ա Ն

Գընանք, մեծ իշխան:

Դե, զընանք, Դավիթ:

Դ Ա Վ Ի Թ

Իսկույն, հորեղբայր: Գալիս եմ, զալիս:

Գնում ե պանես

Ո Հ Ա Ն

Անհանգիստ

Ո՞ւր վաղեց, Գուսան:

Դ Ո Ւ Ս Ա Ն

Զիմացա, իշխան:

Ո Հ Ա Ն

Դեպի դուս

Մի քիչ սպասիր, զահերեց Բըղեշխ:

Լսվում ե աղմուկ պանեսի կողմից

9

Կ Ո Ւ Յ Բ Ը

Ա՛յս կողմից հասեք...

Բ Ա Դ Ի

Վաղելով

Վա՛յ, վիզս կտորեց:

Ո Հ Ա Ն

Այդ քնն պատահեց:

Դ Ո Ւ Ս Ա Ն

Խըփիւր զորքերին...

Կ Ո Ջ Ռ Ա Դ Ր

Իմ վիզն եւ ջարդեց...

Ջ Ր Ն Վ Ո Ր Ն Ե Ր

Փախեք, աղատուէք:

Զորի հոսանքն փախչում է Դավթից

Ո Հ Ա Ն

Դավիթ, հէյ, Դավիթ, անպիտան տըղա...

Կ Ո Ւ Ե Ր Ը

Դավիթ, մի լըսիր, հալածիր նըրանց...

Դ Ա Վ Ի Թ

Մի սուր հոգեւով, ասես կատաղած մի վագր լինի

Զեմ թողնի՝ տանեք...

Ո Հ Ա Ն

Անուշի ձայնով վորոտաց ասես

Դավիթ, կայ, Դավիթ:

Դ Ա Վ Ի Թ

Գընացեք Մըսըր և ասեք իրեն,
Թող չըքվի իսպառ, ուր վոր կամենա...
Զէք, չէք, չար մարդիկ...

Բոլոր փախան

Վ Ա Ն Ա Հ Ա Ե Ր

Խաչը վեր բըռնած

Թող չըքվի չարը քո՝ մըտքից, Դավիթ...

Դ Ա Վ Ի Թ

Մի ակերարքում մեղմանում, ասես մետախ ե դառնում,
 ձրգում ե քուր խոսերի վրա,
 չոխում իր տեղում, խաշը համբուրում

Թողությունն շնորհիր, լուսահեղ հայր սուրբ...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Թողություն մընաց, վոր քեզ շնորհեմ:

Բ Գ Ե Շ Խ

Թողեք աղոթի:

Գ Ո Ի Ս Ա Ն

Լուսարյան միջից

Տեսածք թե ինչպես Բաղու, Կողբադու վրդենքը ջարդեց:

Մի քերեկ երբից

Կ Ո Ի Յ Բ Ը

Յեզ շատ լալ արեց: Դե, գովիր նըրան:

Գ Ո Ի Ս Ա Ն

Դավիթն ելալ զարկեց Բաղուն

Տըվալ քամուն զորքեր քառսուն...

Զորքեր քառսուն ու Կողբադուն

Տարալ լըցրեց Մըսրա առուն...

Բ Գ Ե Շ Խ

Այդ լինչ ես գովում, անիծյալ Գուսան:

Զըհամարձակվես կըրկենեկ ուրիշ տեղ:

Ո Հ Ա Ն

Հեռացեք մարգիկ: Յըրվեցեք իսկույն:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Թող ամեն մեկըդ աղոթքում հիշի Դավիթի մասին:

Արդ՝ զընաք բարով:

Մինչ Դավիթը մեղմ աղօթք է անում,
բոլոր հանդաճող բողբոսներն են զնում

Բ Դ Ե Շ Խ

Վանահոր ծածուկ

Շոյլը, փաղաքշիր և մեղմ խոսքերով հենց հիմա հայտնիր:

Ծածուկ Ոհաննիս

Այս Բնչ և լինում քո յերկրում, իշխան:

Ո Հ Ա Ն

Խեղճից հանել են իմ խոնարհ Դավթին:
Անեծք թող թափվի այդ Կույրի զըլխին:

Բ Դ Ե Շ Խ

Անեծքը կանանց զոհացում կանի:
Լեղվաթիւր զրանց: Պատժիր չարաչար...
Քո թուրն իշխանի ամուր չես բըռնած...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Դավթ իմ անուշ, հընազանդ վորդի,
Մեր որ ու արև, պարծանք մեր յերկրի,
Ո՛վ աստվածասեր և աստվածավախ, դու այլ քաջարի,—
Դիշերս յերազիս տեսա Մըհերին՝
Քո դյուցազնական առյուծ ծընողին...

Դ Ա Վ Ի Թ

Ողորմի հոգուն...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Առյուծ Մըհերը յերեսաց աչքիս—
Մորուքը նրա փառահեղ, ճերմակ,
Դեմքին մի ժըպիտ, հայացքը բարի—
Յեւ մեղմ ու հանդարտ ինձ հարցում արավ.—
«Հասնի և, արդյոք, Դավթին իմ մանուկ, պատանի որին»:

«Հասել ե, Մըհեր»,—պատասխան տրվի:
 Խընդաց, ծիծաղեց ե զիրկը առավ, ինձ պինդ համբուրեց:
 «Հենց վոր կորյունըս բազկի հարվածով թըրի պես կըտրի,
 Պըսակիր նըբան, թող հանգիստ ապրի»—ասաց նա հետո:
 «Հըրեղեն Գոհարն ե հարսնացուն նըրա—
 Դյուցազըն մի կույս, սեպուհի արժան,
 Վոր թե ույժ ունի, թե ղեղեցկություն,
 Թե կորով սըբտի, թե մեղմ մի հողի:
 Թող պսակ կապեն... Այս ե իմ ուխտը, հայանիր դու նըբան»
 Յեվ ապա դարձավ, մի պահ ել նայեց, մի հառաչ քաշեց,
 Յեվ խոսեց նորից.—«Մի պատգամ ես—ասա դու նըբան.—
 Կըռիվ, պատերազմ թող ոտաը լինեն կորյունիս համար:
 Աշխարհը յերեք կըռիվ չե միայն,
 Այլ խոնարհ մարդու ազոթի մի վայր:
 Բայց յեթե մի որ, իմ հաջորդ Բըղեշի
 Իշխանաց իշխան նախարարն հայոց
 Բեղ որհնի, մըղի սըբաղան մաըտի,—
 Թող խոնարհ մըտքով հաղնի զըրանըս,
 Նըստի հըրեղեն նըմույզ Ջալալին,
 Յեվ պարզի թուրը, իմ թուր Կայծակին»...
 Ասաց ու վըստան քայլեց, հեռացավ,
 Ասես մի աստված, վոր հողմ ու տարերք խաղ են իր համար...

Դ Ա Վ Ի Թ

Վորքան լուսահեղ մի պատկեր հիմա կանդնեց իմ առջև:
 Հայր, արդամբ դու այր, հնազանդ եմ ուխտիդ:

Ո Հ Ա Ն

Խեղոք իմ տըղա... Յես ել իմ կողմից
 Որհնում եմ ահա պըսակը քո սուրբ:

Բ Դ Ն Ծ Խ

Արի իմ գիրկը, խոնարհ իմ վորդի...

Առնում ե գիրկը, համբուրում Դավթին,
 հանկարծ անձանոք մի հուր սուրհանդակ գալիս ե մեջեղ

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Ո՞վ է ձեր միջին Դավիթ Սասունցին:

Բ Դ Ն Շ Խ

Ի՞նչ ունես հետը Սասունցի Դավիթ:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Խընդիր կարևոր և նըվերական:

Դ Ա Վ Ի Թ

Յես եմ Դավիթը:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Վերջապես զըտա... Սասունը ամբողջ տակն ու վրա արի:
Ասացին՝ այստեղ ուխտի յես յեկել:
Ուղարկել է ինձ Խաթունը Խանդուտ:

Դ Ա Վ Ի Թ

Խաթունը Խանդուտ... և ի՞նչ է ասել:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Լըսիր, ի՞նչ Դավիթ, գյուցադն պատանի,
Խանդուտ Խաթունին յեկել են տանեն
Մըսրա Մեկեքի փահլևանները:
Մեր յերկրում չըկա և վոչ մի քաջ մարդ,
Վոր փահլևանի ուժի հետ չափվի:
Կույսը ազնվազարմ, արցունքը աչքին,
Աղերսանը հըղեց պատանուդ սըրտին,
Վոր դու չըմերժես գոտեմարտ բըռնել,
Կույսի պատիվը Մեկեքից փըրկել:

Բ Դ Ն Շ Խ

Կորիր, անիծյալ, անպատկառ ծառա...
Գընա հազորդիր քո անարդ տիրոջ,—

Աբելը չեւած իր որվա դահլից,
Ավեր կդարձնեմ յես իր յերկիրը,
Յեթե կըրկնըվի նըման մի արարք:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Դառնամ հաղորդեմ իմ տիրոջն այդպես:
Սիրելի Դավիթ, վերջին մի պատգամ—
«Յեթե Դավիթը մերժի ու չդա,
Կամ տարակուսի, կամ թե վախենա»,—
Ասաց տիրուհիս,—«Հանձնիր բարեքս դանդրահեր տըղին,
Դուցե չըտեսնի դիակս յերբեք...
Բայց թող հիշի, վոր սիրում եյի հուր մաղերը դանդուր
Յեվ աչքերի մեջ կըբաղը անշեջ»:

Ո Հ Ա Ն

Դե բնվ ե, ըստբնուկ...

Դ Ա Վ Ի Թ

Զրպալիր քեզ, իշխան: Ասա ինձ, աղնիվ, վըշտահար ծառա,
Յե՞րբ ե կամենում, վոր այնտեղ լինեմ:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Դ Ա Կ

Մինչև մայրամուտ: Հենց վոր լուսինը բարձրանա սարից,
Չարբահար Բամին տանում ե նըրան:

Դ Ա Վ Ի Թ

Հայացով հասնաւ Գայեց արեւին, Գայեց իր շուրջը
յեվ միտք բերեց սլաշկեր կույսի

Ներեր, հորեղբայր, ե դհւ, վաճառայր,
Յեվ դհւ, իմ աներ,— այս մեկն ել ներեք:

Ասալ ու քալ յեվ ձոր-ընկավ: Սուրհանդակն ուրախ
հետեւեց ցաւն

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Չարիքը անժամ, ստատնի ձեռքով իմ վանքը մտալ...

Բ Գ Ե Շ Խ

Արսիւր, սուրհանդակ, թեւերդ պարզիր նըժույգիդ վըրա
Յեւ Պալթին ըզզույշ հետամուտ յեղիր:
Արեւածաղին յես կեղնեմ ճամբա:
Դու փութա ճամբին ինձ շուտ հանդիպես,
Յեւ ինչ վոր տեսնես, ինձ տեղյակ պահես:
Բարի ճանապարհ:

Մեկը դուս ե գնում

Հավ ե, թե հըսկան հաղթե Պալթին...
Իսկ թե պարտըվի... Ի՞նչ ասեմ այն ժամ յես իմ Գոհարին:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Տերն ե վողսըմած, կաղոթենք, իշխան:

Բ

ԻՇԽԱՆ ՊԱՏՐԻԿԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

Շեղ մի Պարեգ: Դիմացից մարմար
սանդուխներ լայն տնում են պալատ

1

Ձ Ա Ր Բ Ա Հ Ա Ր Դ Ա Մ Ի

Արեւ լեռան զաղաթն ե իջնում, աղնվազարմ իշխան:
Ասա Խաթունին թող պատրաստ լինի,
Մինչև ուղտերը մենք կասկենք ջըրի:

Փահլեվաններ գնում են դուս

2

Պ Ա Տ Ր Ի Կ

Ո՛, նենգ, նենգ մարդիկ:

Յերիցանու անդամներին

Ազնիւ, քաջ այրեր, իմ յերիցանու ալապ անդամներ,
Դատողությունս չի գործում հիմա:

Ասացեք ազատ, համարձակ խոսքով,—
Յեթե հարմար ե, վոր ապստամբության
Արդար դըրողը մենք այսոր պարզենք,
Հըրաման կըտամ հենց այս բոսկիին՝
Չարբահար Բամուն իրա մարդկանց հետ
Կալանքի առնել, իսկույն նիզակել:

Հ Ա Ս Ա Կ Ա Վ Ռ Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Ծեռ վաճառահանից

Խոսիր համարձակ, մեր միտքը հայտնիր:

Պ Ա Տ Ր Ի Կ

Խոսիր, ալեհեր, իմաստուն ծերուկ: Համարձակ յեղիր:
Ազնիւ վաստակի այրեր եք դուք քաջ:
Ձեր խոսքն ինձ համար մեծ կըշխու ունի:

Ծ Ե Ր Վ Ա Ս Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Արդար ե միտքդ, բարձրատուն իշխան.—
Խընամի լինել Մելիքին անարգ,
Ասել ե՝ կայսերն կորցնել հավիտյան:
Սակայն ուշժերով թույլ ենք տակալին,
Վերսկսողի անկախ մենք վտարի յելնենք,
Ապավինելով մեր ուշժին միայն:
Գիտես, վոր կայսրը նենդ ե, խորամանկ, իր խոսքը ծախող:
Նըժարը ձեռին՝ նա միշտ կըշտում ե զեպքերն արտաքին:
Այսոր խոստումովը իր կայսերական բեզ թագ կուղարկի,
Վաղը ցեղակից մի այլ իշխանի զահ կխոստանա,
Ուզե՝ յերբորդին վոսկե գայիստն,
Կամ արքայական ծիրանի կըտա:
Նայած՝ նըժարում ո՞վ ծանրը կըղա:
Տեսեք, վոր սրան—Մըսրա Մելիքին ուզում եմ ասել,—
Չայրուլթ ապարդյուն չըհաբուցանենք
Յեւ հենց դըրանով մեր մեծ քաղաքը մենք չվտանգենք:
Հարկ ե խորամանկ մի սուտ հընարքով քանի որ շահել,

Մինչև մենք ուշիով ամբանանք, պընդենք,
Յեւ աստհովենք զաշինքը կայսեր:
Իսկ այժմ լավ ե մասնավոր կերպով
Դեռ շարունակել տուտուրը մեր
Յեւ յերկրի բախտը միառժամանակ աստհով պահել:

Տ Ա Ք Ա Ր Յ Ո Ւ Ն Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Դարերի ահը նըստել ե մաքրիդ, հոգիդ կաշկանդել:
Վորքն ուղտերն են, վոր զեթ աստհով
Քաղաքիս բերդից յեկնում են աստա:
Բըղեշխի յերկրում զեռ ձըվից չելած առետրի մարդիկ
Թողնում են մի որ յերկստապատ մի ուղտ
Բեռնած ասլըանքով անցնի այն յերկրից:

Պ Ա Տ Ր Ի Կ

Իսկ յերբ վոր բացվեն ճանապարհները զեպի Բյուզանդիոն,
Ո՞վ կարիք ունի Բըղեշխ իշխանի յերկրի սահմանով
Քարավան տանել հեռու յերկիրներ:

Ծ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Իսկ ո՞վ կըբանա ճանապարհները զեպի Բյուզանդիոն:
Մինչ զեպքի մասին հաղորդում անես կայսեր զորքերին,
Մեկիքը այսօր ավերում կանի քաղաքն իշխանիդ:

Հ Ա Ս Ա Կ Ա Վ Ո Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Բացի ամենը, ինչ վոր լըսեցիր,—
Մեծ հալածք ունենք նաե այն բանի, պատվարժան իշխան,
Վոր մեր շինական ու ռամիկ մարդիկ
Նույնպես զենք առած կելնեն մեծ մարտի,
Յեթե մի հարմար զեպքի առիթով՝
Կարենաս նըբանց դու վտարի հանել:

Ծ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Այն ժամ կայսրը՝ ասած նըժաբիս որենքի կարգով
Իսկույն ոգնության կհասնի պահին:
Միայն հարկ ե, վոր ասած առիթը փոքրիքես, իշխան:

Պ Ա Տ Ր Ի Կ

Առավել հարմար առիթ եք ուզում,
Յերբ իմ աղնվազարմ զստեր պատիվը հանձնում են քամուն:

Ծ Ե Ր Վ Ա Ս Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Ռամիկի կաշվին չի ղեպչի յերեք,
Յերբ մի իշխանից իր դստեր ձեռքը մի արքա խնդրի,
Վորքան ել լինի իշխանի համար փեսան զարշելի:
Թողնենք ուրեմն ապստամբութունը հարմար առիթին:

Տ Ա Ք Ա Ր Յ Ո Ւ Ն Վ Ա Ս Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Այս, թե Դավիթը հասներ այս ժամին:

Ծ Ե Ր Վ Ա Ս Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Կարծում ես՝ արդան Գամուն կհաղթի:

Տ Ա Ք Ա Ր Յ Ո Ւ Ն Վ Ա Ս Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Յերգեր են հյուսում նըրա անունին:

Պ Ա Տ Ր Ի Կ

Աստված իմ, աստված...

3

Բազում նաժիսներ օրջապատել են Խանդուս Խարունիկ,
Վորը պալատի մարմար սանդուխից իջնում է պարեկ

Խ Ա Ռ Ո Ւ Ն

Մի քանի զարուն անցավ այն սրից,
Յերբ մի ալեոր, կորացած ձերուկ
Դուշակեց կյանքիս ու բախտիս համար.—
«Յերկա՛ր պիտ ապրես»— զուշակեց նա ինձ,—
«Աստղըդ պայծառ ե, փայլուն, յերջանիկ»:
Սա՛ յե այն աստղը, վոր փայլում էր կոչեց:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Թե սիրում ե քեզ, Դավիթը անշուշտ կըհասնի, որիորդ:

Ծ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Անգամ թե սիրե հայրենիք ու հարս,
Դավթին չեն թողնի այս կողմերն անցնել:

Գ Ա Մ Ի

Արեը լեռան գագաթն ե իջնում,
Հասել ե ժամը, պատրաստվիր, որիորդ:

Խ Ա Ռ Ո Ւ Ն

Բերեք ինձ համար թուռնավոր մի բույս:
Հենց վոր ինձ կապեն այն ուղտի մեջքին,
Մեռնելը հողուս հանդիսս կըրերք:

Դ

Գ Ա Ղ Ա Գ Ա Յ Ի Ս Ե Պ Ո Ւ Հ

Առագ գալիս ե մի դարբնի հետ

Մի հըսկա դարբին հենց հիմա գտա:
Յերբ մուրճ ե առնում յերկաթ ծեծելու,
Յերկաթը ամուր զընդանի ափից
Վարպետի թեթե հարվածից անգամ
Հազար բեկորով յերկինք ե հասնում:
Պատմում են նաև, վոր անցյալ ձըմեռ
Դարբին վարպետներն մըրցություն արին, թե ով ե ուժեղ,
Յե՛վ վոր այս հըսկան քառասուն մարդուց,
Քառասուն արծաթ մի շընչում շահեց:
Ահա վարպետը, աղնվազարմ իշխան:

Ծ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թող մարտի յեղնի: Թե հաղթե հըսկա փահլեաններին,
Քառասուն վոսկի փող ենք խոստանում
Յե՛վ ազատ վաշխի իրավունք տալիս:

Խ Ա Ռ Ո Ւ Ն

Քառասունն ել, ա՛յր, ինձնից ըստացիր,

Միայն թե փութա, բա՛վ ե սակարկեք:

Աբեը լեռան վըրա յե նըստում:

Տ Ա. Ք Ա. Բ Ե Ո Ւ Ն Վ Ա. Ճ Ա. Ռ Ա. Կ Ա. Ն

Դե, փորձիր, վարպետ:

Դ Ա. Բ Բ Ւ Ն

Ո՛վ, հիսուս-քրիստոս: Արի, փահլեան:

Ք Ա. Մ Ի

Առաջ գալով

Շապիկըդ հանիր:

Դ Ա. Բ Բ Ւ Ն

Վախեցած

Քեզ հետ ենք կըսչում:

Ք Ա. Ղ Ա. Ք Ա. Յ Ի Ս Ե Պ Ո Ւ Հ

Զարկէք թըմբուկներ: Դե, արի՛, վարպետ:

Դեռ իրար գոտուց չըբռնած մարդիկ,—
Քամին հաղթում ե դարբին վարպետին

Խ Ա. Թ Ո Ւ Ն

Սկսեցավ որս...

Լալիս ե

Ք Ա. Մ Ի

Կարծել ե մուրճով յերկաթ պիտ ծեծե:

Խ Ա. Թ Ո Ւ Ն

Դե բեր ինձ համար թուճալոր մի բույս:

Ք Ա. Մ Ի

Արդ՝ ժամ ե, որիորդ: Մինչ ուղտին նըստես,
Թալ մըթնաշաղից լուսինը յերկրին
Կաթնածոր լույսով վողջուն կըմաղթե:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Ծածուկ

Պահիր թունավոր այս բույսը քեզ հետ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Իմ անուշ խաթուն, իմ արյուն, իմ սիրտ:
Քեզ պիտի զիջեմ: Թե լինեք իմ հին որերին պայծառ,
Յերբ բյուր լեզեռններ անձիս ու յերկրիս պահապան եյին,
Յես հեյի անի այս քայլը յերբեք, դու այդ քաջ զիտես...
Բայց այժմ, ավանդ,—քեզ պիտի զիջեմ...
Կըզա յերևի մի որ յերջանիկ,
Յերբ ուրախ սըրտով իրար կըտեսներ:
Յելիր, իմ խաթուն, իմ հրեղեն աղջիկ:

Ծառաներին

Բերեք աղամանդ, հակինթ ու բուստեր,
Յեվ մետաքսեղեն՝ նկարուն զորդեր,
Բեռներ ուղտերին, ճոխ բաժինք արեք,
Վոր իմ աղջկա աչքը հաղենա:

Իրար են անցնում

Խ Ա Ն Պ Ռ Ի Տ

Նաժիսներին

Թե յես մահանամ այս տըխուր ճամբին,
Մի լուր կուղարկես Մասունցի Դավթին,
Ասա—ինչո՞ւ նա այնպես ամուր սըղմեց ինձ կըրժքին,—
Իմ սիրտը ձուլեց ապառաժ սըրտին,
Վոր հետո ավեր ու մոխր՞ր մաղե և՛ սիրտ, և՛ հողի...
Տմարդ և, ասեք, Վոչ արժան իր հոր՝
Դյուցազն Մըհերի զավակ կոչվելու...

Ք Ա Ս Ի

Արեւ կիսով սարիցը իջալ:

Խ Ա. Թ. ՈՒՆ

Դե, մընաք բարով, և՛ հայր, և՛ ընկեր
Յեվ զուր՝ ավագներ ազնիվ վաստակի,
Յեվ զուր՝ նաժիշտներ, զո՛ւք ել, ծառաներ:

Յերգում եմ խոր հրածեսի մի յերգ

5

Դ Ա. Վ. Ի Թ

Վորպես մի սեսիլ, կամ հողմ ավերիչ,
պարսպի վրայից ցատկում ե պարտեց

Այստեղ ե գեռ նա—նաթուհը թանգուտ:

Խ Ա. Թ. ՈՒՆ

Դավիթ, իմ Դավիթ...

Դ Ա. Վ. Ի Թ

Ո՛ւր են քաջերը Մըսրա Մելիքի,—
Թող յեղնեն մարտի:

Պ Ա. Տ. Բ. Ի

Հողնած ես, մատաղ, Մըհերի գավակ, մի փոքր շո՛ւնչ առ:
Ուտելիք բերեք՝ բազուկն ամբանա:

Դ Ա. Վ. Ի Թ

Արեւ կիջնի, և խարդախ մարդիկ պատճառ կըբռնեն:
Դե, առաջ յեկեք:

Մ Ե Կ Ը

Ահա մեր մեծը, Չարրահար Դամին,
Յեվ ուժով վարպետ և հրամանատու,—բըռնվի՛ր նրա հետ:

Դ Ա. Վ. Ի Թ

Ո՛վ, հիսուս-քրիստոս, սղնական յեղիր:

Ասաց ու բռնեց հսկայի մեջինց
յեվ մի վայրկյանում գետին գլուրեց:
Իր փոքր ամոռ, ասես մի յերկար,
սղմեց նա ըն յաժ՝ հաղթածի մեջինց:

Յնժաց ամբոխը

Ն Ա Ժ Ի Շ Տ Ն Ե Ր

- Տես վոնց զարկեց:
- Ես յէրբ հաղթեց:
- Բա վոնց բռնեց, յես հետաա:
- Հըսկան, տեսեք, վոտքի տակին վոնց ե պահել:

Գ Ա Ղ Ա Գ Ա Ֆ Ի Ս Ե Պ Ո Ի Հ

Թըմբուկ զարկեք, ուրախ պարենք,
Հաղթանակը վայել տոնենք:

Խ Ա Թ Ո Ի Ն

Դավիթ, սիրեկան:

Ասավ Խարունը յեմ ընկավ Դավրի պարզած ձեռներին

Ծ Ե Ր Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Կեցցես, պատանի: Առավել ուժեղ, քան հայրդ եր առյուծ:

Բ Ա Մ Ի

Թող վոտքի կանգնեմ, հաղթված եմ, հաղթված:

Փ Ա Հ Լ Ե Վ Ա Ն Ն Ե Ր

Աղայանով


- Դավիթ, խըղճա Չարբահարին...
- Վոտքը քաշիր...
- Տես, ինչպես ե շունչը կըտրել...
- Վայել չե քեզ այդպես վարվել...

Ն Ա Ժ Ի Շ Տ Ն Ե Ր

- Տեսեք, վոնց ե սըղմել կըրծքին...
- Ասես, արծիվ լինի կեցած...
- Մեր Խաթունին խեղդեց, պըրծավ...
- Դավիթ, մեղք ե, թող շունչ առնի...

Դավիրն անկուռն կիպ փարվել ե կուսի բերնին





Խ Ա. Թ Ո Ի Ն

Դավիթ, մեռա՛...

Դ Ա. Վ Ի Թ

Հրեց վոսֆով Չարբահարին,
իսկ Խաթունին դրեց գետին

Ք Ա. Մ Ի

Այսպես պողպատ մաքրեց եք տեսել:

Պ Ա. Տ Ր Ի Կ

Հէյ, ծառաներ,—հարս ու աղջիկ,
Սեղան բացեք Դավիթ պատվին:
Ծեր ու պըստիկ, կին, տղամարդ,
Տեր ու ծառա թող զինովնան, ուրախանան,
Ուրախ որիս, թողեք խընդան:

Յերգ ու պարեր յեկ ցնծություն

Խ Ա. Թ Ո Ի Ն

Նաժիեսին

Առ քո բույսը թույնով սընված:
Ել պետք չե ինձ վոչ ահ, վոչ լաց:

Ք Ա. Մ Ի

Մընաք բարով, աղնիւ իշխան,
Մենք հաղթված ենք ձեր Դավիթից:

Պ Ա. Տ Ր Ի Կ

Այս ձեզ վոսկի, առեք նըվեր,
Այլևս պաշար չամբուս համար:

Ք Ա. Մ Ի

Մընաք բարով

Գնում եմ

Ն Ա Վ Ի Շ Տ

Յեկեք պալատ, հարս ու աղջիկ,
Տեր ու ծառա, և դուք, ճորտեր՝ արհեստավոր,—
Ճաշ ու գինին ձեզ են ըստասում:

Պ Ա Տ Ր Ի Կ

Գլխանք, Դավիթ, իմ հարազատ:

Խ Ա Թ Ո Ւ Ն

Թողեք այգում մենակ լինենք:

Բոլորն ուրախ պալատ են անցնում

6

Խ Ա Թ Ո Ւ Ն

Գիտե՞ս, որենքով յես քոնն եմ, Դավիթ:

Դ Ա Վ Ի Թ

Որենքը ո՞վ է սահմանել այդպես:

Խ Ա Թ Ո Ւ Ն

Մարդը դարավոր, և մարդու համար:

Մի մարդու ուխտով, ավանդ, կապված եմ մի ալլ կույսի հետ:

Խ Ա Թ Ո Ւ Ն

Խնչպիսի՞ մարդու:

Դ Ա Վ Ի Թ

Այնպիսի մարդու, վորին հնազանդվել պարտ եմ ընդոթյամբ:

Խ Ա Թ Ո Ւ Ն

Բայց ո՞վ է այդպես կաշկանդել հողիդ:

Գ Ս. Վ. Ի Թ

Մի մարդ, վոր չուներ նըմանն աշխարհում
Յեւ աշխարհը նըրան հրաշքով ծընեց...
Մարդ, վորին աստված իր տեսքըն եր տըվել
Մարդկանց մեջ աստված լինելու համար...
Դյուցազըն մի այր,—առյուծ Մըհերը,
Վորից յեա ծընվել, բայց սուրբ պատկերը
Ավանդ, բյուր ավանդ, յերբեք չեմ տեսել:

Խ Ս. Ն. Գ Ո Ի Տ

Յեւ ուխտ ե արել...

Գ Ս. Վ. Ի Թ

Վոր յերբ մեծանամ Բըդեշխ իշխանի աղջիկը սիրեմ...

Խ Ս. Թ Ո Ի Ն

Նըրա Գոհարին:

Գ Ս. Վ. Ի Թ

Հըրեղեն կոչված, վորին չեմ տեսել...

Խ Ս. Թ Ո Ի Ն

Մարում ե սիրաբու...

Լոռյուն

Իսկ թե այդ կողմա, առնացի կույսը
Վերանա իսպառ քո սիրո ճամբը:

Գ Ս. Վ. Ի Թ

Մարդասպան լինել... բարեկամի դէմ:

Խ Ս. Թ Ո Ի Ն

Ուրիշք բարեկամ: Նա յերբեք, յերբեք
Վոչ եր բարեկամ բարի Մըհերին,
Վոչ ել քո տոհմին՝ վեհ, դյուցազնական:
Հայրիկ, Ծառաներ, մի հորըս կանչեք:

Իսկ վոր բաղաբլի հաղար-հաղար մարդ
Տեսան, թե ինչպես, շուրթերիս վարված
Կուսական անմեղ համբույրըս առմիր:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Մթթե մեղք արի անգետ վարմունքով:

Խ. Ա. Թ. Ռ. Ի. Ն.

Մեծ մեղք ե, հարկավ, յերբ մի պատանի
Մի կույսից նըրա համբույրը առնի,
Յեւ սուրբ պըսակից իսպառ հեռանա:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Իրանի ես ասում: Որե՞նք կա այդպես:

Խ. Ա. Թ. Ռ. Ի. Ն.

Թող աստված լինի վըկա ասածիս:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Ո, ի՜նչ ծանրը մեղք իջավ իմ հոգուն...

7

Պ. Ա. Տ. Բ. Ի. Կ.

Ներս ե գալիս

Ասա, իմ անուշ աղջիկ յերջանիկ,
Ի՞նչ ե ուղածըդ, կամ քոնը, Դավիթ:

Խ. Ա. Թ. Ռ. Ի. Ն.

Ավանդ, յերջանիկ... Վոչ, հայր իմ բարի,
Քո զուստը յերբեք պըսակ չի հաղնի:

Պ. Ա. Տ. Բ. Ի. Կ.

Ինչո՞ւ չի հաղնի: Ի՞նչ ե պահանջըդ,
Քաջադուն Դավիթ,—յերկի՞ր, թե վոսկի՞:

Դո ազնիւի հոր հետ յեղբայր ենք յեղել:
 Յերբեք պահանջով, կամ կըռկով անմիտ
 Ձենք ղիմել իրար մի բանի համար:
 Մըհերը յեթե ուղենար մի բան,
 Առանց հարցումի, ազատ, համարձակ կընըստեր նըժոռյգ,
 Յեւ վորպես տանտեր պալատըս կըզար,
 Կառներ իր ձեռքով ինչ վոր կամենար:
 Նույնը կանեյի և յես նրա հետ:
 Այսպես ենք յեղել մենք յեղբայր իրար:

Խ Ա. Թ. ՈՒՆ

Մըհերը ուխտով կապվել և անարգ Բդեշիս իշխանին,
 Վոր յերբ Դավիթը պատանի դառնա, սիրե Գոհարին:

Պ Ա. Տ ՐԻԿ

Նա, վոր Մըհերի կյանքէն և դավել:

Դ Ա. Վ. Ի Թ

Ինչպէս թե դավել:

Պ Ա. Տ ՐԻԿ

Ինչպես նենդ մի ոճ: Տեղյակ եմ շատ քաջ,—
 Մըհերն ու Բդեշիսը Ծովասար յելան մի մարտի համար,
 Յեւ Բըդեշիսը նենդ, հաղթվելու պահին,
 Բարի Մըհերի վեհանձըն սըրտին
 Դիմեց խորամանկ խոսքերով իր նեռ,
 Յեւ ուխտ ազերսեց՝ խընամի դառնալ:
 Մըհերը թեպէտ առյուծ եր ուժով,
 Բայց սրտով մանուկ, և ուխտն ընդունց իր նենդ թշնամուց:

Դ Ա. Վ. Ի Թ

Բայց ինչո՞ւ յելան Ծովասար մարտի:

Պ Ա. Տ ՐԻԿ

Մըսրա խալիֆը նենդ Բըդեշիսի հետ մի դաշն եր կընքել,
 Վոր հորըդ սպանի, և մեր աշխարհի

Մի ամբողջ կեսը հանձնի Մեկիքին:
Հայրըդ իմացավ և մարտի կանչեց դավաճան մարդուն՝
Պատժելու համար:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Պետք և խիստ պատժեր:

Պ Ա. Տ Ր Ի Կ

Բայց հենց վոր մեռավ Մըհերը արի,
Բըդեշի իշխանը ասպարեզ յեկավ իր նախկին մըտքով:
Կանչեց նա դաժան Մըսրա խալիֆին,
Յեվ մենք մընացինք աղքատ հարկատու և անարդ ստըրուկ:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Ո՛ր, նենգ, նենգ, նենգ մարդ...
Յեվ յես կաշկանդված մեծ մարդու ուխտով,
Վոր արվել և լոկ միամիտ մըտքով,—
Պիտ ընկնեմ թակաւրդ... Ո՛ր, աստված իմ, աստված:

Պ Ա. Տ Ր Ի Կ

Բայց թե կարենաս քո հորը արժան մի դավակ լինել,
Յեվ վերականգնել որենքը նըրա,—
Աշխարհը հավեա քեզ չի մոռանա...

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Ինչպէս կարենամ, ասա, իմաստուն:

Պ Ա. Տ Ր Ի Կ

Քո հայրը ունի և զենք, և նըժույգ,
Յեվ դուրսագնահան մի թուր Կայծակի:
Յեթե կարենաս մի կըռվով անկ
Քըշել մեր յերկրից ոտար խալիֆին,
Արժան ամուսին կլինես Խաթունէն...

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Արժան Խաթունէն...
Բայց, ասա, այնժամ օվ պիտի իշխե մեր յերկրի վրա:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ը... Այնքամ մարդիկ կապրեն... և՛ ազատ, և՛ հարուստ կյանքով:

Դ Ա Վ Ի Թ

Յեվ այսքան հարկեր, կամ տույժ անհամար
Զի՞ տա ուսմիկը բըռնակալ մեկին:

Պ Ա Տ Ր Ի Կ

Խաբում ե Դավթի

Հարկավ... նա չի տա...

Դ Ա Վ Ի Թ

Ո՛ր, յերկինք, յերկիր, արարիչ աստված,
Մի՞թե պատժել ես իմ ցեղի մարդկանց,
Խալիքել միտքը, վոր լույսն արեւի չըտեսնեն յերեք:
Իմաստուն իշխան, ըշտապիր ինձ հետ հորեղբորըս մոտ:
Գընանք և ասա, ասա ամենը, ինչ վոր ինձ ասիր:

Պ Ա Տ Ր Ի Կ

Իմ անմեղ տըղա... Թուլամորթ, անկամ Ոհանը գիտե...

Դ Ա Վ Ի Թ

Գիտե՞... Ոհանը...

Պ Ա Տ Ր Ի Կ

Ավելին գիտե, քան յես ասացի...

Դ Ա Վ Ի Թ

Պղտորվեց և իմ միտքը պատանի...
Գընանք, մեծ իշխան, լըսիր աղերսըս, և զնանք ինձ հետ:
Կույրին կըհարցնեմ: Անպայման գիտե:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ո՞վ ե այդ կույրը:

Դ Ա Վ Ի Թ

Ռամիկ սասուհնցի: Աշխարհի գործից ամեն ինչ զիտե:
Գընանք ու պատմիր և թող իմ առաջ խոստովանք անեն...
Իսկ յեթե իրոք Ոհանն համառի,
Չըզլտեմ, թե ինչ կանեմ յես իր հետ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Շատ բարի, զընանք:

Խ Ա Թ Ո Ի Ն

Ի՞նչ ասիր, հայրիկ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Հանգիստ, իմ աղջիկ: Բայց պայման ունեմ, սիրելի Դավիթ,
Յեթե Ոհանը հանդգնի կըրիկն կսպտարար խոսել,
Կամ մի նենգ դավով վընասել անձիս,
Պատասխան կըտաս քո հարսի դատին:

Դ Ա Վ Ի Թ

Վըկա յե աստված, վսր քեզ արժանի
Փառքով ու պատվով ճանապարհ կանեմ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Արդ՝ պատրաստ եմ յես:

Դ Ա Վ Ի Թ

Ներիր, չըքնաղ կույս: Մընացեք բարով:

Խ Ա Թ Ո Ի Ն

Սիրտըս գուշակեց անհաճո մի բան:
Մինչև քո դարձը, պատվելի հայրիկ,
Յեվ քոնը, անուշ սիրեկան կյանքիս,
Վսչ քուն, վսչ դադար չի իջնի աչքիս:
Բայց յերբ կամեցաք յերկուսըդ մի տեղ,
Վսրպես բարեկամ մի գործի զիմեկ, թող աստված ձեզ հետ:

Դե, զընաս բարով, աղնիվ սիրեկան:
Թող մի համբուլք ել կըրկնե մեղքըդ, թե մեղք ե սիրել:

Դ. Ա. Ա. Ի Թ.

Ո՛ր, ներիր, Խաթուն, թող վոր չըգրժեմ
Հորից ինձ հասած մի ուխտ նվիրական,
Թեկուզ նա լինի նենդությամբ կորզված:
Հենց այսօր վանքում, վանահոր առաջ
Յես խոստում տըվի Գոհարին սիրել:

Խ. Ա. Թ. Ո Ի Ն.

Ո՛ր, հայրիկ, լսիր, թե ինչ ե ասում:

Դ. Ա. Ա. Ի Թ.

Ուշժ տուր իմ մըտքին, ով աստված կարող,
Վոր արդարությունը չարից անբերեմ:
Մուկի յե իջնում յեկ մեղմ աղարում

Պ. Ա. Տ. Բ. Ի.

Միայն Խարունկ

Տենչերըս նախկին նորից թե առան...
Արդար դորժ կանեմ, յեթե կարենամ
Պոկել Բըդեշխից փեսացուդ այս քաջ, ե դործել իր հետ...
Նըստիր ե կաղմիր նամակ մի խոնարհ,
Յեկ իմ կընիքով հասաատիր պատշաճ:
Դո կողմից հատուկ բարեններ հիշիր,
Յեկ հավատարիմ սեպուհի ձեռքով
Բյուզանդիոն՝ կայսրին արագ ուղարկիր:
Ըզդում եմ՝ բախտդ բացվում ե, աղջիկ:
Վոչ թե իշխանազն որիորդ հաղելի պիտ մնաս հավետ,
Այլ արքայազն իշխանուհի լինել՝ կոչված ես վերուստ:
Այդ ե խոստումը բարի մեր կայսեր,
Յեթե կարենամ տիրոջ ոգնությամբ խալիֆին հաղթել:
Արդ՝ զընանք, Դավիթ: Բարի ճանապարհ:

Դ. Ա. Ա. Ի Թ.

Պոկվում ե աղորից

Գընանք, մեծ իշխան:

ԲԴԵՇԽ ԻՇԽԱՆԻ ԱՊԱՐԱՆՔՈՒՄ

Շինդ հովանոց, վորը նայում է պարսեզին

1

Ա. Ն Ա. Ժ Ի Շ Տ

Դուռը բաց արավ:

Փ Ո Ւ Բ Բ Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Ա՛խ, թե տեսնեյիք հայացքը Դավթի:

Ա. Ն Ա. Ժ Ի Շ Տ

Սենյակից յելավ:

Փ Ո Ւ Բ Բ Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Ա՛խ, թե տեսնեյիք կեցվածքը նըրա:

Ա. Ն Ա. Ժ Ի Շ Տ

Դավիս ե արագ: Պատրաստվիր, ձնճղիկ, պատմել որիորդին:

2

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա. Բ

Դավիս ե արագ

ձնճղիկը յեկանվ:

Փ Ո Ւ Բ Բ Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Այստեղ եմ, որիորդ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա. Բ

Տեսա՞ր դու: Անճամբ: Դե, պատմիր շուտով:

Խոշո՞ր ե արդյոք տեսած պատանիդ:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Ինչպէս, տիրուհի, հասակի՞ կողմից:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Իհարկե այդպէս: Հըսկա՞ յե, արդյոք, նա իր իրանով:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Վե՛շ այնքան բարձր, վոր անգեղ լինի:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ինչպէս, կարճհասակ:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Յե՛վ վե՛շ ել այնպէս, վոր սանդուխք հեծնի պըտուղ քաղելիս:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Բայց ասա,—կաղմով առնող է, լեցնէն:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Այնպէս, վոր մարդիկ հախանձով նային:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Վայե՞լ ե նա ինձ:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Քեզ ու ամենքին:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յերբ ինձ ե վայել, ել պետք է ասել ամենքի մասին:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Սովորէր խոսել:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Նա բեխե՞ր ունի, և յերկար մորմնա:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Հազիվ են ծըլած թե բեխ, թե մորուս:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Աչքերը ազդու, առնական վայլով:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Վայել մի մարդու, վոր կորյուն կոչվի:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Հայացքը հատու, ինչպես... նըծույզըս, յերբ սարի ծայրին
Կենում ե հանկարծ՝ մի ուրիշ ձիու խըրխինջ լըսելիս:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Ճիշտ այդպես, որիորդ,—յերբ վորսի պահին
Յեղեղնի միջից մի վորս ե տեսնում:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Կեցցես, իմ մանչուկ, շատ լավ ես դիտել:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Տըլած պատվերըդ յերբ չեմ կատարել:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Ասա, մանչուկըս, յերբ վոր քայլում ե,
Դու հեռու կանգնած մի ահ չե՞ս ըզգում:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Նա յերեք այնպես չի քայլում, ինչպես մարդիկ են անում:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Ապա:

Ն Ս Ժ Ի Շ Տ

Ապա վո՞նց:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Այծյամի նըման վեր ե սըլանում,
Յերբ պետք ե հասնել մի սարի կատար:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Իսկ ձոր իջնելիս:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Նետում ե իրեն ուղիղ ջրի մեջ,
Յեթե այդ ձորում մի գետ ե հոսում:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Իհարկե՝ այդպես բացառիկ մի այր
Կուղես ունենալ վորպես ամուսին:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Կուղես ունենալ... Այո, կունենաս:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Իսկ յեթե լիներ մի տխրած մանչձուկ,
Կամ յերկչոտ տըղա՜, վոր մըթնշաղկն, միգելու պահին
Լուսնից ցոլացած իր յերկար սավերից դաշտերով փախչեր:

Բ. Ն Ա Ժ Ի Շ Տ

Կամ չեչոտ լիներ...

Գ. Ն Ա Ժ Ի Շ Տ

Իսկ թե նա լիներ խարդախ, կամ բոռ, դու ի՞նչ կանեյիր:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ո՛ր, բավ ե ինչքան կատակներ արիք:

Փ Ո Ւ Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Այն ժամ աշուհը Դավիթ չեր լինի:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Թեպետ և Դավիթ անուն ունենար,
Յեւ բյուր զանձերով կաշառեր հողիս,
Յես չեյի առնի, յեթե դուր չըզար:

Փ Ո Ք Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Իսկ ուխտը արված Բըդեշխ իշխանի:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յեւ վոչ մի սուրբ ուխտ չեր կարող յերբեր կաշկանդել հողիս:

Փ Ո Ք Ր Ի Կ Ճ Ն Ճ Ղ Ի Կ

Հավ ե, Դավիթը արժան ե ուխտին:

Ն Ա Ժ Ի Ծ Տ

Կըրկնակի արժան:

Բ. Ն Ա Ժ Ի Ծ Տ

Տասն անգամ ավել, քան տասնյակ տարի
Անցած զընացած մի դատարկ խոստում:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ահա հայրիկը և հյուրերը իր հետ:

Իջնում ե բակը, բոլոր իր նկ

3

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Բարի գալուստ, հայր:

Բ Գ Ե Ծ Խ

Բարձր, քաջ աղջիկ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Տեսա՞մք Դավիթին: Քո աչքով տեսաւ:
Յեւ ճալանեցիք, նըշանը տրվիք:

Բ Գ Ե Շ Խ

Տեսաւ իմ աչքով, նըշանը տրվի, և խոստում առաւ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Հալածն ես իրան:

Բ Գ Ե Շ Խ

Հալածն եմ, այո: Ահա Ոհանը,—
Մեր նոր խընամին և ավագ իշխան:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Համեցիր, ազնիվ, քաջագո՞ւն իշխան:
Մեր վողջ բարեքը քեզ նըվեր հաշվիր:
Իսկ ինչո՞ւ Դավթին ձեզ հետ չըրերիք:

Ո Հ Ա Ն

Հարսանիք կանենք և քեզ, չքնաղ հարս,
Մեր հին որենքով Սասուն կըտանենք:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Իսկ յՔրը կըլինի պըսակը մեր սուրբ:

Ո Հ Ա Ն

Յերբ հաճի հարսը, անհամբեր աղջիկ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Խոստովանում եմ՝ անհամբեր դարձաւ:

Բ Գ Ե Շ Խ

Դե, լըսիք, աղջիկ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ամբողջ իմ ուշքով լըսում եմ, հայրիկ:

Բ Գ Ե Շ Խ

Հրաման արձակիր՝ սեղան պատրաստեն:
Յես ու խընամին և մեզ ուղեկցող սեպուհները քաջ
Սոված ենք արդեն:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Գընանք, աղջիկներ: Ներիր ինձ, իշխան:

Գնում եմ պալատ

4

Բ Գ Ե Շ Խ

Այդպես, ուրեմն, իմ յեղբայր Ոհան.—
Քառասուն կանոյք, վոր յերկանք աղան,
Քառասուն հարսներ, վոր ուղտեր բառնան,
Քառասուն աղջիկ—տեղաշոր բանան,
Քառասուն կույսեր—հարեմի համար:

Ո Հ Ա Ն

Վորտեղից զըտնեմ յես այդքանն, իշխան:

Բ Գ Ե Շ Խ

Յերանի զըանով բալական մընա:
Ինչո՞ւ ուշացավ սուրհանգակն այսքան:
Ապա պատրաստիր մի այդքան ուղտեր,
Յեկ արագավաղ նըժույդ ձիաներ,
Բեռներ բոլորը հարուստ բեռներով,
Յեկ բյուր հատ վոսկի ավել ուղարկիր:

Ո Հ Ա Ն

Գիտեմ բընույթը Մըսրա-Մեկիբի,—
Այդքանը, վոր տանք— կըկնակին կուզի

Բ Գ Ե Շ Խ

Քառակին անգամ արժե վոր զանձես
Քո պիղծ ոամիկից: Այն թո՛ղ սարքեցին

Վանքի գավիթում: Ո՞վ է լսել, վոր
Ռամիկը, ընդդեմ իր ախրոջ կամքի,
Ծեծե, ըսպանե իշխանավորի...
Յես հարցում արի վանահորն այնտեղ—
Ավետարանում անգամ չի հիշվում նման արարմունք:
Հարկեր հավաքել, ճիշտ է, լավ գիտես,
Բայց սուրբը, իշխան, ամուր չես բռնած...

Ո Հ Ա Ն

Յես ցույց կըտամ նրանց...
Կըրկնակի՛ գանձել՝ այդ ճիշտ ասացիր:

Բ Դ Ե Շ Խ

Դե, տես, բարեկամ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Բ

Սեղանը բաց է, և ճաշը պատրաստ:

Բ Դ Ե Շ Խ

Դընանք, խընամի: Բայց ահա յեկավ սուրհանգակը մեր:
Ե՛, ի՞նչ լուր բերիր:

5

Ս Ո Ւ Բ Հ Ա Ն Գ Ս Կ

Դավիթը հաղթեց Չարբահար Քամուն:

Բ Դ Ե Շ Խ

Հաղթեց. ասացիր:

Ո Հ Ա Ն

Դե, յեկ Մեկիքի գայրույթը զսպիր:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Բ

Ի՞մ Դավիթն է, հայր, հաղթել հըսկային:

Բ Գ Ե Շ Խ

Հետո լինչ յեղավ, դե, շուտով պատմիր:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Հենց վոր այն հրական պառկեց քարերին,
Առավ Դավիթը խանդուտ խաթունին,
Յեվ մի ժամ ամբողջ զըրկեց, համբուրեց,
Քաղաքի մարդկանց աչքի առաջին:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Գրկեց, համբուրեց, խանդուտ խաթունին:
Ո՞վ է հարսնացուն անպիտան Դավիթի,—
Յեա, թե խաթունը: Պատասխան տուր, հայր:
Յեա չեմ հանդուրժի, վոր ինձ խաթունը մրցակից լինի:
Հետո լինչ յեղավ, պատմիր, սուրհանդակ:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Հետո ել, որիորդ, յերգեր հյուսեցին
Սիրող այդ զույգի արևի համար,
Յեվ կարծեմ իսկույն նըշանդրեք արին:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Լըսում ես, Բդեշխ, անարդված ե քո, և քո ազջկա
Պատիվն ազնվական: Ասացեք իսկույն Սևուկն իմ թամբեն:
Զուր չե, վոր թըրով վարժված եմ արդեն:
Դավիթը ապրի, և ուրիշ մի կույս սիրե, պըսակվի...
Մարտի կըկանչեմ:

Ո Հ Ա Ն

Համբերիր, ազջիկ:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ինչո՞ւ յեա լըռել, Բդեշխ ազնվազարմ:

Բ Գ Ե Շ Խ

Սուրհանդակին

Պզատ Լս, անցիր: Յեւ զսւր, ծառաներ:

Բոլոր զնում եմ

6

Բ Գ Ե Շ Խ

Յեթե նա իրոր վարովել և այդպես...

Ո Հ Ա Ն

Ո՞վ:

Բ Գ Ե Շ Խ

Դավիթը ձեր:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Նա պետք և մեռնի...

Ո Հ Ա Ն

Ի՞նչ, ասիր, խենթ...

Բ Գ Ե Շ Խ

Կայ...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Նա պետք և մեռնի... Ինձ հետ կատակե՞լ...

Հայրիկ, ուղարկիր խկույն սուրհանդակ,

Թող Դավթին հայտնե զայրույթն իմ անհուն և տա զզուշացում—

Թե չի խափանի Խաթունի սերը,

Իմ արգար նետով նա պետք և մեռնի:

Ո Հ Ա Ն

Ձեմ կարող լըսել զավագիր խոսքեր: Մընացեք բարով:

Բ Գ Ե Շ Խ

Կայ, Ոհան իշխան:

11
3965

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Լըսեց՞ք, հայրիկ, իմ խոսքը վերջին:

Բ Գ Ե Շ Խ

Քեզ, անուշ աղջիկ, հատուցում կըտամ, անցիր դու պալատ:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Դավաճան, և նենգ...

Գնում ե

7

Բ Գ Ե Շ Խ

Խափարը նըստեց ճերմակ վարսերիս:
Մըհերը, հիշիր, ինքնիշխան եր միշտ.—
Որենքը կախած իր թըրի ծայրից՝
Ջարկում եր մեկ աջ, մեկ ել ձախ—հանկարծ:
Թագավոր չեղած՝ թագ ուներ զըլխին,
Յեվ մեզ որ-արև չըտվեց յերբեք:
Հիմա ել՝ տըզան... Սրի հասկացրու այդ տըհաս Դավթին,
Վոր ուժը միայն չի կարող յերբեք քեզ իշխան պահել:
Այլ թե այդ ուժը, վոր աստված ե տըվել,
Խելքի հետ մի տեղ քեզ մարդ ե կոչել:
Խանդուտի հայրը ունի շատ մեծ խելք,
Ունի և շատ դանձ, ընդարձակ հողեր,
Ունի և ճորտեր, վաճառականներ,
Պակաս ե միայն մի Դավիթ այսօր,
Վոր չար կայսերը «համեցեք» անե...
Նորից հավաքե արհեստավորներ, վաճառականներ,
Բյուր բազում ճորտեր, —ճանապարհ, կամուրջ,
Կալվածք ու յերկիր, որենք, տերուլյուն կայսերը հանձնե,
Յեվ ինքը անարգ՝ զահերեց կոչվի, կամ թագ ընդունի:
Այն ժամ, իմ Ոհան, զընա և լիզիր փեշերը նըրա:
Ո՛, վոչ, ով իշխան, Գոհարն արդար ե:
Հարկավ, չեմ ասում, թե Դավիթը ձեր պետք ե վոր մեռնի,

Բայց եւ չըսկտի Բըդեշիս իշխանի ազնվազարմ զըստերն
Անարդե, թողնե:

Ո Հ Ա Ն

Դեռ թող մի տեսնենք: Առյուծ Մըհերի անունը վոր ասա,
Դավիթը իսկույն մի դառ կըղառնա... Կասեմ յես նըրան,
Վոր հոր՝ Մըհերի վոսկորները սուրբ, հանգիստ չեն մընա,
Յեթե իր արդան իսպառ շընանա...
Շընացում, հարկավ, յերբ վանքի բակում ուխտում ե պսակվել,
Յեւ հենց նույն սըր ուրիշին սիրում...

Բ Դ Ե Շ Խ

Հայտնիւր այդ նըրան: Վանահորն ասա, թող ազդե վըրան:
Բայց յեթե իրոր արդան զըրկել ե, համբուրել կույսին...
Ո՛ր, տեր իմ աստված, խայտառակ մարդուն փեսացո՛ւ անել:

Ո Հ Ա Ն

Այդ մեկը վոչինչ...

Բ Դ Ե Շ Խ

Կարծես ինչ-վոր բան հարկածեց գլխին

Իսկ Մելիքը մեր... Ձե՞ վոր փահեան հսկաներն իրա
Կերթան, կըստամեն, վոր Դավիթը զիժ քաղաք ե մըտել,
Խաթունի հետը նըշանդրեք սարքել...
Ասել ե՛ խըռով նախարարները խընամբ՞ դարձան...

Ո Հ Ա Ն

Ճիշտ վոր այդպես ե: Կարող ե կարծել՝ դավադիր մըտքով...

Բ Դ Ե Շ Խ

Աստված վոչ անի, վոր այդպես կարծի:
Ձե, Ոհան, լըսիր: Դավիթը կարծեմ դեռ Սասուն կըղա:
Ընդունիր նըրան, ե խոսիր հետը վորպես հարազատ:
Մելիքն այս անգամ հարկի յե գալու,
Յեթե չի խորհել մեծ կըսկի զիմել:
Հարկավ՝ ճարպիկ մարդ կուղարկի Սասուն:

Իսկ դու մի խելոք, մի նուրբ դավ հյուսիր,
Յեւ նըբա ձեռքը հանձնիր ձեր Դավթին:

Ո Հ Ա Ն

Մըտածիր, Բըղեշ, վայել չե մի հոր, թեկուզ հորեղբոր,
Հարազատ վորդուն թակարդը գըցել:

Բ Գ Ե Շ Խ

Իսկ մի խենթ վորդու վայել է, արգյոք,
Մի ամբողջ յերկիր ավերակ դարձնել:

Ո Հ Ա Ն

Ներիր, մեծ իշխան, նըման մըտքերով
Հոգիս կաշկանդել չեմ կարող յերեք:

Բ Գ Ե Շ Խ

Թույլ տուր ճանաչել—սեւ հեռ գործ ունեմ:
Դա՛միս ե անծանոթ քո հողուն, Ոհան, թե՛ հոգիդ՝ դավին...
Յեթե դու գըրկվես Մելիքի հուժկու հըսկող բազուկից,—
Ավեր չի՞ դառնա յերկրի, Ոհան:
Յեւ կամ Խաթունի հայրը կպահե՞
Թե քեզ ե թե ինձ իր յերկրի իշխան:

Ո Հ Ա Ն

Գիտեմ ամենը, դահերեց ազնիւ,
Իմաստությունըս հասնում ե դըբան:
Հարկավ, այդ բանին չի հասնի յերեք:
Ինչպէս իմ ձեռքով Մըհերի վորդուն
Հանձնեմ Մելիքին, վոր նա ել... ս, տեր...

Բ Գ Ե Շ Խ

Ուրեմըն, իմ դեմ ե վորդայթ լարված...
Դավթիթը առնի Խանդուտ Խաթունին,
Յեւ նըբա հայրը իր փեսի բազկով կայսերը բերի,
Յեւ դճւ, ով Ոհան, հարեա նըժարի այն ծանր թեին,
Ու ինձ վտաքի տակ ճգմեք ինչ մոխր... Ա՛յս ե ուղածդ:

Ո Վ Ս Ն

Ի՞նչ պատիժ, աստված, իմ զըլխին բերիր:

Բ Գ Ե Շ Խ

Ուրեմըն ջանա, վոր այդ պատիժը իսպառ վերանա...
Հըսկում կըզընեմ յես քո ծեր զըլխին... Չըվըրպես, Ոհան...
Կըրկնում եմ նորից,—մի խելոք դավով,
Մի նուրբ հյուսվածքով առիթ վորոնիր,
Յեկ պատեն ժամին Դավիթը հանձնիր Մըսրա Մեկիքին...
Այսպես ուրեմըն, ավարտենք խոսել...
Լալ ե թանգարժեք մի ալ կորցընել,
Քան պըզտոր ճահճում խեղամահ լինել...
Գընանք ճաշելու:

Ո Վ Ս Ն

Ախորժակ մնաց, վոր ճաշենք, իշխան:

Բ Գ Ե Շ Խ

Գինով կըբացվի:

Յեկ դավը մսին, ասես քույս դած
Բայեց հաստաուն բղեխը ճաշ...
Իսկ Ոհանը մեր մռայլ ու դանդաղ—
վոր քասով զարկի քասին Բղեխի...

Վ Ա Ր Ա Գ Ո Ի Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՅԵՐՐՈՐԴ

ՍԱՍՈՒՆ, ՈՂԱՆ ԻՇԽԱՆԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋ

Է

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Ահա և հասանք:

Պ. Ա. Տ. Ր. Ի. Կ.

Կանչիր Ոհանյին, տեսնենք ի՞նչ կասի:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Ծեծույ՛մ ե դուռը

Ծառաներ, բացե՛ք:

Ի. Շ. Խ. Ա. Ն. Ո. Ի. Հ. Ի.

Պատգամբից

Նորից տուն յեկար:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Յեղ հյուր եմ բերել:

Ի. Շ. Խ. Ա. Ն. Ո. Ի. Հ. Ի.

Տանտերը չըկա:

Գ Ա Վ Ի Թ

Հնդուներ հյուրին, տանտերը կըզա:

Ի Շ Խ Ա Ն Ո Ի Հ Ի

Յես այդ իշխանին տուն չեմ ընդունի:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ասացի յես քեզ, միամիտ արդա:

Գ Ա Վ Ի Թ

Տիրուհի, իզուր անպատիվ արիւր թե ինձ, թե հյուրիս:
Հորեղբայրը վոր դա, քեզ կընախատե:

Ի Շ Խ Ա Ն Ո Ի Հ Ի

Թող ինձ նախատե:

Փակում ե դուր

2

Պ Ա Տ Ր Ի Կ

Հասկացա՞ր հիմա:

Գ Ա Վ Ի Թ

Ահա և վերդոն:

Վ Ե Ր Գ Ո

Ա՛... յեկա՞ր, Դավիթ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Բարով քեզ, իշխան:

Վ Ե Ր Գ Ո

Զարմացած

Տէր իմ արարիչ:

Ուզում ե գնալ

Գ Ա Վ Ի Թ

Կայ, իշխան Վերդո:

Վ Ե Ր Գ Ո

Թոյ ձեռքս, Դավիթ

Գ Ա Վ Ի Թ

Ինչո՞ւ յես փախչում: Ինչո՞ւ իշխանի բարեքը չառար:

Վ Ե Ր Գ Ո

Ակամա

Բարեքեղ, իշխան: Ահա Ոհաննէ, թող կանչեմ իրան:

Հեռանում ե

Պ Ա Տ Ր Ի Կ

Հորեղբայրը քո աճնպես ե սաստեղ կըտես իր մարդկանց,
Կարծես վատթար եմ, քան ռամիկ մի այր:

Գ Ա Վ Ի Թ

Դու սըրանց ներիր: Տանտերը վոր դա,
Համողված յեղիր—պատվով կընդունի:
Չէ՞ վոր Սըհերի հարկն ես դու յեկել:

3

Վ Ե Ր Գ Ո

Ահա, մեծ իշխան, քո տունը այսօր մեծ հյուր ե յեկել:

Պ Ա Տ Ր Ի Կ

Վողջույն քեղ, Ոհան:

Ո Հ Ա Ն

Վողջույն Պատրիկին

Գ Ա Վ Ի Թ

Տեսա՞ր, մեծ իշխան:

Ո Հ Ա Ն

Սակայն քո այցը, խոսվարար իշխան,
Անտեղի յե և անհանդուրժելի:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ինչո՞ւ անտեղի: Յեկել եմ սեղմեմ ձեռքըդ պատվական,
Հաշտություն խնդրեմ:

Դ Ա Վ Ի Թ

Ինչո՞ւ դու խնդրես: Այդ յես եմ արել:

Ո Հ Ա Ն

Այդպես իրավունք յես քեզ չեմ տրվել:

Վ Ե Ր Դ Ո

Քեզ մի քիչ մեղմիր, սիրելի Ոհան:

Դ Ա Վ Ի Թ

Լըսիր, հորեղբայր, ներիր իմ մեղքը, թե մեղք եմ գործել:
Ծեծիր, վրոճնդիր, բայց իմ տուն բերած հյուրին անպատվե՛լ...
Մի հյուր, վոր նույնքան իրավունք ունի
Հանդուցյալ իմ հոր տունը այցելել, վորքան ունես դու:
Դե, ներիր, գիտեմ, դժւ յես դուցադնի յեղբայրն հարազատ...
Բայց չե՞ վոր սա ել յեղբայր եր նրան:
Չե՞ վոր աղոթքի նույն բառը նրանք
Ուղղել են հավերժ միևնույն աստծուն...

Ո Հ Ա Ն

Թե այդպես սըրտով կուղե մեզ լինել զինակից յեղբայր,
Թող նախ և առաջ հպատակության և խոնարհության
Իր խոսքը ասե Բըդեշխ իշխանին:

Պ Ա Տ Ր Ի Կ

Չեր անի այդպես Մըհերը յերբեք:

Ո Հ Ա Ն

Տեսա՞ր խարդախին:

Վ Ե Ր Գ Ո

Մեղմիր քեզ, Ոհան:

Ո Հ Ա Ն

Ապա ինչո՞ւ յես յերկիրքս յեկել:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ասացի՛ յեկա հաշտության համար:

Ո Հ Ա Ն

Նենդ ե քո միտքը, յես այդ լավ գիտեմ:

Յեկել ես խարդախ մաքսով կախարդես Մըհերի վարդուն:

Դ Ա Վ Ի Թ

Վնչ, վնչ, հորեղբայր:

Ո Հ Ա Ն

Դու ձենըդ կըտրիր:

Պ Ա Տ Ր Ի Կ

Արդ՝ ներեցեք ինձ, հրամեշտ եմ խընդրում:

Ո Հ Ա Ն

Բեզ այդպես վոչ վոք չի թողնի մեկնել:

Պ Ա Տ Ր Ի Կ

Ապա ի՞նչ կուզես:

Ո Հ Ա Ն

Վոր պատանդ մընաս:

Պարզում ե քուրդ

Պ Ա Տ Ր Ի Կ

Խոսենք թըրերով:

Պարզում ե քուրդ

Դ Ա Վ Ի Թ

Պայքեք, անմխտնեք: Ամոթ ձեզ, ամոթ, հաղար նախատինք:
Ալսիր, հորեղբայր,—եւ պետք չե յերբեք հյուերիւ ընդունել:
Տուր ինձ զենքերըս,—եւ թուր, եւ զրահ,
Յեւ ինքնուրաք իմ հորից ժառանգած:

Ո Հ Ա Ն

Հայրըդ չի թողել վոչ զենք, վոչ զրահ:
Յեւ վոչ եւ ինքնուրաք, վոր զու ժառանգես:

Պ Ա Տ Ր Ի Կ

Սհւտ ե, սհւտ:

Դ Ա Վ Ի Թ

Իշխան...
Անուշ հորեղբայր, յես զիտեմ շատ քաջ,
Վոր հենց այսոր են վանքից ուղարկել եւ զենք, եւ զրահ,
Յեւ թուր Կայծակին:
Վերջապէս ահա Պատրիկ իշխանը,
Վոր հաստատ զիտե, թե ինչ եւ թողել իմ հայրն ինձ համար:

Պ Ա Տ Ր Ի Կ

Կըթվեմ նորից...

Ո Հ Ա Ն

Յեւ ասում ես թե՛ յեկել ես միայն հաշտութիւն համար:

Վերգոյի՛ն

Շուտ կանչիր, Վերգո, մի տառնյակ զինվոր:

Դ Ա Վ Ի Թ

Պայ, վախկոտ Վերգո:

Վ Ն Ր Դ Ո

Վայ, վեզրս կոտրեց:

Դ. Ս. Վ. Ի. Թ.

Լըսեցիք, Ոհան: Հաճիր զենքերը իմ ձեռքը հանձնել:

Ո Հ. Ս. Ն.

Ձուռնեմ յես վոչինչ:

Դ. Ս. Վ. Ի. Թ.

Ոձիկից բռնած

Կըտամս ինձ, թե վոչ:

Ո Հ. Ս. Ն.

Մարդիկ, հէյ, մարդիկ... ոգնության հասեք:

4

Ի Ծ Խ Ս. Ն. Ո Ի Հ Ի

Պատգամբից

Այս լճնչ եմ տեսնում... Գետինը մըտնես, անառակ լակոտ:
Ինչո՞ւ յես խեղդում հորըդ հարազատ:

Դ. Ս. Վ. Ի. Թ.

Տիրուհի անուշ, դնա և իսկույն հանիր զենքերը,
Վոր հայրս և թողել: Բոլորը հանիր,—
Յեկ զենք, և զըրահ, և թուրը, անշուշտ,
Այլ և քուռակը—Կապույտ Զալալին:

Ի Ծ Խ Ս. Ն. Ո Ի Հ Ի

Գըլխովդ անցնեն և զենք, և զըրահ:
Կարծում ես, Մհերն ես, վոր քեզ պատշաճեն:
Հաղար անգամ եմ ասել Ոհանին,
Վոր նա չըբերի մեզ մոտ վոչ մի բան:
Ահա այնտեղ ե—արծաթ արկղում,—
Վահանըդ ժանգոտ և թուր Կայծակին,
Վերցրու բոլորը և կորիր անհետ:

Դ Ա Վ Ի Թ

Կեցցես, տիրուհի

Վազում ե դուստ

5

Ո Հ Ա Ն

Ինչո՞ւ ասացիր տեղը ղենքերի:

Ի Շ Խ Ա Ն Ո Ի Հ Ի

Զի ել ամաչում: Հովիվն ի՞նչ յեղավ,
Վոր ծուռնիկ ես խոնարհեի ստրուկի նրման:

Ո Հ Ա Ն

Հովիվ ե, հովիվ, բայց ուշժով՝ Մըհեր...

6

Դ Ա Վ Ի Թ

Ահա բոլորը: Յես չեյի տեսել անգամ յերազում
Այսպիսի մի թուր, վոր թեթեւ լինի և այսքան հատու...
Հիմա արդեն ինձ ըզգում եմ և մեծ, և այր մի հասուն,
Վոր անարդարին կարող ե պատժել:

Ո Հ Ա Ն

Խորամանկ

Որհնանք քեզ, դավակ, անուշ իմ Դավիթ:
Զեյի ցանկանում, վոր մի պատանի,
Յերը դեռ չի հասել խելքով, իմաստով,
Առնի և հաղնի այս թուր Կայծակին,
Յեվ զըրահները՝ այս հույժ ռազմական:

Դ Ա Վ Ի Թ

Հեզնուրեն

Շնորհակալ եմ, հայր, խնամքիդ համար:

Վ Ե Ր Գ ՈՒ

Այսպես լալ յեղալ:

Ո Հ Ա Ն

Արդ՝ թույլ տուր, դավակ, վսր հաղցնեմ յես քեզ:

Հանդիսավոր հագցնում ե

Նախ այս շապիկը—ծանրը դրահապատ,

Վսր հայրդ գեներից առաջ եր հաղնում:

Հետո պարանը, վսր մարդիկ բռնես, կամ ձի բաղմակա՞ն:

Այս փող պըղլորին, վսր մարտի կանչես:

Հետո՝ նետ, աղեզ, և վահանն արույր,

Յեկ զուրդն այս ծանրը...

Վերջապես հատուկ այս թուր կայծակին:

Գ Ա Վ Ի Թ

Նըման եմ, արդյոք, դուլցաղն Մըհերին:

Պ Ա Տ Ր Ի Կ

Իսկ և իսկ հայրըդ հարություն առալ:

Ո Հ Ա Ն

Ամենից վերջը դու պետք ե հաղնես քո աջ բուլթ մատին

Մատանին այս մեծ, և դուլցաղնական:

Գ Ա Վ Ի Թ

Թող այդ մատանին մեծ, դուլցաղնական

Դեռ մընա քեզ մոտ: Վհ... քեզ մոտ, իշխան:

Առնում ե ցրանից յեկ ցալիս Պասրիկին

Ո Հ Ա Ն

Այդ խարդախ մարդուն վռնդիր հիմա:

Գ Ա Վ Ի Թ

Ամսթ, հորեղբայր: Մթթե հազըրըրը դրահներն այս կայծող:

Վեր անմեղ մարդկանց այդպես անպատվեմ:

Իսկ այժմ ապա—վերտեղ և Կապույտ քուռակը Ջալալ:

Ո Հ Ա Ն

Հագում և

Հազը անտեղի կոկորդրա բըռնեց:

Պ Ա Տ Ր Ի Կ

Յես գիտեմ՝ ուր և քուռակըդ Ջալալ:

Գ Ա Վ Ի Թ

Դե, գընանք, իշխան:

Պնում եմ

Վ Ե Ր Գ Ո

Ի՞նչ արիր, Ոհան:

Ո Հ Ա Ն

Լըսիր ինձ, Վերդո.—Վանահայրն այստեղ—Սասուն և հիմա,

Գընա և իսկույն ուղարկիր թող վա:

Բըդեշխ իշխանից մի քաջ հարյուրյակ սպասում եմ հիմա...

Դե, տեսնենք, Պատրիկ, թե ով կըզղջա:

Վաղիր, ով Վերդո:

Վ Ե Ր Գ Ո

Թըռչում եմ, իշխան:

Պնում և արագ

7

Ո Հ Ա Ն

Մենակ

Արդեն մեծացավ Դավիթը հըզոր,

Յեվ, իրոք, նման և իսկական իր հոր...

Կատարվեց արդեն չարիքը այն մեծ,

Ինչից յես հաճախ վախենում եյի...

Այսպէս... Լաւ, այսպէս...

8

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Գալիս ե

Արարել՜չ աստված, ի՜նչ նըժույգ տեսա...

Որհնյալ ես, Մըհեր, առյուծ դուլցազուն:

Լըսիր, հորեղբայր,—յերը վոր բացվեցին դըռները զոմի,

Վոր յերեք դու ինձ ցույց չեյիր տըվել,

Մի նըժույգ կապուկտ, հրեղեն բաշով, դարձաւ դեպի ինձ:

Ականջները սուր, նիղակի նըման,

Աչքերը հուր-հուր, իմաստո՛ւն, վայլո՛ւն...

Նայեց մի վայրկյան ուղիղ աչքերիս,

Ժրպտաց մարդու պես, ու խըրխինջ հանեց...

Այնպիսի խըրխինջ, վոր կարծես իրան մի աշխարհ տըվին:

Ապա հարվածով քանդեց պողպատե իր սանձը ամուր,

Յեւ չոքեց ինձ մօտ: Չոքեց ինչպես մարդ:

Չոքեց ու լիզեց վոտներըս մեկ-մեկ,

Ասես, կարոտով, անհո՛ւն կարոտով,

Ինչպես կանեյին կորսված մի դավալ գտնելու պահին:

Ապա իր դունչը դրեց իմ կըրծքին, շորըս հոտոտեց,

Հայացքով ինձնից կարոտը առավ,

Յեւ վորպես մանուկ—թողեց, վոր շոյեմ:

Միթե, արարիչ, առավել խելոք

Մի ձի աշխարհում կարող ե լինել:

Ո Հ Ա Ն

Այդպես ե, վորդիս, իմաստուն այդ ձին:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Անհո՛ւն իմաստուն, չըտեսնված մի ձի...

Ո Հ Ա Ն

Իսկ վո՞րտեղ մընաց քո հյուրը, Դավիթ:

Դ Ա Վ Ի Թ

Նըժույզն ե թամբում:

Ո Հ Ա Ն

Ինչո՞ւ նա թամբի, մեռած չեմ դեռ յես:

Դ Ա Վ Ի Թ

Այդ մեկ ե, իշխան:

Ո Հ Ա Ն

Ինչ ասացիր... Լմի... Թող այդպես լինի...

9

Պ Ա Տ Ր Ի Կ

Գալիս ե

Պատրաստ ե արդեն Ջալալըդ Կապուլտ:
Թամբը սադափե, սանձը պողպատե,
Ասպանդակն վոսիլի, սըմբակը արծաթ:
Արի ձեզ նըստիր, տանեմ ճապաղջուր,
Հորըդ աճյունից որհնանք ընդունիր,
Վոր Թուրքը հատու, հաղթական լինի:

Դ Ա Վ Ի Թ

Գընանք, բարեկամ:

Պ Ա Տ Ր Ի Կ

Խորամակն՝ Ոհանգ

Ներիր, մեծ իշխան:

Գնում եմ

10

Ո Հ Ա Ն

Խորամանկ... Նենդ, Նենդ... Ճապաղջուր տարալ...
Համբերիր, Ոհան... Համբերիր, իշխան...

Անգուսպ ե դարձել՝ Դավիթը հիմա...

Այս գէն ել կանգնել՝ նըրա թիկունքին:

Այգպէս... Լանլ... այգպէս... Սաղայն ժամ ե, վոր յիս գիմեմ գործի...

Բըղեշիւր ասաց... Այս, արդար ե... ե ճիշտ ել ասաց...

Մեկիքի հանդեպ պատերազմ մըդեկ... Հարկալ—չենք անի...

Յեկ ինչո՞ւ կըռկել, յերբ վոր մենք խելքով ձեռք ենք բերել այն,

Ինչ վոր վայել ե մի նախարարի...

Ել ի՞նչ ես ուզում.— թա՛ղ, զա՛հ, կամ լինել աշխարհակալ մեծ...

Ո՞վ քեզ այդ կըտա...

Կամ հենց այդ ճամբին անպատիւլ հաղթված,

Մի ամբողջ յերկիր ավերակ շինել

Յեկ խալիֆաթի մութ բանտում վըտել...

Ո՛, վո՛չ... ե յերկը... Դու, համեստ Ռհան,

Թո՛ղ զառանցանքըդ ու մընա իշխան:

Բայց ահ եմ ըզգում... սարսուռ անսովոր...

Ամպերը ե՛ մութ, ե՛ սե, ե՛ մռայլ, կուտակվում են արդ...

Թե ըզգաստ լինել, թե քաջ իր տեղում—պահանջ ե որվա:

Բըղեշիւր ասաց... Այն, այգպէս ե... ե ճիշտ ե ասված...

Հէյ, Վաղան Գըղիր:

Գ Զ Ի Ր

Լըսում եմ, իշխան:

Ո Հ Ս. Ն.

Մինչ աչքըդ թարթես, հավաքիր ու բեր, ինչ վոր կըլսես,—

Քառասուն կանայք, վոր յերկանք աղան,

Քառասուն հարսներ, վոր ուզտեր բառնան,

Քառասուն աղջիկ, վոր կողինք բանան,

Քառասուն կույսեր, վոր հարեմ զընան...

Գ Զ Ի Ր

Մինչ աչքըդ թարթես, այստեղ կըլինեն:

Ո Հ Ս. Ն.

Յեկ հետս, լըսիր.—

Քառասուն գորգեր, նուրբ թելով բանված,

Քառասուն թաղիր—նուրբ բերդից քաշած,
 Քառասուն համետ—վոսկիթի մետաքս,
 Քառասուն լավ թամբ—թուրանից բերված...
 Յեւ հետո նորից հավաքիր ու բեր
 Քառասուն նրժույզ—ալեբաշ, վարժված,
 Քառասուն ջորի մարմանդում սընված,
 Քառասուն զեր եշ, զեռ տարիք չառած,
 Քառասուն ուզտ ել—մատաղ, յերկսաղատ,
 Վոր բեր նարմար ճանապարհ կրտրեն,
 Մըրա խալիֆին զոհացում անեն...
 Յուցակն ել ունես, թե ինչ մարդու մոտ՝ ինչ բան կըլդանես։

Գ Զ Ի Ր

Մինչեւ աչք թարթես, ինչ վոր ասացիր—այտեղ կըտեսնես։
 Վազում եւ արագ

Ո Հ Ա Ն

Այս մեկը այսպես։

11

Թ Ո Ր Ո Ս

Մի քանի սեպուհ գալիս են իր հետ

Կանչել էս, Ոհան։

Ո Հ Ա Ն

Ճիշտ ժամին յեկար։ Նըստիր մի, իշխան, և զնւր, սեպուհներ։

Թ Ո Ր Ո Ս

Ինչէ՞ր եմ լըսում։

Ո Հ Ա Ն

Սե խաւարն յեկավ, նըստեց մեր յերկրին։

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Վախեցնում ես մեզ։

Ո Հ Ա Ն

Արսած կըլինեք, վոր Դավիթը մեր
Մելիքի հանդեպ ինչէր ե արել:

Ս Ե Պ Ո Ւ Հ Ն Ե Ր

Արսել ենք, իշխան:

Ո Հ Ա Ն

Այլ ե քաղաքում խանդուտի հետը նըշանակել ե նա:
Յեւ լըբի հայրը, ոգտվելով դեպքից, քարոզ ե կարդում,
Վոր ապստամբությամբ յեկնեն մեծ կովը խալիֆի հանդեպ:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Պետք ե մեռցընել այդպիսի մարդուն:

Թ Ո Ր Ո Ս

Համբերիր, տըղա:

Ո Հ Ա Ն

Դավիթը նըբրան արդար ե կարծում,
Յեւ իր թևի տակ պահում, պահպանում:
Հենց հիմա առավ Մըհերի թողած ե ղենք, ե զըբահ,
Յեւ Ջալալ մեր ձին ու խենթ Դավիթին ճապաղջուր տալով:
Արդ՝ Բըղեշխն յերեկ մի խորհուրդ տըվավ,—
Մի շատ իմաստուն ե խորհուրդ արդար:

Թ Ո Ր Ո Ս

Ինչպիսի՞ խորհուրդ:

Ո Հ Ա Ն

Հարկավ, կուղենաք, վոր վըտանդը այս խապառ վերանա...

Բ Ո Ղ Ո Ր Ը

Մնշուշտ կուղենանք:

Ո չ Ա Ն

Այդ դեպքում միայն մընում ե մի բան,—
Մի կերպ շրջթայել Դավթին, և այն նեռ մարդուն դավաճան,
Յեւ հանձնել ձեռքը մեր տեր Մելիքի...
Դուք մի շրվիթիվեք: Մելիքի կողմից
Այսոր մինչ կեսոր մարդիկ են գալու,
Վոր հարկերը վողջ և բաղում պարզե
Հատուցման համար առնեն ու տանեն:
Յեւ այս ամենը ապահով կարգով անելու համար
Բըզեշի յերկրից հենց այս լուռ պահին
Հարյուրյակ մի քաջ կըտրիճ մարտիկներ մեղ մոտ են գալիս:
Դավթի շր հենց վոր յերևա այստեղ,
Յես հարմար պահին կառնեմ իրենից իր Թուր Կայծակին,
Յեւ վորպես մի հայր մի համբույր կըտամ ճիշտ իր ճակատին,
Հենց նույն այդ պահին շրջթայեք նըրան...

Թ Ո Ր ՈՍ

Նըրան և Պատրիկ իշխան կոչվածին:

Ա. Ս Ե Պ ՈՒ չ

Վըտանդ եմ տեսնում յես այդ մութ զործում:

Բ. Ս Ե Պ ՈՒ չ

Յես ել եմ տեսնում:

Ո չ Ա Ն

Վըտանդ չի լինի, Թե կըտրիճ եք դուք, և հայրենասեր:
Հայր սուրբն ել յեկավ:

12

Բ ՈՒ ՈՐ Ը

Աստված ողնական:

Վ Ա Ն Ա չ Ա Յ Բ

Աստված պահապան:

Ո Վ Ս Ն

Դավիթը դրժեկ և թե իր հոր տըված
Յեվ թե վանքումը յերեկ իր հայտնած ուխտը սրբազան,
Յեվ ինչ շուն անարդ սիրել Սաթուհին:

Վ Ս Ն Ս Վ Յ Ր

Մեծ մեղք և գործել:

Ո Վ Ս Ն

Սաստիւր ալդ տըղին վանքով ու խաչով,
Տիրոջ անունով, ավետարանով,
Վոր մեղ աներես, անպատիվ չանի,
Յեվ յերկրի գըլխին փորձանք չըրերի:
Լսում էք—փողեր՝ զիլ, արքայական...
Ո՛ր, հիսուս-քրիստոս, սգնական յեղիր...
Գընացեք, իշխան, և դուք, սեպուհներ,
Առաջնորդեցեք մեր մեծ հյուրերին
Յեվ խոնարհ ու հեղ հարկիս տակ լերեր:
Թե հարցնեն՝ «Ո՛ւր և իշխանը յերկրի»,
Ասացեք—պարզե, նըվերներ բազում
Պատրաստում և ձեզ, և տիրոջ համար:

Իշխան Թորոսը յեվ սեպուհներ գնում են

Ո՛ր, մեծ արարիչ, աղոթքը լեզվիս յես քեզ եմ գիմում:

13

Գ Ջ Ի Ր

Դրսում աղաղակող ամբոխին

Որենքն և ալդպես... Դընա իշխանին զանդատվիր, և տես:

Ո Վ Ս Ն

Ի՞նչ եք աղմըկում, ռամիկներ տըխմար,
Ինչ վոր ասում էրը Վազան,
Կամքն և աստըծու—սահմանված հավերժ...

Ամբոխը աղմուկով խուժում է ներս

Ա. Ռ. Ս. Մ Ի Կ

Լըսիր, մեծ իշխան,—զիտեմ յերկընքում ունեմ յեսմիտեր,
Մի տեր ել յերկրում: Բայց զոլղըս միակ, վոր առաք ինձնից
Յես եմ նըրան տեր:

Կ Ի Ն

Յեկ հարսըս չըքնաղ, վոր հինդ որ ե դեռ արդիս ե սիրել:

Ա. Ղ. Ջ Ի Կ

Յեկ իմ թաղիքը, վոր հինդ զարուհներ ծաղկազարդել եմ
Իմ վեսիս համար...

Կ Ո Ի Յ Բ Ը

Ես ի՞նչ ես առնում, այ Ոհան իշխան,
Մի հատ եշ ունեմ, վոր հանդից բռնած հարկ ելքերում քիչ.—
Քեզ ու Մելիքին: Ինչո՞ւ յես առնում, ինձ թողնում նորար:

Բ. Ռ. Ս. Մ Ի Կ

Այս զոմը լիքն ե սև նըթույգներով,
Ինչո՞ւ յես ինձնից միակըս առնում...

Բ Ո Լ Ո Բ Ը

Ինչո՞ւ յես առնում:

Ո Հ Ա Ն

Ասես վորոսաց

Լըսում եք փողեր, զի՛լ, արքայակա՛ն...
Գալիս ե Բաղին, ամսթ ե, ամսթ...

Բ Ո Լ Ո Բ Ը

Ինչո՞ւ յես ամսթ...

Կ Ո Ի Յ Բ Ը

Ել վոչինչ չեք տա, հերի՛ք ե, իշխան:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Եւ վռչինչ չենք տա...

Դ Զ Ի Ր

Ձեռ տա կամովին, աչքըդ կհանեմ,—
Այս միակ աչքըդ և կառնեմ նորից:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Խըլեզ... Ճըպնու... Հն... Ռամիկ ժողովուրդ,
Սն յե առաջին թըշնամիդ անհաշտ: Կըտըրիք իր լեզուն:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Բըռնեք զազանին:

Դ Զ Ի Ր

Մտակը պարզած

Հեռու, անիծյալ:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Բըռնենք, ուամիկներ:

Ո Հ Ա Ն

Թուրք հացեկով

Կացեք, անմիտներ:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Թուրքդ, ով իշխան, կըփշրենք իսկույն, թե մեզ մոտենաս:
Բըռնիր, պատանի, Վաղանին բռնեք... Հն, հն, հն, բռնեք...

ՄԻ Ք Ա Ն Ի Ս Ը

Բըռնենք, ուամիկներ...

Դ Զ Ի Ր

Մտակում ե մեկին

Դե, նո... դե, բըռնիր...

Բ Ո Ւ Ո Ր Ը

Բըռնէք զազանին...

Բռնում են Գգիին, Մի վառկյանում Գգիւր խաղում ե ողում

Ո Հ Ս. Ն

Հայր սուրբ, համոզիր քարոզով, խաչով, ինչո՞ւ յես լըռում:

Վ. Ս. Ն. Ս. Հ Ս. Յ Ր

ձոնելով խաչը

Թողէք այս մարդուն հանուն աստըծո:

Ռամիկները վողջ քարացած, խռնաբն
նայում են խաչին ու հեհեհ Բաշվում:
Գգիւր գեհնին սողում ե զգույժ

Ռ. Ս. Ս. Ի Կ. Ն. Ե Ր

Աստված ոգնական...

Վ. Ս. Ն. Ս. Հ Ս. Յ Ր

Աստված պահապան, զառնէր իմ հոտի:

Որենք կա վերուստ, վար մի իշխանի

Խոնարհվեք վաքքով և ձեր սուրբ տուրքով:

Իսկ դուք ուղղում եք ճարպիկ այս մարդուն, աստըծո զառին

Հոշոտել, լափել, ինչ քաղցած դայիներ...

Աստված դատավոր յերկնի իր զահից

Դարձավ ահամա վրկա ձեր վաքքին...

Գընացեք իսկուհն, և մեծ իշխանի

Արեի համար ազոթեք խոնարհ...

14

Բաղին, Կողբաղին իրանց մարդկանցով խոսում են հետ

Ո Հ Ս. Ն

Դալուստը բարի, ի՞նչ հըզուր Բաղի:

Նույնպես և քոնը, ո՞ր մեծ Կողբաղի:

Բ Ա Պ Ի

Դավիթը չըկա:

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Բ

Դավիթը չըկա:

Բ Ա Պ Ի

Ափսոս վոր չըկա:

Կ Ո Ջ Բ Ա Պ Ի

Հարկավ—շատ ափսոս:

Բ Ա Պ Ի

Արդ՝ լըսեք հրաման.

Կազում ե

«Ի տույժ այն անարդ և հույժ զավաճան արարքի Դավթի,
Վերով հանդըզնել, ծեծել և զորքիս, և զավել կյանքիս,
Հրաման եմ տալիս.—

Կալանքի առնել Դավիթը ձեր չար,
Յեւ պողպատ շղթայով կապել—կապկըպել, իմ գուռը բերել:
Հետո մի հարուստ հայոց մեծ իշխան պատանդ ուղարկել,
Վոր չար արարքի պատեն առիթին դրուելը կըտրեմ:

Հետո ժամկետից յոթ տարի առաջ
Հարկեր հավաքել, հենց այսօր հանձնել,

Բոլորն ել վտակով—հնչուն ու կլոր:

Հետո նըժույզներ, յերկսապատ ուղտեր, ջորի և եշեր,

Այլև թանգարժեք նըլերներ բազում

Հանձնել զորավար Բազուն, Կողբադուն՝ վորպես հատուցում:

Կ Ո Ի Յ Բ Է

ԻՅԳԳ ԻԵԵԳ

Քզգում եմ կըռիվ, արյուն պիտ լինի:

Կ Ո Ջ Բ Ա Պ Ի

Դեռ ձեռն չհանել...

Բ Ա Պ Ի

«Թե չեք կատարի հրամաննս արդար,
Կտոնեմ բյուրավոր զորքեր միւրուքով,
Կտամ, կալերեմ Սասունը իսպառ»:
Ստորագրելովս ի և կընքովս պատշաճ
Մըսրա Մելիքի կընիք մեծ աւոյ:
Իսկ հիմա թողեք, վոր բաղմեմ թախտին ու հանգիստ առնեմ:

Ն Ո Ջ Բ Ա Պ Ի

Յես ել շունչ առնեմ:

Ո Հ Ա Ն

Ծառաներ, կընիկ, մի սառ ջուր բերեք:

Բ Ա Պ Ի

Միայն սառը ջուր:

Ո Հ Ա Ն

Ձըթողիք ասեմ— և զինի անուշ: Բերեք, ծառաներ:
Իսկ այժմ թողեք, յես անցնեմ դործի:
Ձեր սուրբ հրամանում հիշված տուրքերը, և պարզե բաղում,—
Պատրաստ են արդեն: Հէյ, Վաղան Գըզիւր, շուտ վազիր ու բեր
Սրդեն պատրաստած վոսկու մի տոպրակ:

Պ Ջ Ի Ր

Վազեմ ու բերեմ:

Ո Հ Ա Ն

Դու ել, այ ծառա, սնդուկից հանիր ամանը այն խոր,
Վոր վոսկին չափենք:

Պ Ջ Ի Ր

Բերում ե

Ահա տոպրակը:

Ո Հ Ա Ն

Մի լավ նայեցեք, վոսկին քննեցեք,—հնչուն է, կլոթ:

Բ Ա Գ Ի

Լավ է, և վալլուն: Ասես յերկնքի վոսկի աստղիկներ:

Ծ Ա Ռ Ա

Այս ել ամանը, և մեծ է, և խոր:

Ո Հ Ա Ն

Չափում է

Այս մեկ, այս յերկն, այս յերեք, այս չորս:

15

Գ Ա Վ Ի Ռ

Դրսից

Հեյ, ձիապահներ, մեր դոմը բացեք,
Զաւալիս համար լավ չամիչ բերեք....

Ռ Ա Մ Ի Կ Ն Ե Ր

Ուրախ վազում են դուրս

Դավիթը յեկավ:

Ռ Ռ Ր Ռ Ս

Դավիթը յեկավ:

Կ Ռ Զ Բ Ա Գ Ի

Ճիշտ նա՞ յե, յեկավ:

Իրաւնցում

Ո Հ Ա Ն

Դուք մի վախենաք: Սեպուհներ, յեկեք,
Տոպրակը ծածկեք, և վոչ վոք նըրան վոչ մի խոսք չասի:

Մ Ե Կ Ը

Ի՞ր ձին թլուալ գոմ:

Մ Ե Ռ Ի Ս Ը

Դավիթն էլ մեջքին:

Ռ Հ Ա Ն

Հէյ Թորոս իշխան:

Թ Ռ Բ Ռ Ս

Այստեղ եմ, այստեղ:

Ռ Հ Ա Ն

Իսկույն պատրաստիր, ինչ քեզ ասացիր:

Թ Ռ Բ Ռ Ս

Պատրաստ ենք, պատրաստ:

Դ Ա Ա Ի Թ

Դավիս և Երսու Բոլոր ռամիկները իր հետ

Այս ինչ մարդիկ են հավաքվել մեզ մոտ.
Բյուրավոր հեծյալ մարտի պատրաստված...
Հարսանիք ունեք, թե՞ թաղում հարուստ,
Թե՞ կըլնիլ ունեք, մարտի յեք պատրաստ:

Ռ Հ Ա Ն

Հյուրեր են, Դավիթ, մեզ մոտ են յեկել:

Պ Ա Տ Բ Ի Կ

Հեզնաճոյ

Մըսրա Մելիքից բարե են բերել...

Դ Ա Ա Ի Թ

Ա՛ Բաղի, Կողբաղի, բարով եք յեկել, թե հյուր եք՝ իրոք:

Ոհաննիս՝ հեզնաճոյ

Հարկավ, հյուընկալ դու այր հս, իշխան:

Քաղուն

Նոր բան եք կըբերին պահանջում մեզինից:

Ա Հ Ա Ն

Վոչ մի նոր բանի ել պահանջ չունեն:

Միայն մի քանի վոսկիլ յեմ տալիս ի տույժ այն բանի,
Վոր դու մեր վանքում, չարացած պահիդ, ծեծել ես նըբանց:

Դ Ա Վ Ի Թ

Դե լավ, տուր տեսնեմ, յես ել քեզանից մի բան ստիցեմ:

Ա Հ Ա Ն

Տեսաք, վոր ասի՝ խելոք ե հիմա:

Պ Ա Տ Ր Ի Ա

Յեկ հասուն տըղա...

Ա Հ Ա Ն

Հարկավ՝ ե հասուն: Հա, ինչքան տըվի:

Դ Զ Ի Ր

Չորս աման տըվի:

Ա Հ Ա Ն

Ծիշտ, չորսը տըվի

Չափում ե

Այս ել հինդ—այս վեց... Այս ել յոթ, այս ութ...

Դ Ա Վ Ի Թ

Արդեն իմացա, ինչպես են չափում:

Տուր ինձ, հորեղբայր, իմ ձեռքով տույժըս չափեմ ու հանձնեմ:

Ո Հ Ա Ն

Այ խելոք մի այլ:

Դ Ա Վ Ի Թ

Թող նորից չափեմ:

Չափված վոսկին հետ ե լցնում ու ամանով ողբ չափում

Այս մեկ, այս յերկու, այս յերեք, այս չորս...

Բ Ա Դ Ի

Այդ քննչ ես չափում:

Դ Ա Վ Ի Թ

Չոռ ու ցնով, արխամար: Այս ել քեզ հինգը...

Ամանը զարկում ե հիտս նրա գլխին

Բ Ո Լ Ո Ր Ը

Դավիթ, քննչ արիւր... քննչ արիւր, Դավիթ:

Իբար եմ անցնում: Բաղին շում ե, գետինը փռվել,

Կողբաղին փախել — մի անկյուն՝ րազնվել:

Ո Հ Ա Ն

Ի՞նչ յեղավ քեզ հետ, մեծաշուք Բաղի:

Թ Ո Ր Ո Ս

Մարդուն ըստանել...

Ա. Ս Ե Պ Ո Ի Հ

Ուշքն ե դնացել:

Բ. Ս Ե Պ Ո Ի Հ

Թողեք, վոր շքնչի:

Չ Ա Յ Ն Ե Ր

— Ջուր բերեք, շուտ, ջուր...

— Ուշքի յե գալիս...

— Կամաց, խոսում ե...

— Լըսենք մի տեսնենք:

Բ Ա Վ Ի

Վիզը օտարում ե

Ի՞մ վիզը ծըռվեց

Ծիծաղում ե

Թ Ո Ր Ո Ս

Այդ լավ քան չեղավ:

Դ Ա Վ Ի Թ

Այդ վիզը ընդմիջտ ծըռված կըմնա:

Ծիծաղ ամբոխում

Ե Ո Ւ Յ Ր Ը

Դավիթ, վոր այդպես զըբահ ես հաղեւ,

Քո հոր՝ Սըհերի սուր թուրը կապեւ—

Ասա, վոր հետ տան իմ եշը միակ,

Վոր առեւ, կապեւ, քու տույժի համար տուգանք են հաշվել:

Ռ Ա Ս Ի Կ Ն Ն Ր

— Յեւ իմը...

— Ի՞նչ եւ...

Ս. Կ Ի Ն

Յեւ իմ աղջիկը, վոր հոր ե ծաղկում...

Բ. Կ Ի Ն

Յեւ իմը, Դավիթ...

Դ. Կ Ի Ն

Յեւ իմ հարսը, Դավիթ, վոր հինգ ուր ե դեռ՝ տըղես ե սիրել...

Դ Ա Վ Ի Թ

Աստված իմ, աստված...

Ս. Վ. Զ Ի Կ Ն Ն Ր

— Յեւ իմ գորգն ընտիր, փեսացուիս նվեր:

— Յեւ իմը, Դավիթ:

Բ Ո Լ Ո Ր Ը

Ասա, թող հետ տան:

Ռ Ս Մ Ի Կ

Յեւ իմ նըժույզը սեահեր բաշով...

Դ Ս Վ Ի Թ

Նըժոհւյզ ել առան...

Գ Ռ Ի Ս Ա Ն

Իմն ել են առել...

Շ Ա Տ Ե Ր Ը

Մերն ել են առել...

Հեզգհեհե անում են ձայներ, ասես մի հողմ է, վառ բռնեց այնտեղ

Բ Ո Լ Ո Ր Ը

Ասա, թող յետ տան... Թող յետ տան, Դավիթ...

Ռ Հ Ա Ն

Վորոսի նրման

Դե, բով ե վռնաք...

Դ Ս Վ Ի Թ

Իր հուժկու ձայնով

Բեր, յետ տուր, իշխան...

Փողերի ձայներ

Բ Ա Դ Ի

Վախեցած

Այս Բնչ փողեր են հընչում ախպես ղիլ...

Ռ Հ Ա Ն

Ձեր խոնարհ ծառա՝ Բըղեշիսի մարդիկ,—
Մի քաջ հարյուրակ հեծյալ սեպուհներ,
Վոր յեկեկ են ձեզ հատուկ խոնարհվին:

Կ Ո Ջ Բ Ա Դ Ի

Թող դան խոնարհվեն...

16

Մի խումբ սեպուհներ մեծ ռուֆ են տալիս
ռազմիկ Գոհարին, վոր հաստատ փայլով գալիս է առաջ

Ո Հ Ա Ն

Վողջութուն խոնարհ, իմ հյուր ռազմիկին...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Բ

Վողջուն ձեզ, իշխան:

Բաղուն, Կոթաղուն

Թուրքս խոնարհած վողջունն եմ խընդբում:

Դ Ա Վ Ի Թ

Վորքան անարժան է նըվաստ ռազմիկ:

Պ Ա Տ Բ Ի Կ

Դու լավ ճանաչիր այդ ռազմիկ կույսին:

Բ Ա Դ Ի

Թուրք միշտ հատու, աղջիկ զորավար:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Բ

Աստված ոգնական, սրբազունն հայր սուրբ:

Վ Ա Ն Ա Հ Ա Ե Բ

Աստված պահպան, իշխանազն որիորդ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Բ

Յեկ ձեզ, իշխաններ, վողջուններ առատ:

Բ Ո Լ Ո Բ Ը

Մաղթում ենք և քեզ նույնությամբ, որիորդ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Այստեղ ե, արդյոք, Դավիթն անառակ:

Գ Ա Վ Ի Թ

Արդար պատանի— և վնչ անառակ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Այդ դձև յես, տըղա, Դավիթ Սասունցի:

Գ Ա Վ Ի Թ

Այո, այդ յես եմ... բայց վնչ անառակ:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Աստված իմ, աստված...

Ասես իր սրբում փոքրիկ անցավ

Աչքերի միջից նետեր են ցայտում...

Դավիթ

Լըսիր, պատանի,— քառասուն տեղից
Արքայազրն քաջեր իմ ձեռն են խընդրել,
Քառասուն այրեր մարտի մեջ հաղթված
Ձեռնունայն, փոշման հետ են զընացել...
Դձև յես, վոր այնքան հանդուգըն յեղար,
Վոր հորըդ տըված ուխտը զըրժեցիր, ուխտադրուժ դարձար:
Յեկեկ եմ մարտի,— յերես առ յերես.
Յեկ յեթե հաղթեմ, ճորտըս կըղառնաս, պալատըս կըղաս:
Թե դձև հաղթեցիր, իրավունք ունես
Խանդուտ Խաթունի փեսացուն դառնալ:
Արդ՝ յեղնենք մարտի:

Գ Ա Վ Ի Թ

Ուրեմն դձև յես ծընողիս ընտրած այն քաջ հաբանացուն:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Թե հաղթեմ մարտում, այդ յես կըլինեմ:

Գ Ա Վ Ի Թ

Հատուցման մի ժամ...

Արհամարհանով

Պիտոջ հետ մարտի յերբեք չեմ յեկնի:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Կատաղի

Անգետ ու տըհաս, հանդուգըն տըղա...

Պոսեկ կընոջ հետ անդամ չըզիտես:

Ո Հ Ա Ն

Թողեք ասեմ յնս...

Դավիթը խելոք դեռ խոսք չի տըվել խանդուտ խաթունին:

Հանձնենք Վանահորն թող խոստում առնի,

Յեվ իբրեւ որհնյալ տիրոջ տեղակալ,

Իբ արդար խոսքը Դավիթին հայտնի:

Գ Ա Վ Ի Թ

Աստված իմ, աստված... Ինչո՞ւ պատժեցիր...

Ծունկի յե գալիս Կանահոր առաջ

Թողություն տուր ինձ, հողեոր սուրբ հայր:

Ո Հ Ա Ն

Պատրաստվիր, Թորոս:

Թ Ո Ր Ո Ս

Այստեղ ենք, այստեղ...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Որհնյալ ես, վերդիւս... Հանձնիր Ոհանին և թուր, և զըրահ,

Յեվ մաքուր սըրտով ազոթքըդ արա:

9





Ո Հ Ա Ն

Թուրքի տուր պահեմ, իմ անուշ զավակ...

Առնում է քուրք

Արի համբուրեմ ճակատքդ այս հեղ...

Սեպուհներն արդեն պատրաստ այդ դավին,
պողպատ եղբայրով կապում են Դավթին

Պ Ա Տ Ր Ի Ա

Այս դու, սև հուզմ...

Ո Հ Ա Ն

Դեպի Պասրիկը

Բըռնել է սըրան...

Կապում են նրան

Պ Ա Տ Ր Ի Ա

Մի թողնեք, մարդիկ...

Դ Ա Վ Ի Թ

Մի հուզվեք, իշխան: Թողեք, վոք անեն, ինչ վոք կամենան...

Դ Ո Ի Ս Ա Ն

Այս թնչ են անում:

Ա Ո Ի Յ Ր Ը

Ինչո՞ւ յեք Դավթին շրջթաներ հաղցնում:
Տեսնո՞ւմ եք, մարդիկ, ինչեք են անում:

Բ Ո Լ Ո Ր Ը

Աղատենք Դավթին... Աղատենք Դավթին...

Դ Ա Վ Ի Թ

Թողեք, վոք կապեն, ինչպես ուզենան:

Կույի՛ն

Ազնիվ բարեկամ, դու զըստիր նըրանց,
Թե կարիք լինի, ինքս ձեզ կստեմ:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Դե, տես, կանգնած ենք...

Դ Ա Վ Ի Թ

Շնորհակալ եմ, մարդ:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Հուզան ել այգալես համբույրով մատնեց...

Հ Ր Ե Ղ, Ե Ն Դ Ո Հ Ա Ր

Վորքան անուշ ե, ե հեղ, ե վեհանձն...

Բ Ա Դ Ի

Քրիշք բերնին

Դե, վճնց ես հիմա:

Կ Ո Ջ Բ Ա Դ Ի

Փափակ ե շրջթան:

Բ Ա Դ Ի

Փափուկ ե, վափուկ...

Քրիշ ու պար

Պ Ա Տ Ր Ի Ա

Ել բնով ե, ծաղրեք:

Դ Ա Վ Ի Թ

Հանգիստ կաց, իշխան:

Վողորմած հայր սուրբ, միթե այնքան մեծ յես մեղք եմ գործել,
Վոր շրջթա զընեն ձեռքիս ու վռաքիս, ու այսպես ծաղրեն...

Վ Ա Ն Ա Հ Ա Յ Ր

Դավիր մեղքերըդ ե զրախտ կերթաս:

Գ Ա Վ Ի Թ

Թող քավեմ մեղքըս, թե մեղք եմ զործել:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ի՞նչ վե՛հ և հոգով...

Գ Ա Վ Ի Թ

Դե արեք ինձ հետ, ինչ պետք և անեք...

Բ Ա Դ Ի

Յե՛վ կանենք անշուշտ: Այսպես շրղթայած
Մըսրա Մեղիքին նըվեր կըտանենք:

Գ Ա Վ Ի Թ

Մըսրա Մեղիքի՞ն:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ինչ՞ո՛ւ Մեղիքին, և վա՛յ իր հարսին:

Բ Ա Դ Ի

Հրաշալի նըվե՛ր...

Կ Ո Զ Բ Ա Ս Դ Ի

Յե՛վ շատ զվարճալի...

Պար ու երթ

Բ Ա Դ Ի

Տարե՛ք յերկուսի՛ն:

Գ Ա Վ Ի Թ

Կորե՛ք, հեռացե՛ք...

Անցնում ե ուսիկների մոտ

Կ Ո Ւ Յ Ր Ը

Քանդեք այս շրջթան:

Քանգում եմ ռամիկներ

Բ Ա Պ Ի

Այս քնչ ե, Ոհան:

Դ Ա Վ Ի Թ

Ահա ձեր շրջթան:

Շարսում ե դեմ

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Անվեհեր մի այր:

Դ Ա Վ Ի Թ

Գընացեք Մըրըր և հայտնեք նըրան,
Վոր կըսվի յեղնի, թե պատիվ ունի և զորք անհամար:

Բ Ա Պ Ի

Լսեմ ես, իշխան:

Ո Հ Ա Ն

Համբերիք, Բաղի, մենք պատիվ կըտանք իրեն արժանի:
Դե, Թորոս իշխան, և զնւք, սեպուհներ, անցեք ձեր զործին:

Պ Ա Տ Ր Ի Կ

Լսեցիք, Դավիթ, հըրամանն Ոհանի:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Մի թողնեք, ռամիկ, շինական մարդիկ,
Վոր շրջթա զնեն արգար Դավիթին:

Թ Ո Ր Ո Ս

Դեպի սեպուհներ իր բուրք պարգած

Ջարիկեք, ով մոտ զա:

Կ Ո Ւ Յ Բ Ը

Թուրքդ քեզ պահէք, ալեհէք իշխան:

Թ Ո Ր Ո Ս

Սեպուհներ, դարկէք ոամիկ շքներին:

Պ Ո Ւ Ս Ա Ն

Սնունք ե թորսից նրա բուրք

Այս ել քո թուրք: Թէ կուզես՝ թուրքդ իջնի քո գլխին:

Թ Ո Ր Ո Ս

Սեպուհներ, սղներ:

Պ Ջ Ր Բ

Ջարկէք եղ Կույրին:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Հարձակվէք, քաջեր:

Կ Ո Ւ Յ Բ Ը

Մի վախեք, մարդիկ:

Իբար եմ անցնում

Պ Ա Ա Ի Թ

Կացէք, խեղառներ...

Գուսանից

Հէտ աուր իմ թուրք... Վերցրու, իշխան:

Դուք ել, սեպուհներ, պահեք թըրերդ...

Բալուրն ել անշարժ մնում եմ սեղում

Խնչճւ յեք կանգնել, Բադի, Կողբադի:

Գընացեք Մըսըր, ասացի յես ձեզ, հայտներ ձեր մեծին,

Վոր կըռվի յեղնի, թե պատիվ ունի և զորք անհամար:

Բ Ա. Գ Ի

Խաբերա Ոհան, զիտցիր, լսով զիտցիր—
Եւ վոչ մի պարզե, խոստում, կամ վոսկի
Ձի կարող զսպել հզոր Մելիքի զայրույթը արդար:
Արդ՝ վաղը հեթ բուրավոր զորքով
Մըսրա դուշադնը ավեր ու կըրակ կթափե այստեղ:
Գընանք, Կողբաղի:

Գնում են արագ

17

Ո Հ Ա. Ն

Անիծյալ լաւոտ, դու այս ի՞նչ արիր:
Կանգնիր, զորավար, նա խնթ ե, տըղէտ...

Սպառնալով բոլորին

Բըռնեցէք Դավթին, ինչ՞ով յեր կանգնել:

Ա. Ս Ե Պ Ո Ի Հ

Մոտեցիր՝ բռնենք:

Բ. Ս Ե Պ Ո Ի Հ

Առաջ դու անցիր:

Գ. Ս Ե Պ Ո Ի Հ

Դու ինձ հետեիր:

Կ Ո Ի Յ Ի Ը

Մի թողներ, մարդիկ, բռնեն Դավիթին:

Իբրեւ են խառնվում

Դ Ա. Վ. Ի Թ

Կացէք, նենդ մարդիկ, հեռացէք ինձնից...
Յես ձեզ չեմ ծեծի, մի վախչեք այդպես:
Տեսեք՝ անսլուտանդ կանգնել եմ այստեղ ձեք արդար դատին:

Ահա, տեսնում եմ—սասունցի մարդիկ,
 Ռամիկ, շինական, ազատ և ծառա,
 Յեւ քաջ սեպուհներ, և մեծ իշխաններ.
 Ձեր մեջ կան անշուշտ ալիհներ այրեր իմաստուն խելքով,
 Վոր հողից հաց են հանում հըրաշքով:
 Ահա և սուրբը, հողեր մի հայր,
 Այլև անվեհեր ռազմիկ մի աղջիկ...
 Դատեցեք այժմ ձեր արգար դատով մի ռամիկ մարդու,
 Վոր անդեն, խոնարհ կանգնած և այստեղ:
 Ինչո՞ւ համար են ինձ շրջթա հագցնում,
 Յեւ վորպես մի դառ—Մեկիքին հանձնում:
 Թե մեղք եմ դործել, և այնքան մեծ մեղք,
 Վոր լույսը կյանքիս խավար կըբերե ձեր արգար յերկրին,
 Խավարեք լույսը այդ նեո, չար վոգու,
 Վոր արեւը ձեզ ջերմություն բերե:
 Լըռում եք այսպես... Յես այր եմ ռամիկ,
 Նախկին մի հովիվ, և այժմ վորսորդ,
 Տըհաս պատանի, սակավ իմաստուն,
 Աշխարհի գործից քիչ բան հասկացող, բայց արդձր, արդձր...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Բ

Մեկուսի

Բյո՛ւր անգամ արգար...

Դ Ս Վ Ի Թ

Լըռում եք նորից: Յեւ զո՞ւք, ռամիկներ...

Ճ Ե Ր Ը

Ուզում ես, վոր մենք մեր խոսքը ասենք:
 Ռամիկ մարդիկ ենք, սրենքից լըբված.
 Իրավունք չունենք խառնվել ձեր գործին:
 Բայց թե խոսելու իրավունք տըրվի,—կասենք մենք այսքան,—
 Դյուցազնից ծընած ամուր ձեռք ունես,
 Բազուկդ յերկաթ՝ մեր մեջն և սընվիկ,
 Դո արգար կամքով քանի մի անգամ
 Մըսրա Մեկիքի անարգ, չար մարդկանց

Ծեծել ես, քըշել—աստված քեզ ոքնի...
Գուսանները վողջ քո գովքն են յերգում...
Բայց ի՞նչ կեսես, ա՛յլ, յեթե Մելիքը բյուրավոր զորքով
Մորեխի նըման զա Սասուն իջնի...

Ա. Հ. Ա. Ն.

Իմաստուն ծերուկ, այգակես ել կանիւ:

Պ Ա. Տ Բ Ի Լ

Թողեք, յես խոսեմ:

Ա. Հ. Ա. Ն.

Ել ինչ՞իս խոսել:

Պ Ա. Տ Բ Ի Լ

Թողեք, կըխոսեմ: Այլեր քաջազուն, և դժւք, ուամիկներ,
Հիշենք նախնիքը մեր սուրբ անցյալի:
Ազատ մի յերկիր, վար ուներ արքա, և զորք, ժողովուրդ:
Այդ արքան մեծ եր, և հըմայքը՝ վեհ:
Ուներ ձեռքի տակ թագակապ սասկնո,
Մարդպետներ շատ-շատ, և մեծ դատավար,
Այլ և բըղեշխներ՝ զահերեց, կըրտսեր,
Բազում իշխաններ, նախարար այբեր,
Սեպուհ, վոստանիկ, ազատ ու ուամիկ, վանք ու վանական,
Յեւ բոլորն իրան հըստատակ եյին...
Այլ և ուներ նա մի մեծ, բնդարձակ, մի ծաղկյալ յերկիր...
Իսկ այդ յերկիրը՝ կըրծքին նկարուն բազում ուղիներ,
Բազում կամուրջներ:
Գարավանները հարուստ բեռներով,
Մերթ շարժում եյին ուրախ, խաչածե, աշխարհից-աշխարհ,
Մերթ բերում եյին զանձեր անհամար, և խի՛նդ, և զողանջ...
Ավանդ, ել չըկա յերկիրը կանաչ...
Մի քանի իշխան, Ոհանի նըման,
Վարոնք չունեյին վոչ մի քարավան,
Վորոնք ծուլլ եյին, և նենդ, և տըհաս, և թույլ ու անկաս,
Գընացին Մըսըր, և բերին մի հյուր...

Մի հյուր բըռնակալ, մի հյուր աըյունոտ...

Յեւ տվին նըրան և զանձ, և յերկիր,

Ուղինք բազում, կամուրջներ հազար...

Յեւ կին, յերեսա, և տուն ու պատիվ...

Չ Ա Յ Ն Ե Ր

— Ինչո՞ւ յեք հիմա քառասուն կույսեր պահել այս գոմում:

— Ինչո՞ւ յեն քառասուն նըժույգ սեարաշ այնտեղ խըրխընջում:

— Ինչո՞ւ յեն յերկրի հընչուն վոսկինքն

Չափում և լըցնում ուրիշի պարկեր...

— Ինչո՞ւ յեն Դավթին, գյուցաղնի վորդուն,

Այս հեղ ու արդար պատանուն բըռնում, Մելիքին հանձնում...

Գ Ո Ւ Ս Ա Ն

Վոր գեթ կարենան մեղնից հավաքած

Իրենց մեծ բաժին հարկերը լափեն ոտար լըծի տակ...

Կ Ո Ւ Յ Ր Ը

Իրավ ե, Գուսան...

Գ Ա Վ Ի Թ

Դատեցեք ազատ, ո՞վ, դուք, և ռամիկ, և արդար մարդիկ:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Յեթե ռամիկին խոսել եք թողնում, թողեք յեն ասեմ:

Վսչ մի մեղք չունի խալիֆը ոտար:

Թե խոնարհ, անձայն հազար բեռներով պարգև ուղարկես,

Հազար անգամ ել ոտարի ուղտը կըչոքի այստեղ:

Խոնարհ պարզելին ոտար չար մարդը բավական կասի:

Ձե, չէ... չի ասի... կառնի, կըտանի...

Իշխանը հոգով ըսարուկ ե լինում, կամքով՝ բռնակալ:

Իր մեծ գըլուխը գընում ե ոտար հըղոր թըրի տակ,

Ու ձեռքը առնում ռամիկի համար պողպատե մըտրակ,

Յեւ տուր, թե կըտաս... Ես քեզ՝ գըլխահարկ, ես՝ վարկահարկ,

Մի հազար նըժույգ, մի հազար ջորի,

Ես քեզ՝ լըծկանի, ես ել՝ հավաքի, ես քեզ՝ սուրը վանքի,

Ես ել՝ քո վորսի, և հազար բանի հարկ ու հարկ, հա, հա...
Առանտ, կըրկնակի, ինչքան Մելիքը պահանջներ կանի...
Իսկ տուգանքը, ա, և հարս, և աղջիկ, ընտանիք, պատիվ...
Իսկ կո՞որդ դաժան, բաղձւմ, բազմազան...
Եսքանը տալ... լմվ... Ասեք, ռամիկներ,
Ո՞վքեր են տալու, իշխանը, թե մե՞նք...

Ո Հ Ա Ն

Պարզում ե քուրք

Անիծյալ ռամիկ...

Ծ Ե Ր Ը

Ազատեք մարդուն...

Բ Ո Ղ Ո Ր Ը

Այո, իշխան...

Դ Ա Վ Ի Թ

Այացեք...

ԼՈՍՊՈՒՆ

Անպաշտպան, խոնարհ կարող եմ կանգնել անձիս ներկատմամբ,
Բայց թողնել արդար մի մարդ սպանել... Ամսթ քեզ, Ոհանե...
Խոսիր, հարազատ, ազնիվ ծերունի...

Կ Ո Ւ Յ Ր Ը

Այսպես ե յեղել Ոհանը մեզ հետ...
Այսպես են յեղել իշխանները վսղջ...
Այս աչքը, տեսեք, անխիղճ իշխանն և մըտրակով հանել...
Ահա Պատրիկը նույնպես մի իշխան,—
Խոսքովն իր ճարտար խոստումներ կարգաց արքայի ողորին:
Բայց զիտե՞ք— ով ե արքան այդ զոված.
Մի կայսրը ոտար, — նույնքան բռնակալ, վորքան և մյուսը:
Տեսել ենք և քեզ, և կայսրը ձեք մե՞ծ...
Քո սրո՞ք, իշխան, արեւ չի ծագել ռամիկի համար:

Դեպի Բյուզանդիոն քիչ չե ծորացել մեր քըրտինքն արդար:
Լըսիր, պատանի, և դուք, ռամիկներ, պատրաստվենք կըռվի...
Յեթե կամենա աստվածը արդար,
Ոտարի լըծից կաղատվենք իսպառ:

Դ. Ա. Վ. Ի. Թ.

Յեթե դուք ասեք այս ճարտար խոսքին հավան եք հոգով,
չենց հիմա կերթամ Մըսրա Մեկիքին յերկու կես կանեմ:

Ծ. Ե. Բ. Ը.

Իսկույն

Թե կանես յերկու կես Մըսրա Մեկիքին, հավան եսք, հավան:

Բ. Ո. Լ. Ո. Բ. Ը.

Հավան ենք, հավան:

Ա. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի.

Դավիթն արդար ե:

Բ. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի.

Թող հազնի զըրահ...

Գ. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի.

Թող առնի ձեռը իր Թուր Կայծակին:

Կ. Ո. Ի. Յ. Բ. Ը.

Դավիթն արդար ե...

Ռ. Ա. Ս. Ի. Կ. Ն. Ե. Բ.

Կեցցե Դավիթը:

Գ. Պ. Ա. Տ. Ա. Ն. Ի.

Կեցցե դյուցազնի հաբաղատ տըղան:

Հագցնում են Դավիթն գեները իրա: Յճծուրյուն

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Հավան եմ ե՛լ յես: Բայց մի պայմանով—
Հընազանդ մընաս առյուծ Մըհերի արված սուրբ ուխտին:

Գ Ս Վ Ի Թ

Քանջ, աղնիվ որիորդ, յես պարտական եմ հավետ քո առջև:
Այժմ իմ անձը ինձ չի պատկանում, վոր ասեմ - «այո», կամ թե՛
ասեմ— «վո՛չ»:

Յեթե յես հաղթեմ դաժան Մելիքին և վողջ հետ դառնամ,
Մարտի կըմանեմ քեզ հետ յես սիրով խոսքիդ համեմատ:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Կընքված ե պայման:

Գ Ս Վ Ի Թ

Յեվ աղնիվ պայման

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Սպասենք կատարման: Գընանք, սեպուհներ:

Գոհարը ուրախ գնում ե խմբով

Կ Ո Ւ Յ Ր Ը

Դե, հիմա յեկեք, կալանքի առնենք հուզա մհանին,
Վոր ազատ գործենք:

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Շըղթայենք իսկույն մեր իշխաններին:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Շըղթայենք իրավ: Բըռնենք Հուզային:

Ո Հ Ա Ն

Դավիթ, իմ դավակ, փըրկիր ինձ շաբլից...

Դ Ա Վ Ի Թ

Իրավունք չունեմ:

Դարձնում ե դեմքը յեկ կանգնում հաստս

Կ Ո Ի Ե Ր Ը

Բըռնեք Թորոսին:

Ծ Ե Ր Ը

Բըռնեք բոլորին:

Կ Ո Ի Ե Ր Ը

Շըղթաներ բերեք:

Բռնում են, կապում ֆանի իշխանի

Վ Ե Ր Դ Ո

Իսկ յես շուտ վաղեմ, Բըղեշխ իշխանին բոլորը պատմեմ:

Դ Ո Ի Ս Ա Ն

Յույց տալով վանահորը

Բըռնեք և սըրահն:

Դ Ա Վ Ի Թ

*Վնչ այդ մեկն, յեղբայր: Գընացեք, հայր սուրբ, և աղոթք արեք:
Իսկ հիմա գործի:*

Կոտում ե գոմի դռները

*Յեկեք, հեղ կույսեր, հարս ու աղջիկներ,
Գընացեք աղատ ասեղ բըռնեցեք,
Աղատ սափորսով ձեր տուն ջուր տարեք:*

13

Դ Ո Ի Ս Ա Ն

Ապրի Դավիթը...

Մ Ի Ա Ղ Ջ Ի Կ

Արդար Դավիթը...

Գ Ո Ի Ս Ա Ն

Քաջ ու անվեհեր, առյուծ Դավիթը

Յնձում են ուրախ

Դ Ա Վ Ի Թ

Պահեստի դուռը կոտրում է վոսֆով

Յեկեք վերցրե՛ք, և զորդ, և թաղիք,

Յեկ ձեր զործվածքը—ազատ վայելեք...

Գ Ո Ի Ս Ա Ն

Ապրի Դավիթը...

Դ Ա Վ Ի Թ

Արձակեք, տարեք և նըժույզ, ջուրի, յերկսապատ ուղտեր,
Յեկ այն ամենը, իսր ձեզնից խլելի, պահել են այստեղ:

Գ Ո Ի Ս Ա Ն

Ապրի Դավիթը...

Մ Յ Ո Ի Ս Ը

Արդար Դավիթը:

Բ Ո Լ Ո Ր Ը

Քաջ ու անվեհեր, առյուծ Դավիթը...

Յնձում են ուրախ, յերգում ու պարում

Կ Ո Ի Յ Ր Ը

Իերեք Հուդային բանտարկենք զամուս:

Գ Ո Ի Ս Ա Ն

Հըրմշք տեղաց մարդկանց զըլխին...

Հըրմշք վառեց միտքը Դավիթի...

Դավիթն առավ նենդ իշխանին
Գոմում փակեց—զընաց մարտի:

Դ Ա Վ Ի Թ

Մաղթանքը կույսի կատարվեց արդեն...
«Ու թե մի ուր կըռիվ զընաս, և ձին քո հուր խըրխընջա,
Սըմբակի տակ հաղար-հաղար թըշնամի թող մըռընջա...»
Իշխան խնամակալ, սուրհանդակ ուղղեք Սանդուտ Սաթուհին,
Թող բարեւ մաղթե:

Պ Ա Տ Ր Ի Կ

Յեւ այս մատանի՞ն, վոր հանձնեն իբան...

Դ Ա Վ Ի Թ

Մատանի՞ն... դեռ վոչ... դեռ վոչ՝ մատանին...
Մեղա՞ քեզ, աստված, մեղա՞ քեզ, մեղա՞...

Կ Ո Ւ Յ Ր Ը

Պատրաստվի՛ր, Դավիթ, ժամանակ ե, հա՛...

Դ Ա Վ Ի Թ

Հենց այժմ լինել զինված ու սլաղաատ, և յեկեկ մաբտի...

Պ Ա Տ Ր Ի Կ

Սեպուհ, դոքքերիս հաղորդում արա...

Դ Ա Վ Ի Թ

Ջալալ, հէյ Ջալալ...

Յճուրջունը Եարուհակվիւմ Ե.

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՉՈՐՐՈՐԴ

ՄՍՐԱ ՄԵԼԻՔԻ ԲԱՆԱԿԱՏԵՂԻՆ

1

Մ Ե Լ Ի Ք

Դալիս ե ներս գորավարների հետ

Չարխաղին հեծյալ զորքեր թող առնի,
Բաթմանա ալիին շաբեշար կանգնի:

Ծ Ե Ր ՈՒՆ

Չարխաղի, արագ Բաթմանա հասիր:

Չ Ա Ր Խ Ա Պ Ի

Բաթմանա հասնեմ:

Դուրս ե գնում

Մ Ե Լ Ի Ք

Թող Չաղին հուժկու չլիզալներ սըբի,
Անզըզա ձորում պինդ դաբան մըտնի:

Ծ Ե Ր ՈՒՆ

Ձորապետ Չաղի, շուտ դաբան մըտիր:

Չ Ա Պ Ի

Շուտ դաբան մըտնեմ:

Դուրս ե գնում

Մ Ե Լ Ի Ք

Սեղանսար մընան ինձ հետ կենտրոնում՝
Բաղին, Կողբաղին, Չարբահար Քամին, և պատրաստ պահեն
Հաղար-հաղար մարդ, բեղով, մորուսով,
Հաղար-հաղար մարդ, անբեղ, անմորուս,
Հաղար-հաղար մարդ, նոր բեղը ծլած,
Հաղար-հաղար մարդ, դեռ բեղ չունեցած,
Վոր լույսի բացին Սասունը մընեմ,
Փռչին քամուն տամ, վառեմ, ավերեմ:

Ք Ա Մ Ի

Ամեն ինչ կարվի, հաղթական Մելիք:

Մասնացելով Վերդ իշխանին,
Վոր հեռու՝ խոհարհ սպասում և կոնգնած

Սուբհանդակ Բղեշից, հայոց իշխանից,
Վոր յեկել և քեզ, և, մեծդ Մելիք, խոհարհ պատգամով:

Մ Ե Լ Ի Ք

Վոչ մի իշխանի անուն չըլլած:

Ք Ա Մ Ի

Քո կամքն և, տեր իմ: Բայց խոհարհ խոսքով հայտնում և
նա քեզ,

Վոր զորքեր տուած պատրաստ և արդեն քո մեծ հրամանով
Ավերել ասպտամբ յերկիրը զբոխք:

Մ Ե Լ Ի Ք

Վատ չե, յերբ իրենք իրենց իսկ ձեռքով
Կամենան պատժել իրենց վստխին...
Ասա այդ մարդուն, Վոր լուր և բերել,
Թող հայտնի իր տեր Բղեշի իշխանին,
Վոր բյուր զորքերով շարժվում եմ Սասուն.
Թող իր մարդկանցով և վողջ հըպատակ՝
Իշխան ու ռամիկ, ազատ ու ստրուկ հավաքի, բերի,
Վոր անցնեն մեկ-մեկ իմ թրքի տակով,

Յեւ վերստին յերդվեն՝ մընալ միշտ խոնարհ, հարկատու
ըստբուկ:

Ասա, վոր ինձնից պարգև կըստանա
Նորից իբ յերկրում մնալու իշխան,
Յերբ ապստամբ Սասունն իսպառ ավերի:

Գ Ա Մ Ի

Հայտնեմ ամենը, ինչ վոր ասացիր:

Մ Ե Լ Ի Գ

Տեղով

Իսկ այժմ քանի լուսինն և շողում,
Թող ննջեն քաջերն մի պահ մինչ արև:

Ծ Ե Բ Ո Ի Ն

Չաբբահար Դամի, հայտնիր զորքերին:

Գ Ա Մ Ի

Հայտնեմ զորքերին:

Մելիքն ու Ծերունը դուրս են գնում

Լըսեցիք, Վերդո, հարկ չըկա կրկնել:

Վ Ե Բ Գ Ո

Լավ, լուսաբացին մեկնեմ Հայաստան:

Դուրս ե գնում

Ձ

Գ Ա Մ Ի

Հրեշտակ ե փողը

Լըսեք հըրամահ: Այժմ քանի դեռ լուսինն և շողում,
Թող ննջեն քաջերն մի պահ մինչ արև:

Հրամանը կրկնվում ե զանազան կողմեր

Ա. Խ Թ Ի Ա. Բ

Չաբբահար Դամի, մի նստիր տեսնենք—

Եղ վննց պատահեց, վոր Դավիթը քեզ մարտի մեջ հաղթեց:

Բ Ո Ն Ո Ր Ը

Պատմիր մի տեսնենք: Պատմիր, դե, պատմիր:

Ք Ա Մ Ի

Չար ժամին հասավ:

Վոչ մի վահլեան չի կարող պըրծնել, յերբ ողակ արած
Իմ ձիգ բազուկով բըռնեմ իր մեջքից:

Բայց արի ու տես՝ չիմացա ինչպես

Այդ անպիտանը հուպ տըվալ կողքս

Ու դունչը հառած՝ պինդ սըղմեց կրծքիս: Շունչըս կըտըրվեց:

Սիրտըս վոչ մի կաթ արյուն չհասցրեց ամուր բազուկիս:

Հետո վոտներըս թռւլացան, ընկա—փըսվեցի զետին:

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Կեցցես պատանի:

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Հետո ասում են՝ յերկար ժամանակ

Ձի թողել շարժվես իր վոտքի տակին...

Ա. Խ Թ Ի Ա. Բ

Այդ ճիշտ են ասում:

Ք Ա Մ Ի

Այդպես ել յեղավ: Ասես յերկաթե մի սյուն եր սըղմում

Իմ մեջքը քարին:

Ա. Խ Թ Ի Ա. Բ

Քանի եր փոքրիկ տակ:

Ք Ա Մ Ի

Ահադին մի քար:

Ա. Խ Թ Ի Ա. Ռ

Շատ լավ էս պըրծել:

Գ Ա. Մ Ի

Թե ուրիշ լիներ, ուրիշ փահլեան—մեռել եր արդեն:

Ա. Խ Թ Ի Ա. Ռ

Ո՞վ կլինի ուժեղ—Մելիքը, թե՞ նա:

Գ Ա. Մ Ի

Այդ ո՞վ կիմանա: Ա՛յ, թե պատահի, վոր բըռնվեն մեկտեղ,
Կիմացվի անշուշտ, թե վնքն ե ուժեղ:

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Վա՛հ, արի ու տես...

Ա. Խ Թ Ի Ա. Ռ

Ասում են՝ ունի ե թուր Կայծակի:

Գ Ա. Մ Ի

Այն թուրը Կայծակ, վոր Մըհերն ունի,
Այլե հըրեղեն իմաստուն քուռակ:

Ա. Խ Թ Ի Ա. Ռ

Արի զիմացիբ:

Գ Ա. Մ Ի

Դե բավ ե ինչքան չարից խոսեցինք:
Լույսը ճեղքում ե քողը խավարի:
Պառկեք ու քնեք: Զեղ բարի գիշեր:
Յես մի աչք ածեմ: Պառկեք, քրնեցեք:

Գուրս ե գնում

Ա. Խ Թ Ի Ա. Ռ

Իսկ թե կըռվի մեջ իր թուրը հանի:

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Բա թուրը զոտում պահած պիտ կըռվի:

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Ասա՛ զալու յե բոլորիս մորթի:

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Այդ ել կարող ե հանկարծ պատահի:

Ա. Խ Թ Ի Ա Ր

Ել կի՛ն, յերեխա չէ՛նք տեսնի յերբեք:

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Չես տեսնի, յեթե իրավ քեզ մորթի:

Ա. Խ Թ Ի Ա Ր

Թո՛ւ, չաբ ուժերին:

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Դու կամայ խոսիր, քնած են մարդիկ:

Ա. Խ Թ Ի Ա Ր

Մեր քնած ժամին, յերբ անմեղ մարդիկ
Անուշ յերազում ջերմացած շքնչով քընելիս լինեն,—
Հանկարծ յերեա Դավիթը առջու՛ծ...

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Աստված վո՛չ անի:

Ա. Խ Թ Ի Ա Ր

Քամու պես թեթե մի նժույզ նստած,
Յեղ թուր կայծակին աջ ձեռքում պարզած...

Յեվ ճենց այդ պահին հեռուի միջից
 ցայտնվում է Դավիթը Զայալի մեջքին՝ իր Թուրք պարզած,
 ճեվ բյուր սասունցի մեծ կովի պատրաստ

Դ Ա Վ Ի Թ

Ո՛վ բյուրավոր քաջ կրարիճներ,
 Ի՞նչ եք յեկել մըտել դարան.
 Թե քընած եք, շուտ արթնացեք,
 Արթնւն քաջեր, յկէք, կեցեք,
 Կեցած մարդիկ, զէնք կապեցեք,
 Զինված զորքեր, ձի՛ թամբեցեք,
 Թամբած ձիերն հեծեք նըստեք,
 Վոր չասեք թե՛ մենք խոր քընած
 Դավիթն եկավ հաղթեց, զընաց...

Մի վայրկյանում Մըսա գորբը վոսխիջեալ

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Փախեք, յեկավ Դավիթը քաջ...

Պ Ա Տ Ր Ի Կ

Ճակատ բռնել կիրճի՛ վրա...

Դ. Զ Ի Ն Վ Ո Ր

Փախեք, փախեք, Թուր Կայծակին շողշողում է նըրա ձեռքին...

Ք Ա Մ Ի

Թողեք ջարդեմ զըլուխն իրա:

Դ Ա Վ Ի Թ


Ա՛ն քեղ, Քամի, ճանաչեցի...

Զարկում է Քամուն

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Զարկեց, փրչեց զանդը նըրա:





Ա. Խ. Թ. Ի Ա. Ր

Թողեք ասեմ յես այդ քաջին:

Բ. Ջ. Ի Ն. Վ. Ո. Ր

Թողեք գիմենք նրա խըղճին:

Ա. Խ. Թ. Ի Ա. Ր

Դավիթ, այ Դավիթ, թուրքդ դեռ պահիր,
Յեւ խըղճով մի պահ ձեքուկիս լըսիր:

Դ. Ա. Վ. Ի Թ.

Դու զավակ ունես:

Ա. Խ. Թ. Ի Ա. Ր

Յեւ կին, և զավակ—տասներկու հոգի:

Դ. Ա. Վ. Ի Թ.

Հեռու կաց ճամբից:

Ա. Խ. Թ. Ի Ա. Ր

Ինչո՞ւ յես ուզում վռչխարի նման ջարդել, կոտորել
Այս անմեղ մարդկանց ոամիկ, շինական:
Մենք թ՛նչ մեղք ունենք, վոր զոռով բերել
Մըսրա Մելիքը կոխի ե սաքքել:
Են դաժան մարդն ե քո չաք թըշնամին,—
Մելիքը են նենգ: Ուզում ես զընա, կըռվիր նըրա հետ...

Դ. Ա. Վ. Ի Թ.

Ալմղ, ճիշտ ասիր, իմաստուն ձեքուկ:

Դեպի իր մարդիկ

Դադարեք կըռվել...

Լոուրյունից հետ

Վճրտեղ ե այն դե վոսոխը հիմա:

Ա. Խ Թ. Ի Ա. Բ

Տեսնեմ ես այն մեծ վրբանը հարուստ:

Դ. Ա. Վ. Ի Թ.

Տեսնում եմ, ծերուկ: Այնտեղ ե թաղնված:

Ա. Խ Թ. Ի Ա. Բ

Հենց այդ ե, վոր կա: Բայց ահա ինքը: Խոսիր դու իր հետ:

5

Դ. Ա. Վ. Ի Թ.

*Վողջույն Մելիքին, անվանի քաջին:
Ինչե՞ւ յես անմեղ մարդկանց հավաքել
Այս ծիւղաշտերը արյան ծով արել:
Թե քաջ ես, արթ, և վստահ բազկիդ,
Արդ՝ յելիք մարտի, ինչպես կանեյին
Դյուցազուն քաջեր դեմ առ դեմ կեցած:*

Մ. Ե. Լ. Ի Բ.

*Լավ, յեղնեմ մարտի: Բայց հենց մըշուշով:
Կենանք, վոր լույսը բաւական բացվի:
Լըսել եմ և քո, և ուժիդ մասին.—
Վայել ե քո դեմ յեղնեմ յես մարտի:
Բայց մեղ մոտ հընուց որենք կա քաջի,
Վոր յերբ դյուցազուհը մարտի յեն յեղնում,
Նախ իրար մի լավ հարգում են, պատվում:
Անցնենք վրբանըս, վոր քեզ ապահով լավ պատիվ անեմ:*

Դ. Ա. Վ. Ի Թ.

*Վեհանձն խոսքով ինձ պարտք թողեցիր:
Բայց ուրիշ մի պարտք, վոր սուրբ խոստումով
Տըվել եմ զորքիս, նախ այն կատարեմ:
Պատրաստվիր, Մելիք:*

Մ Ե Լ Ի Ք

Պատրաստ եմ արդեն: Բայց ասա, Դավիթ,
Ո՞ւմն ե պատկանում զարկը առաջին:

Դ Ա Վ Ի Թ

Դո՛ւ զորքի հանդեպ, աշխարհի առջև
Յես քեզ եմ զիջում զարկը առաջին:

Մ Ե Լ Ի Ք

Հազար-հազար մարդ թող թըմբուկ զարկեն
Յեվ Դավթի մահը հայտնեն աշխարհին:

Մեկիք առավ մի գուրգ ահագին
յեվ հեռու Տեղից ուժով ու քափով յեկավ Դավիթին
այնպես ճարվածեց, վոր սեվ հողի հետ շաղախի—բողմի

Մեռած Դավիթը, շաղախվեց հողին:

Ծ Ե Ր Ը

Մթթե նա մեռավ...

Ա. Զ Ի Ն Վ Ո Ր

Ո՞վ կըդիմանար այս անեղ զարկին:

Ա Խ Թ Ի Ա Ր

Ափսոս պատանի...

Դ Ա Վ Ի Թ

Մեռած չեմ, Մեկիք: Պատրաստվիր նորից քո յերկրորդ զարկին

Կ Ո Ւ Յ Ր Ը

Յեճալի

Մեռած չե, մեռած...

Դ Ո Ւ Ս Ա Ն

Ինչպե՞ս զիմացավ:

Ծ Ե Ր Ը

Աստված զըթառատ պաշտպանն և Դավթին:

Ա. Խ Թ Ի Ա. Ր

Հըրշաք և, հըրաշք:

Մ Ե Լ Ի Ք

Այս ինչպէս յեղավ: Յերեւի թափըս հեռվից չեմ առել:
Զարկեք թըմբուկներ իմ յերկըրդ զարկիւն:

Այս անգամ հեռվից գնաց ու յեկավ
յեվ ուժեղ քափով զարկեց Դավիթին

Արդ՝ մեռավ հովետ:

Կ Ո Ի Ե Ր Ը

Վճշ, չի մեռնի նա...

Ա. Զ Ի Ն Վ. Ո Ր

Վճնց թե չի մեռնի: Ինչպէս զիմանա:

Բ. Զ Ի Ն Վ. Ո Ր

Իհարկե մեռավ:

Ա. Խ Թ Ի Ա. Ր

Ափսոսս են քաջին:

Դ. Ա. Վ. Ի Թ

Մեռած չեմ, Մելիք, պատրաստվիր տալու հարվածըդ վերջինս:

Դ. Ո Ի Ս Ա. Ն

Յնծագին

Դիմացավ զարկիւն:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Կեցցե՛ր Դավիթը:

Փ Ե Ր Ը

Աստված ե, աստված, վեր պահեց նրբան:

Մ Ե Լ Ի Պ

Ինչո՞ւ յե աշտպես իմ ձեռքը դողում: Թե՞ դուրդն ե թեթե:

Տրվե՛ր մի՛ ուրիշ, մի՛ դուրդ անոնի...

Ինչո՞ւ յեմ աշտպես շրվար մընացել...

Կամ միտքըս աշտպես ինչո՞ւ յե մըթնել:

Այժմ պատրաստվե՛ր իմ յերբորդ զարկին:

Լարված աճախը դիտում ե նրան:

Մեկի՛ն այս անգամ կորցե՛ր ե իրեն:

Մի՞թե կարող եմ նորից վերսկսել:

Այս միտք խավար նսեղ ե գլխում:

Յե՛վ ինչպես տնից սարսափած առյուծ,

Հարձակվեց նորից նա Դավիթի վրա

Արդեն վերջացած Դավիթը խաղառ...

Ասավ ու սենդոս աչեքը հառեց Դավիթի վրա:

Դավիթն այս անգամ ուռավեց զարկից,

մի հառաչ հանեց, յե՛վ փուլեց գետին:

Մե՛ծ սուգ բարձրացավ սարի ծեղկերին:

Ջալալը մի գիլ խրխինջ ածակեց աճաղջ աշխարհին

Ձ Ա Յ Ե Ր

— Վա՛յ մեր Դավիթին:

— Վա՛յ դուռցադնին:

— Վա՛յ մեր դըլլաին:

— Վա՛յ աշխարհին...

Բ Ա Դ Ի

Վերջապես մեռավ:

Վ Ե Ր Գ Ո

Ի՞ր գիճակցի՞ն

Թըռի՛ր Բըզեշխին աչքալույս հայտնի՛ր:

Մ Ե Լ Ի Ք

Արդեն յեղնում ե արե՛ր կարմիր:

Թող ուղմի փողերն վողջունեն լուսնին:

Ծ Ե Ր Ո Ի Ն

Ռազմի փողերը թող հընչեն խակույն:

Դավիթը հաղթված ընկել ե մարտում

Յեկ մեծ Մելիքը զընում ե կըռվի...

Հնչում են փողերը

Չ Ա Յ Ն Ե Ր

— Վա՛յ մեր Դավթին...

— Վա՛յ դյուցազնին...

Ջալալն այս պահին մոտեցավ Դավթին,
խրխինջ արձակեց նրա ախանջին,
առավ բերանը, լավ բափահարեց,
յեկ ուժի բերավ դյուցազնի քաշին

Դ Ա Վ Ի Թ

Չեմ մեռնի յերբեք:

Չ Ա Յ Ն Ե Ր

Յնձագին

— Կեցցե՛ք Ջալալին:

— Կեցցե՛ք դյուցազնին:

Կ Ո Ի Յ Ր Ը

Կենդան ե, կենդան, Դավիթը մեր քաջ:

Դ Ա Վ Ի Թ

Հերթը ինձ հասավ, պատրաստվի՛ր, Մելիք:

Մ Ե Լ Ի Ռ

Այո, պայմանով աշղպես ե, Դավիթ:

Դ Ա Վ Ի Թ

Կանգնիր ուրեմն ինձ պես աննշխուն:
Զարկէ՛ք թըմբուկներ անդրանիկ փորձիս:
Ո՛ւ չհասու՜ք բիստոս, ոգնական յեղիր:

Յերբ գնաց-յեկավ իր Թուր Կայծակին շողողաց ողում,
կեղծավոր Ծերունն ընկավ վոսֆի սակ, աղեսաւն արեց

Ծ Ե Ր Ո Ւ Ն

Ո՛ւ քաջըդ Դավիթ, բաշխիր առաջին քո զարկը ուժգին
Մեղիքին ծընող՝ մորը աղերսին:

Դ Ա Վ Ի Թ

Բաշխեցի զարկըս ծեր մոր աղերսին:

Զ Ա Յ Ն Ե Ր Բ Ա Ն Ա Կ Ի Յ

Ինչ մեծ վեհությո՞ւն:

Բ. Զ Ի Ն Վ Ո Ր

Խըղճմբասանք ունի մարդը իր սըրտում:

Ա Խ Թ Ի Ա Ր

Թող աստված ուժին նոր ուժ պարգևի:

Դ Ա Վ Ի Թ

Պատրաստվիր, Մեղիք, իմ յերկրորդ զարկին:

Յերբ գնաց-յեկավ, Բաղին այս անգամ ընկավ վոսֆի սակ

Բ Ա Դ Ի

Ո՛ւ քաջըդ Դավիթ, բաշխիր այս յերկրորդ քո զարկը ուժգին
Մեղիքի քըրոջ—չբէ՛հաղ որիւրդին:

ԳՒՄԱԿԻԹ

Զըքնադ մի քըբող կարող եմ բաշխել իմ զարկը յերկրորդ:

ԿՈՒՅՐԸ

Ի՞նչ արիր, Դավիթ:

ՉԵՐԸ

Ինչո՞ւ բաշխեցիր:

Իջնում եմ սաբից, լեցվում եմ պարակ

ԿՈՒՅՐԸ

Լըսիր ինձ, Դավիթ, քս զերջին զարկը թիղ հասու լինի:

ԳՒՄԱԿԻԹ

Ել լսչ մի մարդու չեմ բախշի յերբորդ հարվածըս վերջին:
Ամուր կաց, Մելիք: Զարկեք թըմբուկներ, ու բախ յեղանակ:
Ո՛ր, հիսուս-քրիստոս, սղնական յեղիր:

Գնաց ու յեկավ, փայլեց կայծակին...

Յեր իջավ Թուր Մելիկի գրվիկ:
սաես հուր ժայթեց վարձի միջից

ՊԱՏԻՐԻ

Մելիքը մեռավ:

ԿՈՒՅՐԸ

Մտիր և, մտիր կանգնած ձեր դիմաց:

ՄԱԿԻԹ

Կենդան եմ դեռ յես:

ԳՒՄԱԿԻԹ

Կենդան: Այդ ինչպե՞ս... Զի՞ կարող լինել:

Ապա մի շարժվիր, թե մեռած չես դեռ:

Յեկ յեր կամեցավ Մելիք շարժվել,
փամ այունի պես նա գետն փովեց





Պ Ա Տ Ր Ի Կ

Արդ՝ ազնաւ և յերկիրը մեր...

Կ Ա Ի Յ Ր Ը

Կեցցե Դավիթը:

Չ Յ Ր Ը

Կեցցե ղյուցաղնը:

Մ Ի Վ Ա Ն Ի Ս Ը

Կեցցե մեր քաջը:

Բ Ա Լ Ա Ր Ը

Կեցցե հալիւթան...

Կ Ա Ի Յ Ր Ը

Թող թըմբուկ զարկեն՝ ուրախ համբավով աշխարհը խընդա...

Սասունցիք ցնծում, խնդում են ուրախ

Գ Ա Ի Ս Ա Ն

Թուրք իջավ, Թուր Կալծակին,
Կալծակ շանթեց Մըսթա յերկրին:
Յերկիրն իրա տեղն ուրովեց,
Մեղիքն ընկավ շունչը փըչեց:

Մ Ի Ռ Ա Մ Ի Կ

Յերկիրն իրա տեղից պոկվեց,
Մեղիքն ընկավ շունչը փըչեց...

Ո Ւ Ր Ի Շ Ռ Ա Մ Ի Կ

Յերկիրն իրա տեղից պոկվեց
Մեղիքն ընկավ միջից կիսովեց...

Բ Ա Լ Ա Ր Ը

Մեղիքն ընկավ միջից կիսովեց...

Դ Ա Վ Ի Թ

Դե, պա՛ր բըռնեցեք, գուք, արդար ալրեր,
Յեվ գո՛ւք, ժըրաջան հարսնե՛ր ու կույսե՛ր:
Յեվ գո՛ւք Մեկի՛քի բարեկամ զորքե՛ր:

Ա Խ Թ Ի Ա Բ

Մի խումբ մարդկանց հետ իջնում ե ծունկի

Արդար ես, արդա՛ր, քան մե՛նք ենք յեղե՛լ:
Խաղաղ մարդ ելինք մեր յերկրում նըստած:
Կին ու յերեխա աշխատում ելինք և համեստ ապրում:
Յեկավ Մեկի՛քը Մըսրա զորքով,
Տիրեց մեր յերկրի՛ն, և արեց ըստրուկ. —
Տվեց մեր ձեռքը և ղե՛նք, և զըրա՛հ,
Վոր զանք կոտորենք ձեր յերկիրն իսպառ:
Այժմ հաղթողը գո՛ւ յես, ո՛վ մեծ քաջ,
Թե կուզե՛ս՝ լինենք ստրուկըդ խոնարհ:

Դ Ա Վ Ի Թ

Յեկեք, զընացեք ձեր յերկիրն արդար,
Հընձեք արտերը՝ վոսկեծիլ հաղած...
Ապրեցեք ձեր սուրբ վաստակով աղնիլ,
Վորպես զըրացի ժողովուրդ ազատ:

Բ Ո Ւ Ռ Բ Ը

Որհնվի բարբառըդ, ո՛վ, քաջ գյուցազուն:

Դ Ա Վ Ի Թ

Իսկ գո՛ւ, ալեհեր Ծերուն սըգավոր,
Մըսրա խալիֆին տեղյակ դարձրու՛ւ,
Վոր մեր յերկիրը ել վտաք չըգնի,
Թե չի ուզում վողջ Մըսրոն ալերվի:

Կ Ո Ւ Յ Բ Ը

Արդար ե մարդը — արդար գյուցազուն:

Բ Ո Ւ Ռ Բ Ը

Ապրի Դավիթը, մեր քաջը հավետ:

Ձ Ա Յ Ն

Ճանապարհ բացեք խանդուտն ե գալիս:

7

Խ Ա Ն Գ Ո Ի Տ

Նաժիւհների հետ հրապարակ ե իջեում

Ներքիւ ինձ, հայրիկ, և դժւ, սիրեկան:
Յես չեյի կարող հեռու քաղաքում հանգիստ շունչ առնել,
Յերբ կյանքդ մարտում հանձնել ես մի մեծ, ահեղ վըտանդի:

Գ Ա Վ Ի Թ

Քո այս վարմունքով պարտական թողի՞ր անզոր մի մարդու:
Յես վռչինչ չունեմ, աղնվազարմ ուրիւրդ,
Վար քո բ արության, և քեզ արժանի հատուցում անեմ:

Պ Ա Տ Բ Ի Կ

Մատանին այստեղ, ինձ մոտ և, Դավիթ:

Գ Ա Վ Ի Թ

Մատանին այդ սո՛ւրբ... Ո՛, տեր արարիչ, թե մեղք եմ գործում,
Պատժի՛ր իմ սիրտը, վոր դերի արեց իմ կամքը անզոր..
Արդ՝ այս մատանին թող հատույց լինի՝ քո վե՛հ վարմունքին:

Պ Ա Տ Բ Ի Կ

Յերդ ու պարերով պատվենք այս զուլդին:

Խ Ա Ն Գ Ո Ի Տ

Քեզ ե պատկանում սիրտըս կուտական,
Այլ և համբույրըս, վոր քո կարոտով իջել ե շուրթիս:

Վ Ե Բ Գ Ո

Գընամ և հայտնեմ Բըզեշխ իշխանին,
Թե ինչպես տըվալ հաբսին մատանի:

Պ Ա Տ Ր Ի Ն

ՄԵԼԻՆ

Շուտ նըժույգ հեծիր, և զորպես մի միտք՝
Ահագ թընիչքով կայսերը հասիր—այստեղ հրավիրիր:

Վ Ե Ր Դ Ո

Յեւ հույժ կարևոր այս լուրն եւ հայտնեմ...

Վազում ե արագ:

Յեճուրյունք վեճ մաղում ե դառնիճ

յեւ խինդ յեւ բերկրանք, սեր ու հաղթություն...

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Յ Ր

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Ա.

ԲԴԵՇԽԻ ՄՈՏ—ՊԱԼԱՏԻԱՌԱԶ

1

Քանի սեպուհներ զրահներ հագած,
հոգեների ծայրին ձեռները բռնած,
դիտում են հեռու, վառ հայեն—սեսնե՞ն՝ քե՛սն է գալիս

Ա. Ս Ե Պ ՈՒ Հ

Հենց նա՛ յե, վոր կա:

Բ. Ս Ե Պ ՈՒ Հ

Զորավարն, արդյոք:

Ա. Ս Ե Պ ՈՒ Հ

Զորավարն, այն: Պատրաստ ենք արդեն՝ ի մի հավաքված:

Գ. Ս Ե Պ ՈՒ Հ

Իսկ Բըղեշիւք մեր ինչո՞ւ յե վախլիկ պալատում մենակ:

Ա. Ս Ե Պ ՈՒ Հ

Իր զուստքը համառ աղերս ե կարդում, վոր կըռիվ չանենք:

Գ. Ս Ե Պ ՈՒ Հ

Հարկավ փեսացուն իբր զեմ ե յեղիկ թըշնամու զորքում:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Ազնիւի բարեկամ, հայտնի բըղեշխին,
Վոր զորավարներն իրենց զորքերով պալատը հասան:

Մ Ե Ա Ը

Իսկույն կը հայտնեմ:
Դուրս ե գնում

2

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Գալիս ե ներս

Վողջոյն, սեպուհներ:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Վողջոյն, զորավար:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Տըկար չե՞, արդյոք, բըղեշխը մեր մեծ:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Վոչ, ազնիւի իշխան: Հայտնեցինք իրան, իսկույն կերևա:

Բ. Ս Ե Պ Ո Ւ Հ

Ինչպէս ե արեն քո յերկրում, իշխան:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Պայծառ առավել, քան կար յերբեն:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Յեւ հընազանդ ե շինականը քո: Յընդումներ չեղան:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Յեւ վոչ մի ցընցում: Վեպեր են հյուսվում Դավիթի մասին
Վորպէս զյուցադնի, — ե ուրիշ վոչինչ:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Յերջանիկ յերկիր:

Բ. Ս Ե Պ Ո Ւ Հ

Ահա Բըղեշխը և որիորդը իր:

Բ Դ Ե Շ Խ

Վողջույն, իմ քաջեր:

Բ Ո Լ Ո Ր Ը

Պատիվ քեզ, Բըղեշխ:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Յեւ լ քեզ, քաջ որիորդ:

Բ Ո Լ Ո Ր Ը

Պատիվ ու հարգանք:

Բ Դ Ե Շ Խ

Ուշացումը մեր մի պատճառ չունի, քան այն, վոր ամեն
Րոպե անհամբեր ըստասում ենք լոկ մի սուբհանդակի,
Վոր մեծ Մելիքից պետք և լուր բերի:
Իմ քաջ աղջիկըս, անցիր դու պալատ:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Վհչ, ազնիվ ծընող, թույլ տուր, վոր լըսեմ:

Բ Դ Ե Շ Խ

Կամակոր աղջիկ: Յեւ այսպես, քաջեր.—
Համաձայն նախկին կընքած պայմանի,
Վորով հընազանդ, հարկատու յենք մենք,
Այլև զինակից Մըսրա խալիֆին,
Այսոր պարտք ունենք հապճեպ հավաքվել,
Դաշնակից զորքին ողնության հասնել:

Աղջկանը

Պալատը անցիր:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ինչո՞ւ յես այդպես խոժոռովել իմ դեմ: Թույլ տուր՝ քեզ լըսեմ:

Ք Պ Ե Շ Խ

Իհարկէ՛ կասեն շաղկերը զօրքում,—
«Յերբ յեղբայրը՝ յեղրտր արշուեն և թափում,
Աստըծս կամքին արհաճ և լինում»:
Բայց յերբ մի՛ վորդի հօրեղբորը իր,
Այլ և խոհակից մեր իշխաններին կալանք և զընում,
Հարկ և, վոր աշղպես ուրացող վորդուն յերկինքը պատմեւ:

Ջ Ո Ր Ա Վ Ա Ր

Այգալես և, հարկավ:

Ք Պ Ե Շ Խ

Արդ՝ մարտի յելնենք աստըծս կամքով:
Թամբել ձերքը...

Հ Ր Ե Ղ Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Կացեր, սվ քաջեր:

Ք Պ Ե Շ Խ

Զայրայքով

Նորից ևս խոսում:

Հ Ր Ե Ղ Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Աղերսում եմ ձեզ, քաջազուն այրեր,—
Դավիթի հանդեպ վսչ մի ջանք չանեք մահացու նետով,
Կամ թրի հարվածով վերջ տալ իր կյանքին:
Հատուկ հըրժաման արձակեք զօրքին, խընդրում եմ յես ձեզ,
Վոր ազնվոն ուղղեն կըսվող թըշնամու հետին շարքերին:
Կարող ե հանկարծ կտրտված մի նեա,
Առանց նըշանի իր տիրոջ կողմից,
Դիպչել Դավիթին և մահ պատճառել:
Հարկավ՝ լավ գիտեք, թե ինչն և կապում ինձ նըրա կյանքին:
Բրճնեցեք նըրան,—ձեռներն ու վստաները յերկաթ շըզթալով
Ամուր կապեցեք, և բերեք ինձ մոտ:

Այն այլը արի, զոր խոսքիս ճըշտիվ ունէլընդիր լինի,
Մեծ պարզե կաննի:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Ապահով յեղիր, մեր ասպետ որիորդ:

3

Բ Գ Ն Ծ Խ

Ահա ըսպասած սուրհանդակը մեր: Ինչո՞ւ ուշացար:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Ներիր, մեծ Բըղեշխ: Կրակոտ նըժույզըս
Վաղքի սուր պահին պայթեց իր միջից և ձորում ընկավ:
Վտաքով եմ վաղել ձորիցը—այստեղ:

Բ Գ Ն Ծ Խ

Ի՞նչ լուր ես բերել:

Հ Ր Ն Ղ Ն Ն Գ Ո Հ Ա Ր

Դե, շուտով պատմիր, հետո՞ շունչ կաննես:

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ա Կ

Ավանդ, որիորդ, փեսացուդ արի մարտի մեջ ընկավ:

Հ Ր Ն Ղ Ն Ն Գ Ո Հ Ա Ր

Կրակը լափե քո լեղուն, ծառա...
Մթթե արվեստի յեկեջք հունի պաշտոնդ տխուր,
Վոր նըման բոթը նըրբահյուս բառով
Հաղորդում անես մի սրտի սիրող...

Բ Գ Ն Ծ Խ

Հանդիստ առ, աղջիկ:

48
x7
x10
x10
x10
x10

Հ Բ Գ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Աստված իմ, աստված... Ել չեմ տեսնելու պատկերն առնական,
Ել չեմ լսելու բարբառը նըրա...

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Հարկավ մեծ ցավ ե, յերբ դուցազըն մի այր,
Թեև թըշնամի—ընկնում ե մարտում:

Ա. Ս Ե Պ Ո Ւ Հ

Ողորմի՜ հոգուն:

Բ Ո Ւ Ո Ր Ը

Ողորմի՜ հոգուն:

ԼՈՐԵՅՈՒՆ

Բ Գ Ե Շ Խ

Թեև հարիքը կիսով հալի մարել,
Մեր յերկրի աղետը առել ե, տարել,—
Բայց դեռ վտանգը իսպառ չի անցել...
Ռամիկի միտքը պըղծել ե դեր...
Ռամիկն իշխանի կըրունկն ե սըղմում...
Պարտք ունենք ստանձնած՝ ճընշել բորբոքված
Ապստամբությունը մեր իսկ ձեռներով...

Ս Ո Ւ Ր Հ Ա Ն Գ Ս Կ

Հենց այդպես ասաց Մըսրա Մելիքը, վոր հայտնեմ յես քեզ:

Հ Բ Գ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ել վոչ մի կըռիվ տեղի ունենալ չի՜ կարող յերբեք:

Բ Գ Ե Շ Խ

Հասկանում ես դու, թե ի՞նչ ես ասում:

Հ Բ Ե Ղ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ձի կարող յերբեք: Ուղղում ես սըղով պարուբ:ված մարդկանց
Մեծ վշտի սկանչին ջընջել աշխարհից...
Կամ զուցե կուզես նահատակ քաջի
Անթըրթիւ սուրբ զին նետերսով խոցել... Վըրե՛ժ Մելիքից...

Բ Գ Ե Շ Խ

Պալատը տարեք:

Ն Ա Ժ Ի Շ Տ

Պալատը դընանք, իշխանադն սրիսրդ:

Հ Բ Ե Ղ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Այլևս պալատ չեմ մտնի յերբեք:

Բ Գ Ե Շ Խ

Ձիերը հեծնել...

Հ Բ Ե Ղ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յես ել եմ զալիս, վոր զին վորոնեմ:
Հէ՛յ, զո՛ւք, ծառաներ, թամբեցեք և իմ, իմ ձին սեահեր:

Բ Գ Ե Շ Խ

Ուշքի յեկ, աղջիկ:

Ա. Ս Ե Պ Ո Ի Հ

Ահա և վերգոն:

Մտնում ե վերգոն

4

Բ Գ Ե Շ Խ

Ի՞նչ լուր, ճարպիկ մարդ: Յեղե՞լ ես անձամբ այն մեծ
մարտի մեջ:

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Հըրսնք և, հըրսնք... Թողեք, վսր նստեմ:

Ր. Գ. Ե. Ծ. Խ.

Դե կարճ բարբստիր:

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Հարսւթյուն առաւ մի անդամ սպանութե Դավիթ Սասունցին:

Հ. Ր. Ե. Գ. Ե. Ծ. Խ. Ո. Հ. Ս. Ր.

Ի՞նչ ասիր, Վերդո, կենդան և զեռ նա:

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Կենդան և, ավանդ...

Ր. Գ. Ե. Ծ. Խ.

Ինչպէս թե կենդան:

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Կենդան և, կենդան: Լըսեցեք, ասեմ.—

Մեղքը յերեք հսկու զարկ տըվեց ասեմի զուրկով...

Հ. Ր. Ե. Գ. Ե. Ծ. Խ. Ո. Հ. Ս. Ր.

Մեղք քեզ, աստված...

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Արեք հանդավ, իմ ազնիւ սրիւրդ,

Յերկիրը տեղից մի քանի անգամ շարժեց, սրբեց,

Յեւ յերբոյր զարկին. Դավիթը ընկաւ...

Հ. Ր. Ե. Գ. Ե. Ծ. Խ. Ո. Հ. Ս. Ր.

Արարի՛չ աստված...

Վ. Ե. Ր. Գ. Ո.

Յընծություն տիրեց զուրքի շարքերում...

Համբարձր խոկույն աշխարհը ցնցեց:
Հընչեցին վաղեւր, դարեկեցին թըմրեւել,
Սմբողջ զարքերը խառնակեցին իրար,
Յեւ հենց այդ պահին—ս, հրեշք, հրեշք...
Իբ ձին խըրխընջաց տիրոջ ախանջին,
Յեւ տերը յեւալ ու կանգնեց վառքի...

Հ Ր Ե Ղ, Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Վոգորմած աստված...

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Դե, պատմիր, պատմիր...

Բ Ո Ւ Ո Ր Ը

Հետո՞ ինչ լեզալ...

Վ, Ե Ր Պ Ո

Եւ լինչը պատմեմ: Հերթը, արդ՝ հասավ ապստամբ Գավթին:

Բ Պ, Ե Շ Խ

Յեւ ինչպե՞ս, դարեկեց:

Վ, Ե Ր Պ Ո

Այնպիսի թափով, վսր մի հարվածից
Մըսրա Մեկիքը խառնակեց սե հողին...

Հ Ր Ե Ղ, Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Մահկանացու Հե, այլ աստված հըզսր:

Բ Պ, Ե Շ Խ

Մեոցրեց Մեկիքին:

Վ, Ե Ր Պ Ո

Մեոցըրեց, իշխան...

Լուսրյուն

Բ Գ Ե Շ Խ

Յեւք, սեպուհներ, և դու, զորավար,
Հանեցեք զենքերն և հանդարտ, անխոս, տըներդ հասեք:
Հետո կուղարկեմ յես ամեն մեկիդ և պատգամ, և լուր,
Թե այսուհետև ի՞նչ պետք և անել:
Այլեր եմ տեսում յերկիրն իմ ծաղկյալ: Դե, զընաք բարով:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Վոդջույն ենք խընդրում, ազնվազարմ իշխան:

Բ Գ Ե Շ Խ

Գնացեք բարով:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Յեվ քեզ, ազնիվ կույս: Դեպքերը վերջին քեզ չա՛տ հուզեցին:

Հ Ր Ե Ղ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Հարգանքըս տարեք ձեր ազնիվ տոհմին:

Բ Ո Ղ, Ո Ր Ը

Մընացեք բարով:

Գնում են

5

Վ, Ե Ր Գ Ո

Այժմ լըսեցեք— հետո ինչ յեղով: Յեվ դո՛ւ, քաջ որիորդ,
Ինչ պետք և ասեմ, առավել չափով քեզ և պատկանում:

Հ Ր Ե Ղ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Պահանջիր ինձնից, ինչ վոր կամենաս, ո՛ր, ազնիվ վերդո,
Յեվ փող, և պարզե, կուզես հողամաս,
Կամ պաշտոն շատ մեծ,— հայրիկը կըտա...

Ո՛ր, վորքան, վորքան բախտավոր մարդ ես, ազնվագուշն իշխան,
Վոր ուրախ լուրիս հեղինակ դարձար:

Վ Ե Ր Գ Ո

Ավանդ, լըսեցեք... Չուղեցի մարդկանց առաջին հանձնեմ
Ինչ վոր պատահեց: Իմ պատմածը վողջ ճիշտ ե և ըստույգ:
Դըրանից հետո, յերբ ամբոխն ուրախ, ցընծաղին կանչով
«Կեցցեք» յեր գոչում դյուցազըն քաջին—Սաթնը յեկավ...

Հ Ի Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Սաթնը... Մարտնում...

Վ Ե Ր Գ Ո

Սաթնը մարտում: Փարվեցին իրար այդ հարսն ու փեսան,
Յեվ այդ պատանին ի ծունըր իջավ, աղոթեց աստծուն,—
Մատանի տըվավ...

Հ Ի Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Մատանի տըվավ... Իրան, դու տեսար... Մատանի տըվավ...
Անեծք ու անեծք այդ հարս ու փեսին...
Տըվավ մատանի... Այդ ի՞նչ մատանի... Յեվ ինչպես տըվավ...
Սաթնը առավ... Վոր մատին հագավ...
Ո՛ր, ինչ հաճույքով այն մատը ձեռքից պոկել կըտայի,
Այնպես ցավաղին, վոր սիրտն արնաքամ իր վերքից հոսեր...

Բ Գ Ե Շ Խ

Հանգարտ, իմ դավակ:

Հ Ի Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յեվ դու սառնասիրտ լըսում ես, հայրիկ:
Հեռ կանչել զորքին... Հէյ, դուք, սեպուհներ, խարված եք,
խարված...

Սարել են և ինձ, ազնվազարմ կույսիս...
Ողնիր ինձ, հայրիկ: Ասա—ի՞նչ անեմ...

Ինչպէս վըրեժըս նըրանից հանեմ:
 Խանդուտը իմ գեմ մըրցակից լինի...
 Ինչո՞ւ յետ գըլխիդ հազել սաղափարտ...
 Արդ՝ պսկում եմ յետ սըրտից սեր, և դու՞:
 Կին չեմ ախուհեա,—սեպտահ վիրավոր,
 Վեր իր վըրեժը լուծելու համար յերգվում ե՛մ մեռնել:

Բ Գ Ե Շ Խ

Հավան եմ խոսքիդ, և այդ յերգումիդ...
 Թող աստված ախտեղ վըկա կանդնի մեղ.—
 Դավիթը մեռնի...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Խաթունը նսւյնպես...

Վ Ե Ր Գ Ո

Իր ամբողջ տոհմով...

Լ Խ Ո Ր Ո Ն

Բ Գ Ե Շ Խ

Դու գեռ սըրտիդ մեջ մի քեն ես ըզգում,
 Վերը սըբողում, ազոտ և դարձնում քո միտքը առողջ...
 Դու գեռ չես տեսնում, թե նենդ Խանդուտի ծընողը զաղիք
 Ինչեր և գալում...

Վ Ե Ր Գ Ո

Զըթողիք ասեմ: Հենց վեր մատանին հաղավ Խաթունը...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ել՝ բնով ե, բնով ե, բնով ե, կաշաղակ:

Վ Ե Ր Գ Ո

Զի՛ թողնում խոսել:

Բ Դ Ե Շ Խ

Թող լըսենք, աղջիկ:

Վ Ե Ր Գ Ո

Հենց վոր մատանին հագաւ խաթունը,
Իբ հայրը դարձաւ մի ժիր տըղայի,
Պատվիրեց զընալ յերկիրը կայսեր...

Բ Դ Ե Շ Խ

Արդէն:

Վ Ե Ր Գ Ո

... Բարեներ տանել, և թախանձալից իր մոտ հրավերել:

Բ Դ Ե Շ Խ

Ո՛, դժոխքն և սերել այդ նենգ իշխանին...
Կուղեյիբ, արդյոք, աղնվազարմ Գոհար, քո հորը տեսնեց
Պատրիկ արքայի ձիու սմբակից արնաքամ ընկած:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Անեծքըս նըրան:

Բ Դ Ե Շ Խ

Կամ զուցե, աղջիկ, կուղեյիբ տեսնել քո հորը ծունկի
Խաթունի առաջ վորպէս սողացող մի ըստբուկ ծառա,
Վորին հատկապէս գարշաճը են հանձնում,
Վոր խոնարհ թափե մոտակա ձորում:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ո՛, հայրիկ, հայրիկ...

Բ Դ Ե Շ Խ

Խանդուտի հայրը այդպէս ել կանի:
Թող մեռնեն նըրանք:

Հ Բ Գ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Տո՛ւր ինձ բազուկըդ:
Դեռ մարտի չե՛լած, Դավիթը յերգվեց,
Վոր յերբ Մելիքին հաղթե ու դառնա,
Պարտք ունի ինձ հետ զոտեմարտ բըռնել:
Յերգվում եմ, հայրիկ, բազուկըս այնքան ամուր կըլինի,
Ինչպես չե յեղած:

Բ Գ Ե Շ Խ

Մի լավ մըտածենք, վոր լավ վորոշենք:

Վ Ե Ր Գ Ո

Թողեք յես խոսեմ: Արդար ես, որիորդ, ե անշուշտ՝ արի,
Յեվ վորպես մարտիկ, խոսք չըկա—աղնիվ:
Բայց արի ու տես,—աստված վնչ անի,—
Հանկարծ Դավիթը հաղթանակ տանի... Հեռո՞, ի՞նչ յեղավ...

Հ Բ Գ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յերբեք չի կարող հաղթանակ տանել:
Ի՞նչ—միթե աստված չարին ե պաշտպան:

Վ Ե Ր Գ Ո

Բայց հանկարծ՝ տարա՞վ... Ուրեմն զրնա
Խաթունի ծոցում իր հանդիստ խըղճով պառկի, շընա՜նո՞...

Հ Բ Գ, Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Անեծք քո լեզվին:

Վ Ե Ր Գ Ո

Նա մեծ ուժ ունի, սիրելի որիորդ:
Յեթե տեսնեյիր այն յերեք դարկը,
Վոր ծանր դուրդով իջավ իր գըլխին,
Քո միտքը արդար մի քիչ կըշարժվեր...
Ներքի ինձ, որիորդ, վոր համեստ խեղճով խառնվում եմ զործիդ:

Մաթուհի հայրը ինձ ել ե տուում,
 Գայսեր գալուստով կարագ չեն քլսի Վերգոյի բերնին:
 Մեռնի խաթուհը, և Դավիթը,—լմի... բայց ինչպես մեռնի...
 Այստեղ և, ահա, վոր փորձված միտքես փոքրում և իրեն:

Ք Պ Ե Շ Խ

Դե, խոսիք, տեսնենք:

Վ Ե Ր Պ Ո

Այո, կըխոսեմ: Համարձակ կասեմ,
 Վոր այդ մարտի մեջ հաղով թե, որիորդ, կարենաս տանել:
 Կտարվես՝ անշուշտ: Պետք և ուրեմըն,
 Ուրիշ ճանապարհ հաղթության համար:
 Դավիթը կըգա—հավատում եմ զբրան,
 Յեվ գալով այստեղ իր տըված խոսքը անշուշտ կըպահե
 Մարտի բըռնվելով: Հավանական է:
 Բայց չե՞ վոր ուրիշ կընոջ և դիպել:
 Բացի այդ մեկը—չե վոր նա մարդ և,
 Յեվ գործած ունի բյուր բազում մեղքեր, ինչպես ամենքուս:
 Հարկ և ուրեմըն հարգել սովորույթ,
 Վոր ունենք վաղուց դյուցազնի համար.—
 Աղաւ պաղ ջրում...

Հ Ր Ե Ղ Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Անշուշտ կըլողա: Չեմ թողնի կեղտոտ նա ինձ ճոտենա:

Վ Ե Ր Պ Ո

Հենց այդ և, վոր կա: Յեվ մինչ նա լողա՞
 Մի թըլի տակից, կամ քաբի կողքից,—
 Գիտեմ անվըրեպ դու աւուր նետ ունես,—
 Կառնես աղեղը՝ վոսկելար ու կոր,
 Յեվ նըշան բըռնած ճիշտ իր թիկունքին,
 Ուր սիրտ ու թոքը իրար են հենված — կըծակես նետով:

Հ Ր Ե Ղ Ե Ն Պ Ո Հ Ա Ր

Տըմարդի՞ք լինեմ...

Վ Ե Ր Գ Ո

Քաղ լիցի, որիորդ: Առյուծը թեթե մի վերք կըստանա,
Քիչ ել արյունը ջրին ներկ կըտա,
Յեւ յերբ ուժասպառ նա վտարի յեկնի,
Գընա և կուգես, մենամարտ արա:

Բ Դ Ե Շ Խ

Սեւորք ես, Վերդո, լալ պարզ և առար...

Վ Ե Ր Գ Ո

Բարի Բըդեշին...

Բ Դ Ե Շ Խ

Սաս... Ել ծըպտուն չանես: Գիտեմ, քո լեզուն յերկար ե մի քիչ
Բայց միաքըդ փակիր այս խելոք զանգում,
Յեւ տուր բանալին հողմերի թեին...
Պարզեղդ առար, թե զործն հաջողի...
Գնանք, իմ աղջիկ, Հըրեղեն Գոհար:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Լինել չար ամարդ և նրա հանդէս...

Բ Դ Ե Շ Խ

Թե կուգես ինքդ հարմար ձե զըտիր:
Նա պետք ե մեռնի, իսկ թե ինչ ձեռլ—ժամանակը կասի:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ս Ր

Յերբեք չեն յեղել մի հայր ու աղջիկ այնպես համերաշխ
Ինչպես վոր մենք ենք:

Բ Դ Ե Շ Խ

Գընանք, սիրելիս, պառկիր ու նընջիր:

Դուրս եմ գնում

Վ Ե Ր Գ Ո

Դավիթը մեռաւ: Գիտեմ Բըղէշխին:
 Յերբ վոր մի բանի հաւան ե կենում, աստված վնչ անի,
 Աղատում չըլա... Այս գործում յես շատ խորքերը մըտա...
 Բըղէշխի սանձը ձեռքիցըս չեմ տա...
 Առատ սլարդէի խոստում ել առա...
 Չէ, կըզմ նորից մի նժը, մեծ խալիֆ...
 Քաղաքը անտեր, հարկաւ, չեն թողնի,
 Յերբ մեռնի գոռոզ Պատրիկը անարգ:
 Մ...ս... Կամաց, ով Վերգո...
 «Փակիր քո միտքը այս խելոք գանգում,
 Յե՛վ տուր բանալին հողմերի թւին...»
 Խելոք ե Բղէշխը... Նա շատ ե խելոք...

Բ

ՀԱՊԱՂՋՈՒՐ ԳԵՏԸ, ՎՈՐԻ ՄԻ ԱՓԻՆ ՄՇԵՐՆ Ե ՀԱՆԳՁՈՒՄ

Ճ

Բագում ռամիկներ յե՛վ Դավիթը մեր գնում են կովի

Ծ Ե Ր Ը

Հասանք Մըհերի սուրբ գերեզմանին:

Կ Ո Ւ Յ Ը

Սուրբ գերեզմանը դյուցազն Մըհերի:

Բոլոր մեկտեղ ծուկի յեն իջնում յե՛վ նորից յելնում

Քեզպես ե, Դավիթ, մեր սլապերը հին վաղուց են սլատմել—
 Էայսեր գալուստով վսշինչ չի փոխվի:

Ծ Ե Ր Ը

Ի՞նչ պիտի փոխվի: Մականը նըրա
Ոձված հավատքով քաղքեղունական:
Ճանաչ ենք նըրա բնույթին վաղուց:

Կ Ա Ի Յ Բ Ը

Քո աներոջ պես իշխանը հիմա
Սահմանն իր յերկրի խոնարհ բացել և կայսրրի առաջ:

Դ Ա Վ Ի Թ

Հասկացա, այրեր: Արդար ձեր միտքը կռահում եմ հիմա:
Սարեց աներըս... Սարեց չարաչար...
Ռամիկը—ասաց—կապրի միշտ ազատ,
Յեթե Մելիքը վերանա խալառ:
Բայց ինչո՞ւ, ասեք, Մըհեբն իմաստուն կայսերն և հառել:
Մեթե իր ուրոք կայսրը ձեզ հետ բարի յի յեղել:


Կ Ա Ի Յ Բ Ը


Բարի չի յեղել կայսրը յերեք,
Այլ հույժ խորամանկ, հա՛, հա՛... և չար, և նախանձ...
Մեր չքնաղ յերկրին տիրելու համար
Ռազմագետ մարդկանց խոստումով առատ իր մոտ եր կանչում:
Կամ կալանք դնում, կամ կյանքից զրկում,
Յեւ կամ հեռավոր ավազուտ յերկիր քսոք ուղարկում,
Վոր դա, հեշտ տիրե, քանդե, կոթմանե: Նդպես եր լինում...
Հայրըդ խելոք եր: Նա չի շըլացել կայսեր խոստումով
Յեւ չի խոնարհվել Պատրիկի նըման:
Միայն ուզում եր առևտրի մարդկանց դոհացում անել:
Պատրիկը հողով ստրուկ և ծնված, իմացիք, Դավիթ:
Նա վո՞չ Մհեր և, և վո՞չ ել ուսմիկ մարդկանց և պաշտպան:
Թաղով շըլացած ծախում և կայսրին մեր յերկիրն առատ:
Ծախում և, հա՛, հա՛:

Դ Ա Վ Ի Թ

Անարժան մի մարդ, և այն ել՝ իշխան:

7





Ծ Ե Ր Ը

Իսկ դու մի՛ թողնիր, Դավիթ քաջազուն,
Պատրիկին անել, ինչ ինքն ե ուզում:
Բյուր համար ռամիկ պաշտպան են ձործիդ,
Սընում են բաղուկըդ և քեզ ուժ տալիս...
Մեղնով ես դու մեծ, մեղնով ես արի:
Թե քո սուրհանդակն ունայն պատասխան բերե հարցումիդ,
Տանք մեզ քաղաքը սրբազան կովի:

Պ Ա Վ Ի Թ

Բարի յեղբայրներ, ինձ մենակ թողեք, վոր ինքս դատեմ:
Յերբ իմ ուղարկած սուրհանդակը դա—ինձ իմաց արեք:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Գընանք մեր ճամբով, աղնիվ ռամիկներ,
Թողնենք Դավիթը խորհի իր հոր հետ:
Բայց ըզզույշ, Դավիթ, որերը չար են, մարդիկ ել՝ անխիղճ...
Մըսրա զորքերը եսոր թե վաղը, կհասնեն այստեղ,
Իսկ մենք քաղաքում անելիք ունենք...

2

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Սուրհանդակն յեկավ:

Պ Ա Վ Ի Թ

Ի՞նչ լուր ես բերել:

Բ. Պ Ա Տ Ա Ն Ի

Քաղաքում մարդիկ զինված են, պատրաստ:
Իշխան աներըդ պատգամավոր ե ուղարկել քեզ մոտ:

Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ս Ե Պ Ո Ւ Հ

Վողջույն Դավիթին:

Կ Ո Ւ Յ Ր Ը

Առանց վողջույնի քո խոսքն առա, հն:

Գ Յ. Ղ Ա. Գ Ա. Յ Ի Ս Ե Պ Ո Ի Հ

Իշխան-իշխանաց՝ քո աները քաջ,
Վողջուէյն ե մաղթում իր ռազմիկ փեսին,
Յեւ խընդրում իսկուէյն զօրքերըդ պահել,
Յեւ յեղբայրասպան կռվից խուսափել...

Դ Ա. Վ. Ի Թ.

Իմ խնդրին արդար պատասխան տվեց:

Գ Յ. Ղ Ա. Գ Ա. Յ Ի Ս Ե Պ Ո Ի Հ

Կայսեր զօրքերը մոտ են սահմանին,
Յեւ մեր անասիկ բերդաքաղաքը զաշնակից նըրանց:
Զուր են ջանքերըդ, ռազմաշունչ Դավիթ:
Աներըդ աղնիւ...

Դ Ա. Վ. Ի Թ.

Առնել Սեպուհին ե պահել զերի...
Թող իմ աները քաղաքում ճգնի... Գնում ենք կռվի:

Գ Յ. Ղ Ա. Գ Ա. Յ Ի Ս Ե Պ Ո Ի Հ

Անորեն արարք ռազմիկ մարդկանց մեջ...

Կ Ո Ի Յ Բ Ը

Որենքը մերն ե, քանի զենք ունենք: Գընանք, քաջ սեպուհ:

Բ Ո Լ Ո Բ Ը

Գընանք, քաջ սեպուհ:

Դ Ա. Վ. Ի Թ.

Աներ չե՛ նա ինձ, ե վոչ ել պատը ծնվող իմ վարդուն,
Այլ խարդախ մի մարդ...

Ծ Ե Բ Ը

Յեւ զարմով իշխան... Նղպես ե, եղպես: Դե, զնանք, սեպուհ:

Դ Ա Վ Ի Թ

Գայեցեք խսկույն դեպի քաղաքը, ազգիկ աամիկներ:
Իմ հուր Զալալի թեքերն նըստած կհասնեմ արագ:
Բարի ճանապարհ:

Գնում եմ բոլոր

3

Դ Ա Վ Ի Թ

Կայսեր զորքերը մոտ են քաղաքին,
Իսկ Մսրբա մարզիկ՝ պատրաստ մեծ կըռվի... Ոգնիր ինձ, աստված:
Խոր ակնածությամբ գալիս ե չոփում գեղեզմանի մոտ

Ներիր ինձ, ծնող, արծվածին ազգիկ, ով մեծ դյուցազուն:
Դո տըված ուխտը դավով շաղախվեց իմ կյանքի ճամբին:
Ներիր, վոր ուխտըդ անկատար թողի:
Ինչո՞ւ ուխտեցիր մի տըղի համար, վոր դեռ արգանդում
Հարազատ իր մոր չեղ ատել ըսկիզբն իր կյանքի թելի:
Կամ յերբ սերեցիր, ինչո՞ւ չըտըվիր մեծ իմաստուն թյուն,
Վոր աշխարհ գալով կարենար դատել զործերն աշխարհի,
Որենքը մարդկանց, և ժառանգ թողած քո Թուր Կայծակով
Հաստատուն, արդար մի կյանք սահմաններ քո ծաղկյալ յերկրում:
Նրա համար, արդյոք, ծընեցիր դու ինձ,
Վոր հաղթեմ հըղոր չար բռնակալին
Յեվ հենց դըրանով ճանապարհ բանամ
Մի այլ բըռնակալ, նոր մարդու համար:
Յեվ վո՞րն և չարը մեր յերկրի զլիսին.—
Արդյոք, խալիֆը, թե՞ կայսրը ոտար,
Թե՞ իշխանները՝ խոով իրար հետ՝
Հարում են վոմանք Մսրբա խալիֆին,
Վոմանք ել կայսեր առաջ խոնարհվում...
Գուցե հայր սուրբը, վոր խաբեց հողիս աղոթքիս պահին...
Ել ո՞վ և մոռում, վոր արդար լինի:
Գեղջուկ աամիկիլ... Թերեկս այն...
Ինչո՞ւ հայր աստված այդ արդար մարդկանց
Չի տվել մի թագ, կամ իշխանություն,
Վոր իրենց բախտը իրենք սահմանեն,
Յեվ չարն արմատից բըրեն ու պոկեն:

Ինչո՞ւ և Կույրը դիջում Վերդոյին,
Կամ նանին պառավ — Ոհան իշխանին,
Վոր մեկին «ըստբուհ», իսկ մյուսին «իշխան»
Կոչումն էս տրվել, արարիչ աստված:
Վճրն և ճշմարտն աշխարհի համար...
Իսկ յես ի՞նչ անեմ... Վճրն և իմ ուղին,
Պատասխան տուր, հայր

Աստված կամեցավ, վոր հնազանդ վարդիդ սերե մի մանուկ,
Յեւ մոր արգանդում մի հուր հրեղեն աճում և արդեն:
Նա քո թոռն է: Թե արու լինի, և արի, արդար,
Թող պըստիկ Մըհեր անունը կըրի:
Թող վոր, ուրեմըն Մըհերը, Պըստիկ,
Յեւ հետո նորից՝ մի Մըհեր յերբորդ, և հետո՝ Դավիթ,
Ելի մի Մըհեր, և նրանց ժառանգներն
Խոովեն չար մարդկանց որենքը դաժան,
Մինչ հասնի որը, յերբ հըղիանա
Մի արդար աշխարհ ծընող Սուրբ Մայրը՝
Յերբ բռնությունը իսպառ վերանա,
Յեւ թուր Կայծակին ել պետք չըլինի...

Յեկեւ եմ, ո՞վ հայր, արդար շիբիմիդ իմ խոտքը ասեմ
Յեւ զընամ մի հոր, վոր յերկրորդ պապն և քո թոռ Մըհերի,
Արարքը պատժեմ... Նա խարեց վորդուդ,
Յեւ սատանայից մի միտք փոխ առած,
Խընճույք և սարքել կայսրի համար...
Բայց քանի յես կամ կայսրը չի տեսնի Սասունը յերբեք:
Մի պարտք ել ունեմ Գոհարի հանդեպ...
Վորպես արդար այր — պետք և հատուցել...

4

Վ Ե Ր Գ Ո

Կանչում ե դստից

Դավիթ, հէյ, Դավիթ...

Գ Ա Վ Ի Թ

Կարծեմ, վոր յեկան... Այստեղ եմ, այստեղ:
Ինչո՞ւ տըխրեցիր, հարազատ նըժույգ:
Դե՛ զընա, Զալալ, սանձըդ արձակիր, իմ յերկրի ազնիւ
Խոտերից ջոկիր, կեր ու խում աբա, կանչիս ականջ դիր:

Զալալը սխուր, իր սանձը արձակ
անցնում ե քալոյա լանջերը սարի

Վ Ե Ր Գ Ո

Ահա Դավիթը, զահեբեց իշխան,
Ճիշտ ժամին յեկել, կեցել ե այստեղ: Բաբե, քաջազուն:
Թող աստված բազկիդ կըբլնակի ուշո՛ տա: Ահա Գոհարը՝
Բըդեշխ իր հոր հետ իջնում են սարից...

Գ Ա Վ Ի Թ

Վողջույն, զահեբեց: Վողջույն քեզ, որիորդ:

Վ Ե Ր Գ Ո

Ահա ե գետը, փըրփրահույզ մըբրիկ...
Յե՛ս եմ լոկ վրկան ձեր գոտեմարտի:
Մինչ դու կըլողաս, մեղքերըդ մաքրես,
Գոհարն ել ամուր գոտին կկապի—վորպես կողմնակի
Անաչառ մի մարդ, յես նըշան կըտամ ձեր գոտեմարտին:
Յե՛վ արդյունքը նրա իմ արդար վըճռով
Հաղորդում կանեմ արար աշխարհին...
Դու արի յեղիր, Դավիթ հարազատ,
Յե՛վ լավ իմացիր, վոր բազուկդ ամուր:
Անասանան թանգ ե վերդոյի համար:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ե՛, բավ ե, վերդո՛, լեզուդ քո մըտքին հարմար չի՛ գալիս:

Գ Ա Վ Ի Թ

Բարի յե վերդոն, յես այդ լավ գիտեմ:
Նա քիչ վախկոտ ե,—ներիք բաբեկամ,—բայց կատակասեր:

Մի փոքր ժըլատ, բայց վնչ շատ աղահ,
Յեւ չուլ զործունյա, ու քիչ ոգտակար,
Բայց հիմքում բարի, շատ բարի մարդ ե:
Յես միշտ սիրել եմ իր անձը ազնիւ,
Ինքը այդ, հարկավ, լավ ե նրկատել:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Միամիտ հողի... Արդ՝ անցնենք զործի:

Գ Ա Վ Ի Թ

Յեկել եմ՝ խընդրեմ, աղաչեմ, որիորդ,
Վոր իրար տըլած մեր խոստումն անմիտ՝ զրժենք յերկուստեք:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Յերբեք, վնչ, յերբեք:

Բ Գ Ե Շ Խ

Իր տըլած խոսքը զյուցազըն մի այր յերբեք չի զըրժում:

Գ Ա Վ Ի Թ

Համառ ես, որիորդ: Կուղեյի սըրտով,
Վոր դու ինձ հաղթես զոհացման համար:
Բայց հենց զըրանով կողպեք կըղընես յերեք կյանքերի,
Վորոնց յերկուսը դեռ նոր են խընդում,
Իսկ մեկը հաղիւ իր մօր արգանդում նոր շունչ ե տռնում:

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Այդ հիւ ե իր մօր արգանդում ծնւում:

Գ Ա Վ Ի Թ

Ինձնից ե սերված, իր մօր արգանդում...

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ո՛ր, զըրժութք, զըրժութք... Ինչհիւ յես համառ
Բորբոքում իմ մեջ մի հանգչող կըբաղ...

Դէ, զընա, Դավիթ, զընա այն փըրփուր հորձանքը մըտիւր,
Մաքրիւր մարմինըդ, մաքրիւր և հոգիդ, և մարտի պատրաստ՝
Դիմացըս կանգնիր:

Դ Ա Վ Ի Թ

Արդ՝ ներիւր, որիօրդ, չեյի կամենում
Վերավոր սըրտիդ մի վերք ել հասցնել...
Դընամ, լողանամ, և դիմացդ յեւած գոտեմարտ կանեմ:
Քայց յեթե հաղթվես, թող սըրտիդ վոխը դըրնով ել անցնի...

Քայլում ե դեպի գետը խռովանույզ

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Վորպես մի առյուծ վեհանձն ու բարի, և անգետ բախտին,
Քայլում ե դեպ մահ... դեպ մահը դաժան...

Վ Ե Ր Գ Ո

Ահա աղեղը վռսկելար ու պիւրկ,
Ահա և նեար՝ կըրկնակի թռնոտ...

Դ Ա Վ Ի Թ

Խըռով ե ջուրը աշնան հեղեղից...
Հոսում ե խըռով իմ յերկրի միջից...
Փըրփուրը ձիուս բաշին ե նըման,
Յերբ մարտի դաշտում սուրում ե արագ...
Ժամ ե... Լողանամ... Ո՛վ, հիսուս-քրիստոս, ոգնական յեղիր...

Ասով ու ցեեց մարմինը իւ մերկ փրփուրի ծոցը,
ասես բռնգե ահադին զանգված

5

Վ Ե Ր Գ Ո

Շահտ, նըշան բռնիր, ահա, իր մեջքին... իր գոտուց բարձր...
Հենց այն թուլ մասին, ուր թոք ու սիրտը միմյանց միանում,
Յեվ զարկ են տալիս կյանքի կենտրոնին...

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Թող քիչ մըտածեմ...

Բ Գ Ե Շ Խ

Եւ լինչ մըտածես...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ռ Հ Ա Ր

Թողեք, հրեշներ... Արարելչ աստված,
Պոկիր իմ զըլխից միտքն այս դավադիր...

Վ Ե Ր Գ Ռ

Դե, արահ, արահ...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ռ Հ Ա Ր

Պոկիր իմ սըրտից արնածին քենը...

Բ Գ Ե Շ Խ

Դե, շարժվիր, Գոհար:

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ռ Հ Ա Ր

Պոկիր իմ կյանքից բիծն այս սեաթույր:

Վ Ե Ր Գ Ռ

Ահա կանգնել ե, և հարմար տեղում. լարիր քո նետը...

Բ Գ Ե Շ Խ

Մի դողար, աղջիկ... Միթե քո սիրտը դավաճան յեղամ
Հարազատ հոր դեմ...

Վ Ե Ր Գ Ռ

... Յեւ բյուրեղ պատվիր, աղնվաղարմ սրխորդ...

Բ Գ Ե Շ Խ

Դե, լարիր նետը...

Վ Ե Ր Գ Ռ

Լարիր, շուտ, լարիր, թե չե՝ յեկնում ե...

8





Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ռ Հ Ա Ր

Կարենք, չըբացենք, վազիններ զուգ չար:
Իմ միտքը պարզվեց, և սիրտըս հուշնայեա...
Աստված զթառատ իմ հոգին մաքրեց...
Այսպիսի մարդուն թիկունքից խրվեմ... Ո՛ր, վնչ, և յերբեք...
Նա պետք և ապրի... Նա պետք և ապրի, ինչպես ապրում և
Արծիվը հըզար ամպերից բարձր:

Բ Գ Ե Շ Խ

Ա՛ն հեռք, վերդո:

Վ Ե Ր Գ Ռ

Դադար մ և ձեռքը... Տնւր ինձ աղկը և նեար թունտ...

Բ Գ Ե Շ Խ

Դե, լարիւր շուտով... Այդպէս... ճիշտ այդպէս...
Հենց քո ցույց տրված ճիշտ կյանքի թելին...

Հ Բ Ե Ղ Ե Ն Գ Ռ Հ Ա Ր

Արարիչ աստված, այս լինչ են անում...
Թողեք աղկը... Հեռ ասուր իմ հեռք...

Վ Ե Ր Գ Ռ

Սրձակեց նեք

Ճիշտ իր թիկունքին...

Գ Ա Վ Ի Թ

Գրով

Ջալմի, հեյ, Ջալմի...

Վ Ե Ր Գ Ռ

Մեռավ իր տեղում...

Բ Գ Ե Շ Խ

Ալիքը գարկեց ափի ժայռերին...

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ասես խելագար

Հեռ տուր աղեղըս...

Վ Ե Ր Գ Ո

Վերցըրու հիմա...

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Դե կնց. մարդասպան... Մի նեռ ել ունեմ նուշնպես թուշափոր...

Վ Ե Ր Գ Ո

Ոգնիր ինձ, Բրդեշխ, Բըղեշխ ազնվազարմ...

Ոգնեցեք, մարդիկ... սգնեցեք, ալրեք...

Փախչում ե

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Արձակեց նեք

Հենց նուշն թուշնից եր, վոր դու յեռ արվիկ...

Բ Գ Ե Շ Խ

Մեռավ Դավիթը... Յերջանիկ Գոհար, մի նըժույզ նըստիր

Հեխեզեզընա և Մըսրը հասիր,

Վոզջուշն տուր խոնարհ Մըսրա խալիֆին, մեկ մոտ հրավիրիր...

Այլև արձակիր Ոհան ու Թորոս իշխան տերերին,

Հավաքիր զորքը և քաղաք մըտիր,

Արդ՝ քոնն և քաղաքն այս սրից հեթ...

Մեռավ Դավիթը...

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Դավիթը մեռավ,— հըրեղեն տըղան...

Մի հուր պատանի... Մի մեծ դյուեղազոհ...

Մեռավ անարժան սև մարդկանց ձեռքից:

Ջալալին հասավ Դավրի սուր ձայնը,

յեվ խրխինջ բռնեց սեզ, սուր սարերին:

Արձագանգները այդ գույժ խրխինջի

զնացին նաան մութ-մութ խրհիթներ,
արեեր ու դաշեր, զեղածիլ լաճեր,
յեւ վողջ սասուցիւմ, մի մարդու նման գետափը յեկան.
խառնվեցին իրար. ինչպես մի նորձանկ,
ասես անուելի մի գետ ել սրանկ—

6

Կ Ա Ի Յ Բ Ը

Ի՞նչ յեղավ Դավիթին...

Ծ Ե Բ Ը

Ինչո՞ւ յի իր ձին սարերը բնկել...

Ա. Պ Ա Տ Ա Ն Ի

Ինչո՞ւ յի պինդպես զիլ խրխիշն հանում...

Կ Ա Ի Յ Բ Ը

Ո՞ւր է Դավիթը...

Ծ Ե Բ Ը

Ասացեր շուտով, ո՞ւր է Դավիթը...

Հորձանքը մարդկանց յեկավ, սարածվեց, գետափը ծածկեց

Բ Պ Ե Շ Խ

Լքուեր, սամիկհեր,—

Մի գաղեր մարդու գավաղեր հետից
Մեռավ Դավիթը— մեր քաջ գյուցաղը...

Իմ դուստրը, ահա, իր արդար ձեռքով

Խուսափող հարին պատիժը տրվեց...

Նախեցեր, տեսեր, հենդամիտ վերգոն ժայռի բարձունքից

Գլուխն ի վար կըծկված ֆնացել է կախված,

Ասես, մի մտկես, վոր փորսող վազում իր բունն է շառաղում:

Ահա է հրածին գյուցաղը մեր քաջ Դավիթը անմահ

Մ'աքուր փրփուրի հորձանքի ծոցում
Նընջում ե հաճիցես, ինչպես մի աստված...

Սղփեց բոլոր մարդկանց սրերը արգար...
Ակունքն արցունքի սառույցով պսակեց,
յեկ լուս մնացին մի պան փառացած

Կ Ո Ւ Յ Ր Ը

Յերևի մի դավ, վեր իշխան մարդիկ սարքել են նսրից...
Անեճք ու անեճք... Բյուր հաղար անեճք գավաղիր նետին...
Անեճք ու անեճք՝ Ոհան իշխանին...
Բյուր հաղար անեճք՝ Բըղեշի տաղին...
Անեճք Վերդույին, և նենդ Պատրիկին...
Թորոս իշխանին, նրբանց սերունդին...
Բյուր հաղար անեճք իշխանաց ցեղին... Անեճք, հո, հո, հո...
Կորավ Դավիթը՝ զյուշաղբն արգան, մի անմահ սողմիկ...

Գ Ո Ւ Ս Ա Ն

Կտրեցին, ալմոզ, մեր սիրտն ու հողին, մեր ձեռքը արվին,
Նեռեցին ալմոզ, մեզ ահեղաստատ հողմերի թափին:

Ծ Ե Ր Ը

Դե, գնանք, առնենք փրփուր Դավիթին փրփուրի միջից,
Յեկ զընանք կրավի, ինչպես վեր ինքը՝ հըրաման արվեց:

Բյուրավոր մարդիկ հանեցին Դավրին փրփուրի միջից
առան ձեռներին ու բարձր լուսած ճարձվեցին առաջ

Հ Ր Ե Ղ Ե Ն Գ Ո Հ Ա Ր

Ասես խելագար

Ահա թե ով ե այդ կյանքը կարճել.—
Բըղեշի իմ հայրը—դատեցեր հըրտն:

Կեցավ ամբոխը փառացած ու լուս

Կ Ո Ւ Յ Ր Ը

Ինչպես կարեցար ախպրիսի մարդու
Լուսաշող կյանքին նենդուրեն գավել, նենդամիտ գողան:
Տեսնե՞մ ես ինչպես բյուրավոր մարդիկ—սամիկ, թե զեղջուկ,

Յեւ կին, և տղերք, աղէներ ծերեր, մանկահաս տղերք,
Ասես մի հողի, մի կուռ սիրտ դարձած
Իր մեծ գավակին իր գլխին պահած
Զայլուելի տեղում կեցել և այստեղ:
Զորքեր իր առաջ...

Բղեխը չոհում և

Ե Ո Ւ Յ Ր Ը

Ամբոխին

Անցիր վերայից:

Յեւ այսպես շարժւոյն անոնի մի բուրգ,
անբխի արեւից ձուլված մի զանգված
Բղեխի վրայով հայտն, համարձակ
ժողով և Դավթին համահայլ, զանգաղ,
ու բարձր պահում դուցազնին վրիժուր,
դուցազնին մեր սուրբ

Վ ա ռ ա գ ու յ Ր

Վ Ե Ր Զ



Պատ. խմբագիր՝ Գ. Ս ե դ ր ա կ յ ա ն
Տեխ. խմբագիր Ստ. Ա, ի ռ ու յ ա ն
Սրբազրիչ՝ Գ ա ր. Հ ա կ ո թ յ ա ն
Կոնտր. սրբագրիչ՝ Ս. Շ ա հ բ ա զ յ ա ն

Քլավիլիտի լիազոր՝ Ա.—3098 Հրատ. № 3511

Պատվեր 17. Տիրած 5000.

Թուղթ 62×94. Տպագր. 14¹/₂ մամ.

Մեկ տպ. մամ. 38400 նշան.

Հանձնված է արտագրության 2-ին հունվարի 1938 թ.

Ստորագրված է տպագրության համար՝ 10-ին հունիսի 1938 թ.

9/17
8-50

ՀԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0026172

11
3965